



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2603

342.2

8-15

9-p.

329.141

6-17

«Թ Ա Ռ Ա Զ Ե Լ ի պրադարձն»

Nº 37

2603

Ա. ՇԱԽԱԹՈՒԻՆԵԱՆ

05 FEB 2007

ԳԵՐԱԿԱՆԻՑ

6

ԴԵՄՈԿՐԱՏԻԱԾ

六
卷之三

የኢ.ፌ.ዲ.፲፻፱፭

Ա. ՇԱԽԱԹՈՒԻՆԵԱՆ300
1530-ՆԱ342.2
Հ - 15

ՓԵԹՔՐԱԾԻՉԾ

1942*b h*

ԴԵՄՈԿՐԱՏԻՉԾ

ՏհՓԼհՍ

1907

2603



35.078

12 JUL 2013

b p q n h l u o v f

Հ. Յ. Պաշնակցութիւնը կողմասեան գործառնէութեան իւր նախագծի մէջ առաջադրել է ուսում «պահանջների թւում ապա-կենտրոն ղեծօկրատիա», դաշնակցական (ֆէքէրտուիլ) պետու-թեան ձևով, թէ ամբողջ Խորսոսանի և թէ Կամկատի համար:

Ճնորհիւ այն հանգամանքի, որ մեզ գրականութիւնը համարեա
բոլորդին զորիկ է եղել քաղաքական հարցերի լուսաբանութիւնն
նւիրւած գրւածքներից և մանաւանդ չնորհիւ այդ հարցերի լեզա-
փախութիւնն ճետ զուգընթաց տրագութեամբ երեսն զալուն—
այնպիսի քաղաքական կաթէգորիաներ, ինչպէս են՝ ապակենարօ-
նացումը, Փեղերալիզմը, ինքնավարութիւնը և այլն, մնացել են
հասարակութիւնն լոյն խաւերի համար սպառուած:

Սպակիւնտրօնացման թէ կողմանկիցները և թէ հակառակորդները յաճախ արտայայտում են իրենց նիթի վերաբերմամբ կուսալան անմիղութեան հասցրուծ ազիտութիւն, որը գուցէ ցաւակցութեան արժանի անհատական չափիք լինէր միայն, եթէ չազդէր հասարակութեան ընթերցուր, հետաքրքրուող խաւերի վրայ և շամապնդէր նրանց մէջ բանալ, մակերսովթային վերաբերմունք դէպի սյալիսի տուաջնակարգ քաղաքական խնդիրներու:

Այս փոքրիկ ուսումնասիրութեամբ ես կուզէի տրամադրութեացնել՝ զբաղւելու հարցով ըստ էռութեամն, առանձապէս, ծանօթացնելով պիտական ձեերի տարբերութիւննրին, ու ոչ թէ ուղղակի դիմելու ծրագրային մերկ կէտերին, առանց խմնական հասկացողութիւնները պարզեյու:

Վիճաբանութիւնները կենարոնացման և տպակենարոնացման
երաբերմամբ կարսդ են օպտակար լինել միայն այն դէպքում, եթէ
ինելի սուարկաների էութիւնը, —ներկալ դէպքում զանապան պետա-
նի ձեւերի ստրուկտուրան, կազմակերպութիւնը —վիճողների համար
արգւած կլինի. չնայած, որ այդ համացողութիւնները պարզեց-
ումար կարելի է պետական իրաւունքին վերաբերող ամեն մի սովո-

ТИФЛИСЪ

Электропеч. А М. Тарумова, Угл. Барои и Б.-Ванк. № 2.

1907

արկան գրքում նիւթեր գտնել, և բօպական զանազան սահմանադրութիւններից օգտել, բայց և այնպէս այդ նեղութիւնը կրել չեն ցանկացել մամուլը զբաղեցնող և ամբխօն բարձրացող հրապարակախօսները։ Ուստի փոխանակ անմիջապէս զբաղւելու պետական ձևերի գնահատութեամբ գեմօկրատիայի տեսակետից, ես այսեղ հարկադրւած եմ երկար կանգ առնել այնպիսի հանրածանօթ գաղափարների վրայ, ինչպէս ռունիա», պետութիւնների դաշնակցութիւնը և այլն.

Վերջապէս, պէտք է նախազգուշացնեմ, որ իմ նախատակից գուրս է եղել, տալ իմ պաշտպանած պետական կազմի գործնական կիրառման մանրամասն բացատրութիւնները, խօսել Ուստաստանում և Կովկասում ապակենտրոնացած հանրապետութիւն հաստատելու կօնկրետ ձևերի մասին։ Ես ցանկացել և աշխատել եմ տալ տարրական հասկացողութիւն՝ ապակենտրոնացման և ֆէուրացիայի, սրանց սարուկութայի (կառուցւածքի) և զարգացման մասին և աշխատել եմ գնահատել այս քաղաքական իրաւաբանական կաթէզորիանները գեմօկրատիզմի մասշտաբով։

Ա. Շ.

Ն Ե Բ Ը Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամբողջ սօցիալիստական միջազգային բանակը պետութեան սկզբունքի վերաբերմամբ բաժանւում է երկու անհաւասար մասերի. անարխիստ-կոմմունիստների և աւտորիստար սօցիալիստների։ Առաջինները բացասում են պետութիւնը, համարելով այն բարոր չարիքների արմատ, և ոչ միայն ներկայ դաստիարակային պետութիւնը, այլ ընդհանրապէս, պետութիւնը իւր էութեամբ, այսինքն ժխտում են հասարակական (նոյնիսկ սօցիալիստական) հարկադրիչ, ենթարկող և կազմակերպող ոյժի անհրաժեշտութիւնը։ Ըստ անարխիստների՝ հասարակութիւնը պէտք է բաղկացած լինի մանր, միմեանցից անկախ և կամաւոր յարաբերութիւնների մէջ գտնւող համայնքներից, որոնց ներքին կեանքում ել չի լինելու ոչ մի իշխանութիւն, բացի անհատական ազատ կամքից և ցանկութիւնից։

Սօցիալիստների մեծամանութիւնը բացասում է ոչ թէ պետութեան սկզբունքը-այլ ներկոյ դաստիարակային, բուրժուատկան պետութիւնը, երբ հասարակական հաշկաղող ոյժը արտայայտում է ոչ թէ հասարակութեան մեծամանութիւնը կամքը, այլ՝ գտնելով իշխող վոքրամասնութեան ձեռքին, գործադրում է նրա դաստիարակային շահների պաշտպանութեան համար։ Իսկ պետութիւնը, իբրև կազմակերպող և ենթարկող ոյժ՝ բղխում է հենց հասարակական կեանքի էութիւնից, հետեւպէս սօցիալիստական հասարակութեան մէջ էլ նա իւր գոյութիւնը կպահպանի, ինարկէ, բոլորովին տարբեր արտայայտութիւններով։

Բայց ապագայ սօցիալիստական հանրապետութեան կազմի մասին սօցիալիստների շարքում էլ տարածայնութիւններ կան։ Արգեօք ամբողջ պետութիւն բռնող սօցիալիստական համայնք է լինելու, կենտրոնացած կազմակերպութեամբ՝ արդիւնագործութեան, փոխանակութեան և բաշխման աշխարհում, թէ առաջ հն գալու զանազան սօցիալիստական համայնքներ՝ կապւած միմեանց հետ ֆէուրատիվ՝ դաշնակցական կապերով։ Այս հարցը չափազանց թէական, պրօլեմատիկ բնաւորութիւն ունի, բանի որ ներկայ սեփականատիւական կարգերը բաւարար չափով նիւթ չեն տալիս սօցիալիստա-

կան կեանքի այդ կողմը պարզերու համար: Բայց թւում է, թէ երկրորդ պատկերը աւելի բէալիստական է, քանի որ աւելի պակաս բարգութիւն է պահանջում սօցիալիստական հանրութեառ մեխանիզմի համար:

Այս հարցը այսուեղ մեզ չէ հետաքրքրում ինքն ըստ ինքեան, և մենք չենք խօսիլ նրա մասին, եթէ չկարծէնք, որ ապագայ սօցիալիստական համայնքի կազմի մասին ունենալիք հասկացողութիւնը արտամարանօրէն կուպած է բուրժուական գեմոկրատիզմի հառկացողութեան հետ:

Անտարակսյա, ներկայումս ռամկալար ֆէդէրատիվ հանրապետութիւն պաշտպանողները ապագայ սօցիալիստական հասարակութեան մէջ էլ ենթագրում են համայնքների ֆէդէրատիվ յարաբերութիւններ, և ընդհակառակի՝ նրանք, որոնք հաւատացած են, թէ սօցիալական յեղաշրջումից յետոյ այդ հասարակական կազմն է զոյտութիւն ունենալու, այդպիսինները այժմ էլ իսկական գեմոկրատիա տեսնում են միայն յայն քաղաքական ապակինարօնացման մէջ: Մարքսիստները, օրինակ, երեակայիկով ապագայ սօցիալիստական հանրապետութիւնը իրեն մի կենտրոնացած համայնք, այժմ էլ բուրժուական կարգերում, յաճախ առաջադրում են կենտրոնացած ռռամկալար հանրապետութիւն, այնինչ սօցիալիստաների մի մասը, օրինակ Խուսաստանի սօցիալիստ-յեղափոխականները, սօցիալիզմը իրեն համայնքների դաշնակցութիւն պատկերացնելով ներկայութեան էլ պահանջում են ապակինարօն գեմոկրատիա—ֆէդէրատիվ քաղաքական կազմ: Այսքանը առ այժմ բաւական է քաղաքական ապակեն արօնացման տեղը ցոյց տալու համար ընդհանուր սօցիալիստական աշխարհայցողութեան մէջ: Մեզ այժմ զբաղեցնողը սօցիալիստական ծրագրի տնիստ մասն է, այն հարցը, թէ ո՞րպիսի բաղական կազմ ամենից նպատակալարամ է բուրժուական կուրգերում աւխտաւոր ժողովրդի տեսակետից:

I

Ապակինարօնացած, ֆէդէրատիվ (դաշնակցական) պետութեան կազմը ուսումնասութեան նիւթին կարելի է մօտենալ երկու ակտակետից. նախ գեմոկրատիայի, ժողովրդապետութեան սկզբունքի, և ապա պետութեան բաղադրիչ մասների փոխադարձ յարաբերութիւնների առանձիւթեան կազմը յարակացութիւններ անելու:

Երկրորդն աւելի պատմական (պետական կեանքի) նշանակութիւն ունի: Սյօ տեսակետից եթէ ցանկանանք ուսումնասիրել գաշնակցական պետութիւնը, պէտքէ շատ աւելի հեռու գնանք: Ոչոք է սկսենք պետութեան բաղադրիչ մասների ամենաթոյլ, արարական, չկազմակերպւած յարաբերութիւններից: Այդպիսի յարաբերութիւնները զոյտութիւն ունինք միայն պետութիւնների ներսը, նրա տարբերի մէջ, այլև անկախ պետութիւնների միջև, քանի որ քաղաքական մարմինը, պետութիւնը չէ ներկայառում մի ինքնամփոփ, կզգիացած էսութիւն, քանի որ նա ոչ այլ ինչ, է եթէ ոչ որոշ՝ ներքին ու արտաքին պարմանների առաջացրած հասարական յարաբերութիւն:

Մենք նոյն իսկ կարող ենք թողնել նահապետական ժամանակների յարաբերութիւնները, որ եղել են պատահական, պատերազմական կամ պատիբագրի համար առաջ եկած: Բաւական է արձանագրել ժամանակակից պետութիւնների կանոնաւոր յարաբերութիւնները, որոնք կամաց կամաց զարգանալով, ստեղծել են մի մշտեած, սիստեմի վերածւած իրաւունք (միջազգային իրաւունք): Պետութիւնները հարկադրւած են համաձայնութեան գալու բազմատեսակ պատճառաններից: Օրինակ, ոժեքի փոխադարձ յարաբերութեան գիտակցութիւնը, ընդհանուր թշնամու ներկայութիւնը, անտեսական յարաբերութիւնները: Ոչ միայն կազմակերպւած, պետութեան պաշտպանութիւնը վայելող, այլև անհաստական, պատահական վաճառականութիւնը անխուսափելի է գարձնում որոշ համաձայնութիւն, երաշխաւուրութիւն:

Եւ անհրաժեշտ չէ որ այդ համաձայնութիւնները պաշտօնապէս արձանագրուած լինին, նրանք յաճախ ճանաչում են լոելեայն, անհրաժեշտառութեան գիտակցութեամբ:

Պետութիւնների յարաբերութիւնները գնալով բարգանում են և նրանց մէջ եղած ժամանակաւոր համաձայնութիւնները ստանում են յարատե բնաւորութիւն, ենթարկում են կանոնաւոր բեղլամենտացիայի, ստեղծելով Միջազգային իրաւունքը:

Այնպիսի յարաբերութիւններ, ինչպէս են՝ հազորգակցութիւնը (քաստ-հեռաց.), գեսանութիւնները, տարբիֆները, օտարահալատակների իրաւունքները որոշող օրէնքները և այլն, այնպիսի կազմ և կախումն են ստեղծել բոլորովին անկախ պետութիւնների միջև, որ Փօրմալ տեսակետից ինքնամփոփ, անկախ պետութիւնը իրականութիւն

եան մէջ գոյութիւն չունի: Այդ պարտաւորական յարաբերութիւնները, մանաւանդ ներկայ տնտեսական կեանքի զարգացման աստիճանի վրայ, երկաթէ անհրաժեշտութիւն են ներկայացնում:

Այսպիսի միջազգային յարաբերութիւններն ընդհանուր բնաւորութիւն ունին:

Բայց կան և աւելի սերտ յարաբերութիւններ, որ հետեանք են զանազան աշխարհագրական, պատմական հանդամանքների: Աշխարհագրական դիրքը, սահմանակցութիւնը կարող է ստեղծել պետութիւնների խմբակցութիւն կամ սփառեմ. Օրինակ՝ Բալկանեան, Պիրենեան թերակղիների պետութիւնները: Այսպիսի պետութիւնների մէջ սովորաբար լինում են աւելի սերտ և ներոյժ, ինտենսիվ յարաբերութիւններ:

Փամանակակից տնտեսական, քաղաքական պայմանները սուած են բերում միջազգային այլ տեսակի բարդութիւններ: Սրտաքին քաղաքականութիւնը ստեղծում է շահերի ներհակութիւն ոչ միայն առանձին պետութիւնների, այլև նրանց խմբակցութիւնների մէջ, առաջ են գալիք պետութիւնների արտաքին դաշնակցութիւններ (Ռուս-Ֆրանս.-Աւստր.-Իտալ.): Դաշնակցութիւնը, որ կարող է լինել թ'է յարձակողական և թ'է իրերի վիճակը, statu quo-ն պաշտպանելու համար, գաշնակից պետութիւնների վրայ դնում է փոխտարձ պարտականութիւններ: Բաւական է յիշել Ֆրանս-Ռուսական դաշնակցութեան հետեանքները, մանաւանդ Ռուսաստանի համար, բաւական է յիշել Անգլօ-Ենապօնական դաշնակցութեան համաշխարհային նշանակութիւնը:

Այդպիսի „սերտ“ յարաբերութիւնները, իհարկէ, չունին իրաւաբանական ոչ մի հիմք, և միջազգային դրութիւնը փոխւելուց յետոյ տեղի են տալիս «կատարեալ բարեկամական» յարաբերութեան, այլ խօսքով՝ բաց են անում կօնֆլիկտների, ընդհարումների դռները:

Մենք խօսեցինք պետութիւնների միջազգային յարաբերութիւնների մասին: Որքան էլ պետութիւնները դաշինքներով, միջազգային հանգամանքներով, յանձնառութիւններով կապւած լինին միմեանց հետ, նրանք, այնուամենայնիւ, չեն կորցնում իրենց քաղաքական անկախութիւնը, չեն զրկում իրենց գերիշխանութիւնից (ը-վերենիտեյ), որ անկախ պետութեան յատկանից է: Բոլոր միջազգային համաձայնութիւնները, սահմանափակումները առաջ են գալիք սոյժերի փոխտարձ յարաբերութեան գիտակցութիւնից և միջազգա-

ին հաւասարակռութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնից:

Բայց այդ միջազգային «սերտ» յարաբերութիւնները միշտ աւելի և աւելի գարգանալով, կարող են ներս խուժել և պետութեան ներքին աշխարհը, չոշափել նրա ինքնիշխանութիւնը:

Քանի որ ներկայ հասարակական-քաղաքական պայմաններում երկրի գրութիւնը որոշողը ոյժերի փոխադարձ յարաբերութիւնն է թէ պետութիւնն ներսում, դասակարգելի մէջ և թէ պետութիւնների գրագրին կեանքում, տիրող դասակարգելի մէջ, ապա ուրեմն արտաքին կեանքում, տիրող դասակարգելի մէջ, ապա ուրեմն պետութիւնն կամ պետութիւնների աւելի սերտ «բարեկամակաղակութիւն»: Աւելի ուժեղ պետութիւնն կամ «խնամակաղակութիւն»: Աւելի ուժեղ պետութիւնն բուրժուազիյի ախործակը, աւելի թողերի վերաբերմամբ գարգանուով, չափազանց քննչացնում է առաջնի զգացմունքները, և յարաբերութիւնները «կատարեալ բարեկամականից» փոխում են՝ նովանալուրեան (պրոտեկտորալ): Սրանով սկսում է պետութիւնների միաւորման առաջին աստիճաննը: Պրոտեկտորալը իրաւաբանական տեսակեալից մի քաղաքական դրութիւն է, երբ թոյլ պետութիւնը հարկադրում է իւր «անկախութեան» պաշտպանութեան գործը յանձնել աւելի ուժեղ դրացուն, դրա փոխարէն հրաժարւելով վերջինիս օգտին զանազան իրաւունքներից թէ ներքին և թէ արտաքին կեանքում: Հովանաւորւած պետութիւնները պահպանում են իրենց ինքնիշխանութիւնը, շարունակում են լինել իրաւաբանորէն անկախ պետութիւններ, որոինեան պետական իշխանութիւնը օտարից չէ ստացւած, այլ սեփական է, իսկ դա պետական մարմնի յատկանին է կազմում: ✓

Օրինակ Խիւան, Բուլիստրան պետութիւններ են, որովհետեւ ունեն անկախ սեփական պետական իրաւունք, միայն որոշ չափով սեղմած Ռուսաստանի հովանաւորութեամբ:

Փաստօրէն, սակայն, այդ միջազգային յարաբերութիւնը հաստատում է „հակազդակներից կօնտրագենտներից միայն մէկի շահերի համար: Իրաւաբանորէն, ըստ երկոյթին անկախ Խիւան և Բուլիստրան ոչ այլ ինչ են, բայց եթէ Ռուսաստանի համար շուկայ և արտաքին կեանքում մի զէնք՝ վարելու իւր իմակերիալիստական քաղաքակնութիւնը:

Բայց պետութեան ինքնակախութիւնը կարող է աւելի սահմանափակել և անկախ պետութիւնը վերածւել նորտականի, վասսալականի:

Այս գէպքում արդէն զերիշխան սփրկերեն պետութիւնը ինքն է ուրոշում վասսալականների լինքնութրոյնութեան սահմանները, որոնք կարող են տարբեր լինել, նայելով թի ինչ է պահանջում գերիշխանի շահը: Բայց, այնուամենայնիւ, վասսալական յարաբերութիւնը գէպքի գերիշխող պետութիւնը տարբերում է ամենալայն ինքնալիք գաւառի յարաբերութիւնից, որովհետև վերջին գէպքում կենարօնական կառավարութիւնը, ինչպէս կտեսնենք, ոչ միայն որոշում է իւր անմիջական դործունչութեան շրջանը, այլ և ինքնավարութիւնը և նթարկում է որոշ ուեգլամենտացիայի, հսկում է գաւառին յանձնւած օրէնսդրական ֆունկցիաների վրայ, այն ինչ վասսալականը վերցնում է իւր վրայ որոշ պարտականութիւններ, յանձնալու ծանր, զիջում է գերիշխող պետութեանը շատ իրաւունքներ, բայց զրանից դուրս մնացած քաղաքական կեանքում պահպանում է ինքնակախութիւն (և ոչ թէ ինքնավարութիւն): Գերիշխող վասսալական պետութիւնները կապւած չեն օրգանական պետական կեանքով, այդ կապը առաջացնող հիմնարկութիւններ: Գերիշխողը բաւկանանում է հարկով և մի քանի այլ տեսակի ծառայութիւններով: Այս տեսակի պետական յարաբերութիւնը աւելի հին է և բարդ քաղաքական կեանքի չի զիմանում: Նա տարածւած էր հին ժամանակներ: Համարեա բոլոր մեծ պետութիւններն այդախու դրույ: Այս տեսակի պետական յարաբերութիւնը աւելի է բարդ քաղաքական կապակցութիւնը կարելի է բացարեկ այն ժամանական մեխանիզմի անկատարութեամբ, պարզութեամբ: չէր սահեղծւել վարչական խիտ ցանց, օրէնսդրութեան ճառագոյթներն ել շատ հեռու գնալ չէին կարող, այդ պատճառով գերիշխող պետութիւնը սեփականացնում էր մի քանի անհրաժեշտ ֆունկցիաներ, մնացածը թողնելով վասսալականի անկախ կառավարութեանը: Ասորեստանը և Պարսկաստանն այդպիսի յարաբերութիւններ էին պահպանում իրենց լայնածաւալ պետութիւնների մէջ: Օրինակ Հայաստանը (բաց առեալ անկախութեան շրջանները) Պարսկաստանի վերաբերմամբ եղել է վասսալական պետութեան դրութեան մէջ: Մշտական զինակցութիւն, յանձնական հարկ—զանազան ձեռքովը¹⁾ կապում էր վասսալին իւր զերիշխանի հետ:

1) Օրինակ հայկական Աղձնիք գաւառի հարկը պարսից արքային, կայանում էր տարեկան 20,000 Ճի զօրքին մտակարելու մէջ:

տարրերութեամբ, որ հոօմէական իրաւունքի համաձայն՝ գաւառների, (պրօվինցիաների) սամարում հոգր համարւում էր Հոօմի սեփականութիւն, յանձնւած տեղացիներին, և որ կենտրոնական կառավարութեան քաղաքականութիւնը իր ներկայացուցիչների (պրօկօնսուլների) միջոցով էր վարում, ¹⁾ պահում էր զինւորական ուժը և այլն:

Մեր ժամանակում զերիշխան և վասսալական պետութիւնները տեղի են տեսլ կենարօնացած և ապակինարօնացած պետութիւնների: Վասսալական յարաբերութիւններ գրյութիւն ունէին մինչև վերջին ժամանակները Թիւրքիայում (Եղիպատու, անւանական Բորբարիա): Նոյն ձեի յարաբերութիւն կայ Հնդկաստանի մի քանի կիսասանկախ երկրներում Բրիտանիայի վերաբերմամբ:

Այս տիպի միաւորումներից յետոյ մենք բնականաբար պէտք անցնէինք ապակինարօնացած պետութեանը աւտօնօմ գաւառներով, որ իւր Փօրմալ իրաւաբանական յարաբերութիւններով յիշեցնում է գերիշխող և վասսալական պետութիւնների կապակցութիւնը. բայց մեր զիմանակին՝ դաշնակցական պետութեան կազմին աւելի հետևողաբար մօտենալու համար, մենք կանցնենք պետական միաւորումների մի այլ սերիայի, որը զգալի կերպով տարբերում է մեր մինչև այժմ տեսածներից իւր բաղադրիչ մասերի իրաւաբանական հստաշարութեամբ: Երկու կամ աւելի պետութիւններ պայմանագրի հիման վրայ միանում են և կենարօնացնում պետական ֆունկցիաներից մի քանիսը: Այդպիսի միաւորումներ ներկայացնում են ունիւսներ (միութիւններ²⁾) անձնական և ուեալ:

Զանտոպան քաղաքական պատմական հանգամանքներ կարող են հարկադրել առանձին պետութիւնների կազմել այդպիսի միութիւններ: Միացնող կապը միայն միապետի անձնաւորութիւնն է: Անձնական ունիւսն տարբերում է ուեալից նրանով, որ առաջնը պատմական կապ է: Որոշ զինաստիական—ժառանգական օրէնքի հիման վրայ մի երկրի միապետ տէր է դառնում մի այլ երկրի գահի. Կարող է պատճեալ, որ կապը կտրճ ժամանակից յետոյ կրկին խզւի, երբ առաջ կդայ մի նոր մերձաւորագոյն ժառանգ գահերից մէկի համար, ժանաւանդ, եթէ երկու երկրների ժառանգական իրաւունքները տարբեր են: Ունիայի մէջ զանւող պետութիւններն օրգանական կապւած չեն միմեանց հետ, նրանք ինքնիշխան են և միմեանց օտար: Ընդհանուր միապետը, (որը մէկ պետութեանը պատ-

1) Տես՝ Պոկровскій—Ист. Римек, права.

կանում է անկախ միւսին պատկանելուց), վարում է ինքնապաշտպանութեան գործը, այնպէս որ պատերազմը այդ շախկապւած պետութիւնների մէջ անկարելի է գառնում. սրա մէջն է կայանում համարեա ամբողջ կապը: Յաճախ պատահել է, որ անձնական ունիան փոխւել է ուշալ ունիայի, երբ եղած կապը ամրապնդւել է, կամ հարթւել են դինաստիական—ժառանգական խոշընդոտները: Այդպիսի ձանապարհով է առաջ եկել օրինակ Աւստրո—Ռւնդարիայի ուշալ ունիան: Անձնական ունիայից ուշալը տարրերում է կապակցութեան տեսպականութեամբ. պայմանագրի մէջ կարող է որոշած լինի, որ միավետը ընդմիշտ ընդհանուր է (Նիկո—Նօրինգիա), կամ ընդհանուր է ներկայ ափրող հարստութեան մէջ¹⁾ (Աւստրո—Ռւնդարիա): Ուշալ ունիայի մէջ բաղադրիչ պետութիւնների կապը աւելի կանոնաւորւած է: Կան ընդհանուր պետական ֆունկցիաներ: Արտաքին քաղաքականութեան մէջ ունիան երեան է գալիս իրեն մի պետութիւն, դրա համար էլ արտաքին քաղաքականութիւնը կենտրոնացած է. կենտրոնացած է նոյնպէս ֆինանսների որոշ մասը, որ նշանակւած է ընդհանուր ծախսերի համար: Ինքն ըստ ինքեան պարզ է, որ դինուրական մինիարութիւնն էլ պէտք ընդհանուր լինի. միապետը համարում է ընդհանուր հրամանատար ունիայի ոյժերի, Բայց թէ որքան առանձնայութիւն ունեն այս մի քանի ընդհանուր պետական ֆունկցիաները, երկում է Աւստրո—Ռւնդարիայի ընդհանուր քաղաքական կեանքի օրինակից:

Տացի Հարսրուրգեան առան բռնականերից երկու մասերի համար ընդհանուր են՝ արտաքին, զինուորական և ֆինանսների մինիարութիւնները: Սյա ընդհանուր գործերը անօրինելու համար գոյութիւն ունի մի խորհրդակցական ժողով, կամ գելեցացիա, հաւասար թւով Աւստրիայի և Ռւնդարիայի կողմից: Ընարևում են երկու պետութիւնների օրէնսդրական մարմինների կողմից (20 հոգի վերին և 40 ներքին պալատից—ընդամենը 120 հոգի): Սա օրէնսդիր ժողով (չէ²⁾), և պարագմունքները տեղի են ունենում առանձին առանձին: Եթէ համաձայնութեան չեն գալիս, այն ժամանակ ժողովում են և միայն քէարկում հարցերը, սակայն այն անհրաժեշտ պայմանով, որ երկու կողմից էլ հաւասար չափով ներկայացնեցիներ լինեն: Այդպիսով, որ այս հիմնարկութիւնը նման է աւելի դես-

1) Տես, Գеорգի Պետրովիչ. Право современного государства. I. Եреван 508
2) „Հիմնական պետական օրէնք ընդհանուր գործերի մասին.“ § 6

պանութեան, քան թէ օրէնսդիր մարմնի. Ժողովի քննութեան ենթարկող հարցերը նախօրօք քննուում են Վիէննայի և Բուգապետի օրէնսդրական ժողովներում: (Ընդհանուր ծախսերին մասնակցում են երկու մասերն էլ, բայց ոչ հաւասար չափով (մոտ 70 % Աւստրիան, 30 % Ռւնդիա):) Ինչպէս յայտնի է ունիայից աւելի շահուում է Ռւնդարիան, չնորհիւ Բուգապետի ուշամի և դելեցիացիայի իւր մասի համեմատաբար աւելի միապաղպութեան, ազգային անտագօնիզմի թուլութեան:

Երկու պետութիւնների մէջ էլ կապը այնքան թոյլ է, որ մի մասի քաղաքացիներն իրենց օտար են համարում միւս մասում: Զկայ ընդհանուր տերրիտորիա, չկայ ընդհանուր պետական հպատակութիւն, ընդհանուր օրէնքներ. կամ միայն որոշ հիմնական պայմանագիր և ժամանակաւոր (օր. մաքսային) համաձայնութիւններ. բաղադրիչ մասերն էլ պահպանում են իրենց գերիշխանութիւնը (ըւերենիտե՞):

Ուրեմն ամենաթոյլ յարաբերութիւններից, մենք կամաց կամաց անցնում ենք աւելի և աւելի բուրդ և սերտ կապակցութիւնների. բացի վրանից աւելի առաջ ունենալու իրական յարաբերութիւններ և կանգնած լինելով սօցիալական տեսակետի վրայ այդ յարաբերութիւնների վերաբերմամբ՝ առանձին տարբերութիւն չդրինք միջազգային և պետական յարաբերութիւնների մէջ և պահպանեցինք նրանց մէջ աստիճանական յաջորդականութիւն:

Մենք շուտով կանցնենք դաշնակցական պետութեան, բայց մի քանի խօսք ևս մի անցողական պետական ձիւ մասին: Եթէ ունիայից վերացնենք միապետի ընդհանրապէս ապարդիւն գոյութիւնը եթէ թողնենք այն խորհրդակցական ժողովը կամ գելեցացիան, և յարաբերութիւնները գարձնենք փոքր ինչ աւելի օրդանական, սիստեմատիկ, կստանանք երկու կամ միքտինի հանրապետութիւնների գաշնալրութիւն, կամ ինչպէս կոչում է, պետութիւնների դաշնակցութիւնը:

Սա մի պետական—իրաւական կառուցւածք, կօնստրուկցիա է, որ առաջ է գալիս անկախ գերիշխող պետութիւնների կազմած պայմանագրից. գաշնակցական հիմնարկութիւնը իրաւարանական պետութիւնը:

2) Յաճախ պետութիւնների գաշնակցութիւնն էլ անւանում են ֆէզիրացիա, բայց մենք կապակցական ֆէզիրացիայի անւան տակ հասկանալ գաշնակցական պետութիւնը:

անսակետից չունի հարկադրից զօրութիւն, և նրա առաջարկած կարգադրութիւնները պէտք է միայն յարմարեցնել պետութիւնների առաջական իրաւունքին Պետութիւնների ներկայացուցիչների համագումարը կազմւած է կառավարութիւնների և ոչ թէ ժողովրդի ներկայացուցիչներից: Սրանք լիազօրներ են իրենց կառավարութիւնների կողմից և պարտաւոր են նրանց կարծիքների արայացախից լինել: Գաշնական հիմնարկութիւնը (չի կարել առնել իշխանութիւն) իւր որոշումները կիրառելու համար չունի սեփական գործադրի մարմին, այլ զիմում է դաշնակցութեան անդամ կուսակարութիւններին, որոնք և իրականացնում են այդ որոշումները: Զեայ սահմանադրութիւն, որով կարել լինէր հարկադրել հակառակուող պետութիւններին առջի առաջ ունենալ դաշնակցութեան որոշումները: Կարիք չկայ յիշել, որ չկայ ընդհանուր քաղաքացիութիւն և պետութեան ընդհանուր ծախքերն ու զօրքը ներմուծում են միութեան մէջ մտնող անդամ—պետութիւնները: Անդամները մէջ յարմարութիւն ունեն (մինչեւ անդամ իրաւաբանօրէն) դուրս գալու, խախտելու դաշնակը: Այդպիսի պետական միաւորումներ գոյութիւն են ունեցել մօտիկ անցեալում նվեցարիայում (1816—1848թ.), հիւսիսին Ամերիկայում մինչեւ Ֆիլադելֆիայի համագումարը (1789թ.) և մի քանի այլ աեղերում: Ներկայ պայմաններում, երբ միջազգային յարաբերութիւնները պահանջում են կայուն պետական գրութիւն, երբ գանձան պետութիւնները սուքից զլուխ սպառավիճակ կանոնած են միմեանց գէմ, այսպիսի խախուտ իրաւաբանական—քաղաքական կաթէզօրիաները երկար գոյութիւն ունենալ չեն կարող: Պայմանագիրը, համաձայնութիւնը աեղի է տալիս սահմանադրութիւնների ստեղծում է մի դաշնական պետութիւն:

I I.

Անհնից առաջ, իհարկէ, մէնք նկատում ենք այն խոչը տարերեսութիւնը, որ կայ դաշնական (Փէզէլսամիլ) պետութեան և մինչեւ այժմ մեր ծանօթացած պետութիւնների մէջ:

Երանցից և ոչ մէկը չունէր սահմանադրութիւն, նրանք ըուլուը հիմնած են եղել սրբածանադրերի վրայ, որ գժւար չէ խախուտ,

1) Джемсъ Брайсъ. Америк. республ. հատոր I. Դյոնանъ. Народн. закон. въ Швейцарія, Կամ' Курти. Ист. народ. закон. въ Швейцарія. Վա-
силъ. конст. 48 года ձեռքիո տակ շինելու պատճառով չիմ կարող տեղը մատ-
նակի անել:

և մէնք տեսնում ենք, որ ունիաները հեշտութեամբ լուծել են պետութիւնների գաշնակցութիւնները նոյնպէս տեղի են տեկլ առելի ճկուն պետական ձեերի: Սահմանադրութեան մեծ տարրելութիւնը կայանում է նրանում, որ նա լինելով երկրի հիմնական օրէնքը, պայմանաւորում է իրանով ամբողջ օրէնսդրական կեանքը, ամեն մի օրէնք ստորագաւում է նրանից և ոյժ է ստանում միայն հիմնական օրէնքին հակասելու դէպքում: Սահմանադրութեան փոփոխիլը ամեն մի գաւառի քմահանոյքից չէ կախւած, այլ ունի մշակւած ձև: Նրա կեակը կարող են գոփութել ամբողջ պետութեան աղջաբնակութեան մեծամասնութեան ցանկութեամբ: Յետոյ սովորաբար սահմանադրութեան յատկանիշներից մէկն էլ այն է, որ պետութեան սահմանադրութիւնը չեն կարող դուրս գալ միքաղադրիչ մասերը իրաւաբանօրէն չեն կարող դուրս գալ ութիւնից, թէի, իհարկէ, ամեն ինչ մեր ժամանակում որոշում է ոյժերի փոխադարձ յարութերութիւնը:

Մեզ այսուեղ հետաքրքրում է դաշնակցական պետութեան կենարօնական իշխանութեան բնոցիլը, ստորւկտուրան: Այդ իշխանութիւնն ինքնորոյն է, նա կախում չունի բաղադրիչ մասերից, նահանգներից, ընդհակառակը, ինչպէս կտեսնենք, նա ենթարկումէ նահանգները իր իշխանութեանը:

«Պաշնակցական պետութիւնը», ստում է Իւլինեկը, «մի քանի պետութիւններից առաջ եկած պետութիւն է, որի պետական իշխանութիւնը բղիսում է նրա առանձին անդամներից, որոնք կազմում են մի պետական միութիւն»:¹⁾

Այս բանաձեռ արտայայտում է դաշ. պետութեան ամենահետաքրքիր գիծը: Դուրս է գալիս որ երկրի ամեն մի որոշ մասը միաժամանակ պատկանում է երկու պետութեան՝ և դաշնակցութեան անդամ-պետութեան, և իրեն դաշնակցութեան: Ուրեմն մի և նոյն գաւառը, մի և նոյն բաղադրացին մասնակցում է երկու պետական, քաղաքական կեանքի, իւր կանոնի կամ շտատի և ամբողջ դաշնակցութեան: Բանը նրանում է, որ դաշնակցական պետութեան մէջ պետական բոլոր ֆունկցիաները բաժանւած են երկու մասի. մէկը, որ զիսաւորապէս վերաբերում է տեղական կեանքին, որը շունչընդհանուր պետական նշանակութիւն, թողնւած է կանոնի, նահանգի ազատ իրաւասութեան, ինքնուրայնութեան. միւս ֆունկցիաները, որ ընդհանուր են, որոր պետութիւնների շահերն են շօդա-

1) Պելլինեկъ. նոյն աշխատութիւնը, երես 515.

Բայց այսուհեղ երկու տեսակ թիւրիմացութիւն կարող է առաջ դալ. մի կողմից կարելի է կասկածել, որ կենտրոնական իշխանութիւնը ոչնչով չի տարբերում պետութիւնների գաշնակցութեան մէջ գոյութիւն ունեցող կենտրոնական իշխանութիւնից, և միւս կողմից եթէ այդ կասկածը չծագի, կարող է պատահել, որ կանոնը, դաշնակցութեան անդամ—պետութիւնը նմանեցնեն ապակենարոնանցած պետութեան աւտօնօմ գաւառին և հետեարար զրկեն նրան պետութիւն կոչւելու առաւելութիւնից: Բայց առաջին թիւրիմացութիւնը մասամբ պարզւած է վերը. ես ասացի, որ դաշնակցական պետութիւնը ունի սահմանադրութիւն, որ պակասումէ պետ. գաշնացութեան: Բայց գրանից յայտնի է որ դաշնակցութեան կենտրոնական (ազգային) օրէնսդութիւնը ունի բոլորովին անկախ գոյութիւն, կարիք չի զգում կանոնների համաձայնութեան, հաւանութեան մէջ: Նա ունի միջոցներ հարկադրելու բոլորին, լինի դա նահանգ, կամ առանձին քաղաքացի, ենթարկել իւր յայտարարած օրէնքներին, եթէ իհարկէ այդ օրէնսդութիւնը չի անցնում սահմանադրութեամբ նրա համար ընդգծած սահմաններից: Մի խօսքով կենտրոնական իշխանութիւնը իսկական գերիշխող պետութեան իշխանութիւն է:

Այժմ հարց է առաջ դալիս՝ իսկ եթէ դաշնակցութեան անդամները պետութիւններ չեն, այլ լոկ աւտօնօմ գաւառներ: Այս հարցը աւելի բարդ է և երկար ժամանակ վիճելի է եղել պետական գիտութեան մէջ: Պրօֆեսոր Կօրկունովի և Բրյասի աշխատութիւններից¹⁾ հետհետել տեղեկութիւններն ենք քաղում այս հարցի վերաբերմամբ գոյութիւն ունեցող գրականութեան և թէօրիաների մասին: Հիւսիսային Ամերիկայի մեծ դաշնակցութիւնը հիմնելուց առաջ, նշապէս յայտնի է, նահանգները ներկայացնում էին կատարել անկախ պետութիւններ և մի կարճ ժամանակամիջոց էլ՝ պետութիւնների գաշնակցութիւն: Այնպէս որ, 1789 թւի սահմանադրութիւնը ընդունելուց յետոյ, մօտիկ անցեալի թարմ յիշողութիւնը պարզ ցոյց էր տալիս, որ նահանգները պետութիւններ են և միայն իրենց իրաւունքներից բաժին են հանել Վաշինգտոնի կենտրոնական կառավարութեանը: Այդ պատճառով էլ առաջ էր եկել և երկար գոյութիւն պահպանեց այն գիտական թէօրիան, որով պետական գերիշխա-

1) Коркунов. Русск. го суд. право. Общая часть. Брайсъ. Америк. ре-
публ. I. ч.

նութիւնը ընդունակութիւն ունի մասերի բաժանելու: Այդ սուվերենիտեանի մասը թողնեած է իբր թէ նահանգներին, իսկ միւս մասը յանձնեած է գաշնակցական իշխանութեանը:

Բայց այս թէօրիայի վրայ միտքը անկարող էր երկար հանդիսա առնել, քանի որ նա չէր արտայայտում պետական փունկցիաների իսկական բնոյթը: Մաքս Վէյգլի այս թէօրիայի բննադատութիւնը (որ առաջ է բերում Կօրկունովը) վերջ դրեց այն թիւրիմացութեանը, թէ սուվերենիտեալ կարող է բաժանել պետութիւնների մէջ: Իսկապէս՝ բաժանել բառիս իսկական մաքով, կարելի է այնպիսի շօշափելի բաներ, ինչպէս է տերրիտորիան. բաւական է, որ տարւով որոշ սահմանագիծ—և յայտնի կլինի պետութիւնների իրաւասութեան սահմանները հողի վերաբերմամբ, նոյնը և ազգաբնակութիւնը կարող է մասերի բաժանել զանազան պետութիւնների մէջ: Բայց ինչպէս կարելի է բաժանել փունկցիաները, որտեղ է այն կօնկրետ մօմենտը փունկցիաների վրանում. որով կարելի լինէր մաթեմատիկական հշտութեամբ բաժանել. Փունկցիան սուբստրատ չի. նա գաղափարական հասկացողութիւն է, վերացական իրերի հետ գործ ունի, հետեարար գերիշխանութիւնը (սուվերենիտեատ), որ պետական փունկցաների հիմնաւորումն էր համարւում, չի կարող բաժանել նահանգի և կենտրոնական իշխանութեան մէջ:

Զեյթէլիքննադատութիւնից այս չափով օգտւելով, այժմ պետական գիտութեան ներկայացուցիչները, օր., հեղինակաւորներց մէկը՝ Իէլինեկ, գալիս են այն եղբակացութեան, որ սուվերենիտեալ պետութեան անհրաժեշտ յատկանից—պայմանը չէ, որ պետութիւն լինելու համար հարկաւոր է, որ պետական փունկցիաները բղին քո սեփական իրաւունքից՝ օտարից ստացած և օտարի հակողութեան ենթակայ չինին: Այնպէս են գաշնակցական պետութեան նահանգները, նրանք ոչ ոքից չեն ստացել այն օրէնսդրական և վարչական իրաւունքները, որ գործադրում են կանոնում իրենց իրաւասութեան սահմաններում, ընդհակառակը նրանք իրենց իրաւունքներից մի քանիսը, որ ունեն ընդհանուր գաշնակցական նշանակութիւն—յանձնել են կենտրոնական կառավարութեան, որ նահանգի իրաւունքները իրենցն է և ոչ ոքի հակողութեան ենթակայ չէ, քա երկում է նրանից, որ նահանգները պահպանում են իրենց մշակած նահանգգական սահմանադրութիւնները, որ կարող են փոփոխել նրանց, որքան կամենան: Այսաւեղ արգէն պարզում է գաշնակցութեան անդամ—պետութեան և

աւտօնօմ գաւառի տարբերութիւնը, վերջինը ամբողջովին հիմնուում է իւր օրէնսդրութեան մէջ կենտրօնի տւած իրաւունքների պայց և դնուումէ նրան մշտական հոկուութեան տակ: Աւտօնօմ գաւառի իրաւաբանական դրութիւնը կը լարգաւի, երբ կանցնենք ֆէդէրացիայից ապակենարօնացած պետութեան:

Դաշնակցութեան նահանգների իրաւաբանական բնոյթը պարզելու համար պէտք է նկատել մի ուրիշ հանգամանք ևս. Նահանգները լինելով պետութիւններ, իրենց համար ընդգծում սահմաններում՝ իրենցից արտադրում ևն կենտրօնական կառավարութիւնը, բայց նրանց ազգեցաւթիւնը դաշնակցական կառուցածածքի վրայ երեւն է գալիս ոչ իրբի պետութիւնների, այլ պետութեան տարրերի, ահա մի խոշոր տարբերութիւնների գաշնակցաւթեան և գաշնակցական պետութեան մէջ: «Դաշնակցական օրէնսդիր մարմինը կազմելիս ժողովուրդը մասնակցում է ոչ իրբի այս կամ այն նահանգի, այլ իրեն Դաշնակցական պետութեան ժողովուրդը: Սոյն իսկ վերին պարագը, ուր հաւաքւում են նահանգների ներկատացուցիչները, գործում է իրբի ամբողջ պետութեան օրէնսդրական օրդան, անգամները բոլորովին պարտաւոր չեն իրենց նահանգների կամ կառավարութիւնների արտահայտիչ լինել նրանք նոյնպէս բաժանուում են կուսակցութիւնների, ինչպէս և ներքին պարագը: Այդպիսով վենտրօնական իշխանութնամ միջավայրում նահանգները դադարում են իրբի պետութիւններ գործելուց և կազմում են մի ամբողջութիւն: Ընդհանուր գուշնակցական սահմանադրութիւնն է, որ պաշտպանում է թէ նահանգների և թէ կենտրօնի իրաւունքը և հոկում է երկուսի վրայ էլ: «Դաշնակցական կառավարութիւնը, իր իրաւասութեան սահմաններում ոչինչով չի տարբերուում կենտրօնացած պետութեան կառավարութիւնից, այդ տարբերութիւնը սակայն իսկոյն աշքի է ընկնում, երբ անհրաժեշտ է լինում քարարելութեան մէջ մտնել նահանգների կառավարութիւնների հետ և յարմարել նրանց պետական գործունէութեանը՝ համաձայն սահմանադրութեան:

Դաշնակցական և նահանգական իշխանութիւնների իրաւաբանական ստրուկտուրայի ընդհանուր գծերը յիշատակելուց յետոյ, անցնենք այդ քաղաքական հաստատութիւնների աւելի մանամասն ուսումնասիրութեան:

Մենք առացինք, որ օրէնսդրութիւնը բաժանուում է կենտրօ-



նական-դաշնակցական և կանոնական պահանջանակ այս բաժանուում տեխնիքապէս ընդունում է երկու կենտրօնների, սահմանադրութեան մէջ յիշւած են լինում այն բոլոր օրէնսդրական ճիշդերը, որոնք կանոնների իրաւասութիւններ անցնել են կենտրօնականի իրաւասութեան ըջանը. այն մասը, որ մնում է կանոններին, այլև չէ յիշւում սահմանադրութեան մէջ. ենթադրում է, որ մնացած բոլոր օրէնսդրական փունկիցները նահանգը պահպանել է իր համար: Երկրորդ, ձեւ կարող է պատահել, որ սահմանադրութեան մէջ յիշւած լինեն օրէնսդրութեան բոլոր այն ճիշդերը, որոնք պատկանում է նահանգին, իսկ մնացածը, որ կենտրօնական իշխանութեան լիազորութիւնն է կազմում, կարող է մնալ անորոշ:

Օրինակ, Ամերիկայի Միացեալ Նահանգների վերաբերմայր սահմանադրութիւնն ասում է (սահմանադրութիւն յօդւած X) «այն իրաւունքները, որոնք սահմանադրութեամբ չեն յանձնւած Միացեալ Նահանգներին և չեն վերցւած նահանգներից, պատկանում են նահանգներին կամ ժողովրդին». Նոյն հարցի վերաբերմայր նվելյացիայի դաշնակցութեան սահմանադրութիւնը յայտարարում է. «Կանոնները սուվերենութիւն») են այն բոլոր հարցերում, որոնց վերաբերմայր նրանց գերիշանուութիւնը չէ սահմանավակած գաշնակցական սահմանադրութեամբ, և որպէս այդպիսիներ, նրանք օգտառում են այն բոլոր իրաւունքներից, որոնք յանձնւած չեն գաշնակցական իշխանութեան»: (դաշ, սահմանադր. յօդւած 3.) Նոյնը և Աւստրալիայի դաշնակցութեան սահմանադրութեան մէջ, ուր թւած են օրէնսդրական այն իրաւունքները, որ անցնել են կենտրօնական իշխանութեան (յօդ. 51, 52):

Ընդհակառակը, կայ մի ֆէդէրատիւ սահմանադրութիւն, ուր կենտրօնական իշխանութիւնը շատ ուժեղ է և ազատ՝ իր օրէնսդրութեամբ միջամուխ լինելու նահանգների իրաւասութեան ըջանը, կամ յետ զնելու նրա օրէնսդրական ակտերի վրայ, այդ երկիրը կանագան է²⁾.

Գերմանիայում, որ մի այլանդամ ֆէդէրացիա է, կենտրօնի իրաւունքները շատ լայն են և նա իւր օրէնսդրական մարմնի (բայիստագ) միջոցով կարող է փոփոխել սահմանադրութիւնը (յօդ. XIV ընդհանուր

1) Թուփերեն այսեղ, ինարիկ, պէտք է հասկանալ ինքնորոշն, ինքնիշխան, այլ ոչ իրաւական մարդկ (սուվերենիստակ):

2) Երբոքի տակ չունենալով անադայի սահմանադրամիւնը, հիմնում եմ անդիացի Պալմիի խօսքերի վրայ Օսօնա, որպան Անգլիա. երես 483:

որոշումներ»: Բայց սխալ կլինէր ենթագրել, որ այն բոլոր օրէնսդրական ճիշդերը, որ չեն յիշւած, թողնւած են առաջին դէպքում նահանդի, իսկ երկրորդ-կենտրոնի իրաւասութեան: Սահմանադրութիւն մշակելը և այլ հիմնական օրէնքներ տալը դաշնակցական երկիրներում պատկանում է վերջին ինստանցիային՝ ժողովրդին:

Այդ պատճառով էլ օրէնսդրութիւնը վերջի վերջոյ բաժանում է ոչ թէ երկու մասի, ինչպէս վերը յիշեցի, այլ չորս մասի, ինչպէս բաժանում է ջեմս Բրայյու¹⁾.

” իրաւոնքներ, որ պատկանում են բացառապէս ազգային (կենտրոնական) կառավարութեան.

” իրաւոնքներ, որ պատկանում են բացառապէս նահանգներին.

” իրաւոնքներ, որոնցից օգտւել արգելւած է պատկան կառավարութեանը²⁾

” իրաւոնքներ, որոնցից օգտւել արգելուած է նահանգներին

Հասկանալի է, որ այս վերջի երկուսը պատկանում է Միացեալ Նահանգի³⁾ ամբողջ ժողովրդին:

” Նոյն բաժանումը կայ և շվեյցարական սահմանադրութեան մէջ:

Մենք վերը ասացինք, որ պետական ֆունկցիաները մաթեմաթիքական ճշտութեամբ բաժաննել անկարելի է, և օրէնսդրութեան մէջ հեշտութեամբ կարող են ապրդել այնպիսի ճիւղեր, որոնց վերաբերմամբ իրեն լիազօր կը համարեն թէ նահանգական, և թէ դաշնակցական կառավարութիւնները. և Միացեալ Նահանգների օրէնսդրական գործնականում (պրակտիկայի մէջ) արդէն տեղ է բռնել այդ երեսոյթը: Միենոյն հարցի վերաբերմամբ երկու կառավարութիւններն էլ իրաւոնք ունեն օրէնքներ մշակելու, միայն այն վերապահութեամբ, որ դաշնակցական օրէնսդրութեանը առաջնութիւնում է արւում. նահանգի կառավարութիւնը չի կարող նոր օրէնք յայտարարել այդ տեսակ հարցերի վերաբերմամբ, եթէ կենտրոնը արդէն զբաղւել է զրանով և օրէնքներ տեել:

Ամերիկայի դաշնակցութեան հիմնադիրները աշխատել են կենտրոնի և նահանգի օրէնսդրութեան շփումը ըստ կարելոյն նւագեցներ, որպէսզի առիթ չինի ընդհարւելու. գրա համար ստեղծ-

ւած են այնպիսի պայմաններ թէ կենտրոնի և թէ նահանգներինամար, որ նրանք՝ անկախ մէկը միւսից կարողանան կիրառել կեանքի մէջ իրենց օրէնքները և չգիմնին միւսի օգնութեանը: Բայց ինչպէս կտեսնենք, այնուամենայնիւ կան հարցեր, որոնց առթիւ մէկը միւսին պէտք է օգնութեան համեն, կամ պէտք է հարկադրի իրեն օժանդակելու: Որինակ՝ դաշնակցական կառավարութիւնները, որ ուղարկի նշանակւած թւով պատգամաւորների և այն (հատւած I յօդւած 2. և 4). այսպիսի շփման կեաեր բաւականաչափ, կան որովհետեւ երկուսն էլ՝ թէ դաշնակցական և թէ նահանգական կառավարութիւնները կարօտ են փոխադարձ օգնութեան: Նահանգի օրէնսդրական իրաւունքները թէ չատ լայն են Ամերիկայում¹⁾, բայց նրա քաղաքական-պետական գոյութիւնը առանց կենտրոնի պաշտպանութեան դժւար կլինէր պահապանել:

Տեղական (նահանգական) պետական կազմակերպութեան և օրէնսդրութեան հետ մանրամասն ծանօթանալը կարծումնենք դուրս ոլետքէ լինի մեր նպատակից, որովհետեւ գրանք առանձին—առանձին վերցրած ոչնչով չեն տարբերում մեզ ծանօթ, մանր կենտրոնացած սետութիւններից, բացի միայն իրենց իրաւոնքների սահմանափակութիւնը. յամենայն գէպս, դա ֆէդէրալիզմի ուսումնասիրութեանը չէ կարող նպաստած լինել: Մենք պէտք է գիմնենք այն պետական հիմնարկութիւններին և ծանօթանանք այն առանձնայտուկ կազմակերպութիւնների հետ, որոնք կարգեն մեզ դաշնակցական պետութեան պետական—իրաւական բնոյթը. ուրեմն նախ անցնենք կենտրոնական (դաշնակցական) կառավարութեանը, ապա բարձրագոյն պետական ինստանցիային՝ ժողովրդին և նրա սահմանադրութեանը:

Դաշնակցական կառավարութիւնը իրեք սկզբունք ընդունելով, որ չպէտք է միջամտել, նահանգական կառավարութեան գործութեան սեղմատերին և ոչ էլ առիթ առլ նրան միջամտելու կենտրոնական կառավարութեան գործերին, սակայն է իւր կառավարչական ցանցը ամբողջ պետութեան, բոլոր նահանգների մէջ և վարում է նրանց միջոցով իւր գործերը միանգամայն անկախ նահանգական կա-

1) Երայ. Ամերիկ. քառական 1. երես 347:
2) Սահմանադր. (ոգուած 1, § 9:
3) Սահմ. յօդ. I, § 10.

ռազմարութիւնից, չըխմելով նրա արմինիստրացիային՝ իւր որաշումները ի կատար ածերու համար։ Այդպիսով ստեղծում են ամեն մի նահանգում կողք կողքի երկու պետական հիմնարկութիւններ՝ նահանգական և դաշնակցական, երկու աղմինիստրացիա, երկու դատարան և այլն. ամեն մէկն ունի իւր ուժիական գործունէութեան շրջանը միենայն վայրի մէջ։ Օրինակ, այն հարկերը, եկամուտները, որ պէտք է ստանայ դաշնակցական գանձարանը, հաւաքում է դաշնակցական պաշտօնեան, որն անմիջապէս նշանակւած է և կախւած կենտրօնական կառավագանութիւնից. այն գործերը, որոնք սահմանադրութեամբ վերաբերում են դաշնակցական դատարանին, ուղղում են այստեղ. նահանգն էլ ունի իւր ադմինիստրացիան և դատարանը։ Բնականարար, թէ առաջնի և թէ երկրորդի գործունէութիւնը այնքան բարդ չի լինի, որքան այն դէպքում, երբ կայ մի գործադիր մարմին և մի դատարան բոլոր գործերի համար։ Թէ աւելի բարձր ինստանցիաների և թէ ժողովրդի համար հակողութիւնը այդ հիմնարկութիւնների վրայ աւելի թեթևանում է։ Սակայն պէտք է նը-կատել, որ բոլոր դաշնակցական պետութիւնների մէջ այդպիսի անկախութիւն վարչական մարմինների մէջ հաւասար չափով գոյութիւն չունի. օր. մինչեւ Միացեալ Նահանգներում այդ բաժանումը լիւ գոյութիւն ունի, Նվելյացարիայի դաշ. մէջ վարչական ստորագրաժանումները մէկ են. կանոնական վարչական մարմինները վերցըրել են իրանց վրայ թէ կանոննի և թէ կենտրոնի հարանգները կատարելը։ Կան ճիշդը գործադիր իշխանութեան մէջ, որոնք պատկանում են դաշնակցական կառավարութեանը, և նա ունի դրանց համար ինստանցիաներ. դրանք են արտաքին գործոց, պոստ—հեռուգրական, մաքսային, գինու մենաշնորհի, աօլիտեխնիքական դպրոցի և արսենալների աղմինիստրացիան¹⁾, իսկ մնացած հարցերի վերաբերմամբ դաշնակցական օրէնքներ գործադրողը նոյն կանոնական աղմինիստրացիան է; այն չափով, որ չափով այդ կանոնական վարչական մարմինները մասնակցում են դաշնակցական օրէնքների կիրառման գործին, նրանք ենթարկում են դաշ. բարձրագոյն գործադիր մարմնի (դաշնակցական խորհրդի) հակողութեան²⁾։ հհարկէ, այստեղ էլ, մանաւանդ դատարանում, ինչպէս կտեսնեք, պատու-

1) Լույզը.—Правительства и политических партий въ Европѣ. Швейцарія, երես 363:

2) Նվելյացարական սահմանադրութիւն. յոդած 102 § 13:

հում են գործեր, որոնք կրում են իրենց վրայ անորոշութեան կնիքը, սրոնց մօտենում են և դաշնակցական, և նահանգամկան աղմինիստրացիաներն ու դատարանները. բայց այնումենայնիւ, օրէնսդրութիւնը պարզ որոշում է երկու իշխանութիւնների էլ ասպարեզները, և վերսպիշեալ դէպքերը բոլորովին ափական չեն, այլ բացառութիւն են կազմում։

Դաշնակցական և նահանգական օրէնսդրի մարմինները թէ և միմեանցից անկախ են, բայց նրանց դրութեան մէջ մի միանման մօմենտ կայ—երկուսն էլ ստանում են իրենց ոյժը սահմանադրութիւնից, երկուսն էլ ստորագրուած են նրան, երկուսի համար էլ այդ սահմանադրութիւնը լիազորութեան սահմաններ է զրել, երկուսն էլ անկարող են գուրս գալ այդ սահմաններից¹⁾, և միայն ժողովուրդն էլոր կարող է փափսել սահմանադրութիւնը։ Այդ սահմանները կարող են տարբեր լինել. օրինակ, Նվելյացարիայում դաշնակցական իշխանութիւնը աւելի ուժեղ է, և օրէնսդրութիւնը աւելի լայն (թէ և նրան մի նոր սահման դնում է ժողովրդական անմիջական օրէնսդրութիւնը), քան Ամերիկայի Միացեալ Նահանգներում։ Սովորաբար դաշնակցական օրէնսդրութիւնը ընդգրկում է ընդհանուր պետական քաղաքականութիւնն, ինչպէս և արտաքին յարաբերութիւն, ֆինանսներ, հաղորդակցութիւն, զինուրական գործ և դրանց հետ շաղկապած կամ դրանց ընթացքը պայմանաւորող օրէնըսդրական ճիշդերը։

¹⁾ Որպէս զի լինի լինի կենտրոնական օրէնսդրութեան տարածութեան պատկերը, առաջ կ'ըերենք այստեղ Միացեալ Նահանգների կոնգրէսի օրէնսդրական իրաւուքները. սահմանադրութեան I յօդածի § 8-ում թւած են այդ իրաւունքները.

Կօնգրէսը իրաւունք ունի. նշանակել և հաւաքել մաքսեր, տուրքեր, ակցիոն, վճարել պարտքերը և միջոցներ ձեռք առնել Միացեալ Նահանգների ընդհանուր պաշտպանութեան և բարեկեցութեան համար. բայց, բոլոր տուրքերը, հարկերը ակցիոնը ամբողջ Միացեալ Նահանգների համար պէտք է միատեսակ լինեն։ Փոխառութիւններ անել Միացեալ Նահանգների վարկի մի ջողով։ Կանոնաւորել վաճառականութիւնը օտար պետութիւնների, գանագան նահանգների և հնդիկ ցեղերի հետ։ Հաստատել միատեսակ կանոններ նախուրապահիայի վերաբերմամբ և միատեսակ օրէնքներ սնանկութիւն-

Գործադիր իշխանութիւնը և գատարանը նոյնպէս ունեն սահմանադրութեան մէջ որոշւած իրաւունքներ և գործունէութեան ասալարէզ¹⁾: Դաշնակցական պետութիւնների մէջ երեք իշխանութիւնների բաժանումը յաճախ աւելի լայն է տարած, քան կենտրօնացած սահմանադրական պետութիւնների մէջ՝ օրինակ, Միացեալ Նահանգներում կոնգրէսը և գործադիր իշխանութեան ներկայացուցիչը այն յարաբերութիւնների մէջ չեն միտէանց հետ, ինչ որ օրինակ անդիմական պարտումները և պրեմիսեր—մինխստը: Անգլիայում կարինենտը ամբողջովին կախւած է ներքին պալատի մեծամասնութիւնից և ինքն էլ գորեղ ազգեցութիւն ունի վերջինի օրէնսդրական գործունէութեան վրայ, մինչդեռ Ամերիկայում նախագահը ընդուռում է ժողորդից այնպէս, և այնպիսի ժողովրդական անմիջական ներկայացուցիչ է, ինչպէս և կոնգրէսի անդամները, գուցեգեռ աւելի վատահութիւն է վայելում: Նախագահը պարտաւոր է

„ ների մասին ամբողջ Միացեալ Նահանգներում: Դրամ կտրել,
„ որոշել ինչպէս նրա, այնպէս էլ օտար փողերի արժողութիւնը և հաստատել նօրմա՝ չափերի և կշռքի: Միջոցներ ձեռք
„ առնել Միացեալ Նահանգների թուղթ փողերի և գրամների
„ կեղծելու դէմ: Հիմնել պատոի գրասենեալիներ և շինել մեծ
„ պատաշին ճանապարհեր, խրախուսել գիտութիւնների և օգտագործել ինչպէս նրա, արթեստների զարգացումը, ապահովելով հեղինակներին
„ և գիւտ անողներին որոշ ժամանակով բացառիկ իրաւունք՝ օգտագործելու իրենց երկերից և գիւտերից: Հիմնել գատարաններ,
„ որոնք կանգնած պէտք է լինեն բարձրագոյն դատարանից ցատարանից ցած: Որոշել, ինչը պէտք է կոչւի ծովային առաջարկութիւն, բաց ծովի վրայ կատարած ոճիր, խախտումն միջազգային իրաւունքի և դրա համար ենթարկել
„ պատրի: Յայտարարել պատերազմ, տալ կատերների վկայականները և թոյլատութիւններ թշնամուց գերւած նաւերից
„ վերադառնալու մասին և հայտարակել կանոններ ծովի և ցած մոքի վրայ աւարի գրաւման մասին: Հաւաքել և պահել
„ գորք, բայց այդ բանի համար փողի յատկացնելը երկու

1) Մ. Նահանգների դաշնակութիւնը մարմնի մասին, սահմանադրամը, յոդ. II, § 2. Գատարան—յոդած III, § 2. Վլեյցարելիայում դաշնական իրոհրդի երաւունքը, սահմանադրամը, յոդ. 102; Գատարան—յոդած 110, 111, 112, 113, 114:

դեկայարւել կոնգրէսի մշակած օրէնքներով (որոնք նետօ-ի դէպարտմենտը էլ երկրորդ բարդ քւէարկութեամբ հաստատում են), և մանաւանդ սահմանադրութեամբ, բայց անմիջական կախում չունի կոնգրէսից և վարում է իւր ներքին վարչական քաղաքականութիւնը համաձայն սահմանադրութեան. նա ինքն օրէնքներ աւագանքել չի կարող, ոչ էլ մասնակցել և ազգել օրէնքը պարագան գործունէութեան վրայ: Ծնորհիւ այն բանի, որ մինիստրութիւնը անմիջական կապւած չէ և կախում չունի կոնգրէսից, ուստի և չի ներկայացնում մի միասնական հետեղողական քաղաքականութիւն, մինիստրութեան ուղղութիւնը յարմարւում է ոչ թէ կոնգրէսի, այլ նախագահի քաղաքական—կուտարուց աւելի ժամանակով չպէտք է որոշւի: Կազմել և պահպանել նաւատօրմը:
„ Կանոններ հարարակել վարչութեան և ցամաքային ու ծովագին զինուորական ոյժերի կազմակերպութեան համար:
„ Կարգադրութիւններ անել միլիցիա ժողովերու, դաշնակցութեան օրէնքները կատարելու, ասլատամբութիւնները ճնշելու և արշաւանքները յետ մղելու համար: Միջոցներ ձեռք
„ առնել միլիցիան կազմակերպելու, զիներու, կարգապահութեան մէջ կրթելու և նրա այն մասը զեկավարելու համար, որը կարող է գործադրել Միացեալ Նահանգներին ծառայելու համար,
„ թողնելով ամեն մի նահանգին սպաներ նշանակելը և միլիցիան կոնգրէսի առաջարկած կանոններով կրթել: Ամեն տեսակ գէոգրելում օգտուել բացառական իշխանութիւնից այն շրջանում (ոչ աւելի 10 քառակուսի մղոնից),
„ որը կարող է գառնալ Միացեալ Նահանգների կառավարութեան բնակատեղի, երբ մի որեկցէ նահանգ զիջումէ և կոնգրէսը ընդունումէ, այդ և օգտուել նոյնպիսի իշխանութիւնից բոլոր այն տեղերի վերաբերմամբ, որ գնւած են մի որեկցէ նահանգում նրա օրէնսդիր ժողովի համաձայնութեամբ, որը պէսզի կառուցւեն ամբութիւններ, խանութիւններ, արսենալներ և այլ անհրաժեշտ չինութիւններ: Հայտարակել ամեն տեսակ օրէնքներ, որոնք անհրաժեշտ և տեղի են թէ վերը լիցւած և թէ այլ իրաւունքներից օգտըւելու համար, որ այս սահմանադրութեամբ (ընդունումը մերն է) գրւած են Մ. Նահանգների կառավարութեան, կամ նրա մի որեկ գեղարտմանին կամ պաշտօնեալին: Կան և այլ երկրորդական յօդածներ, յօդ. IV, § 3 և այլն:

համոզմունքներին:

Նվէցցարիայում պատկերն այլ է. այնուեղ բոլոր պետական հիմնարկութիւնները, թէ օրէնսդրական, թէ գործադիր իշխանութիւնները նոյնպէս սահմանափակւած են իրենց իրաւունքների մէջ սահմանադրութեամբ, բայց, բացի դրանից, նրանց պետական գոյնը փոխում է շնորհիւ չափազանց յաճախ գործադրուող ժողովրդական օրէնսդրութեան (բնֆերենդում, նախաձեռնութիւն, ուետ): Հիմնական օրէնքները չեն կարող փոփոխել առանց ժողովրդական ձայնատւութեան, հետեւաբար կանունների և դաշնակցական իշխանութեան յարաբերութիւններ որոշողը, փէդէրատիւ սկզբունք պահպանողը, ինքը ժողովրդին է: Նոյրհիւ այդ գերագոյն իրաւունքի, Նվէցցարիայում թէ գործադիր և թէ մանաւանդ օրէնսդրական իշխանութիւնները երկրորդական դեր են կատարում: Այսաեղ արդէն չկայ (չնայած փէդէրատիւ կազմի) իշխանութիւնների այնպիսի խիստ բաժանումը և անկախութիւն, որ մատնացոյց արինք Միացեալ նահանգներում: Կաշնակցական խորհուրդը (գործադիր մարմինը) բաւական բազմատեսակ փունկցիաներ ունի, բայց դաշնակցական ժողովը (օրէնսդիր մարմին) միշտ յարմարութիւն և իրաւունք ունի հսկելու նրա գործանէութիւնը, թէև շնորհիւ յիշածս ժողովրդական ձայնատւութեան՝ պետական քաղաքականութեան բոլոր ճիւղերն էլ կորցը-ընել են իրենց մեծ նշանակութիւնը և հետաքըքրութիւնը: Այսպիսով դաշնակցական սիստէմը, որ Ամերիկայում սահմանադրութեան պաշտպանութեան տակ է գտնում, այսաեղ բացի դրանից իր ման-քամանութիւնների մէջ իսկ պէտք է ժողովրդի հաւանութիւնն ըստանայ: Այսուղից թէրես եղակացնէին, որ կենտրոնի և նահանգների յարաբերութիւնները փէդէրատիւ պետութիւնների մէջ անփափիւ են. սակայն դա թէրիմացութիւն կը լինէր. ժո-ղովրդը, որ առաջ է թէրել փէդէրատիւ պետական յարաբերութիւն, ինքն էլ սահմանել է միջոցները այդ տարաբերութիւնները փոփոխման ենթարկելու և նոյն իսկ աճնաղ սահմանադրութիւնը փոփոխու: Ամե-րիկայում որոշ պատմական հանգամնքներ այդ հարցը աւելի են բարդացրել, քան միւս դաշնակցական երկրներում: Այնուեղ կենտրօ-նական իշխանութիւնը միշտ կասկածի է ենթարկւած եղել ժողովրդի կողմից, և հէնց սկզբից նրան մօտեցել են կանխակառ կարծիքով, թէ նա ձգտելու է ստեղծել նախկին անդիմական ձնշող յա-րաբերութիւնները նահանգների հետ, թէ նա ձգտելու է իր իշ-

խանութիւնը դարձնել անսահման: Եւ նահանգական ազգայութիւնն նախանձախնդիր պատգամութերները 1787 թէի Ֆիլադելիայի համագումարում, ուր ուրագծւեց Միացեալ նահանգների սահմանադրութիւնը, այնպիսի պայմաններ մշտկեցին կենարօնական կառտվարութեան համար, որ նա, նախ գործնականագիւ շատ ուժեղ չլինի (նախագահի ժողովրդական ընտրութիւն, իշխանութիւնների ծայրայեղ բաժանում, անկախութիւն և այլն) և յետոյ՝ իրաւաբանօրէն դժւարութեամբ կարելի լինի փոփոխել սահմանադրութիւնը, մանաւանդ այն կետերը, որոնք վերաբերում են զաշնակցութեան և տեղական իրաւունքներին:

Սահմանադրութիւնը փոխելու համար հետեւալ օ-րէնքն ենք կարգում... «եթէ երկու պալամի ան-» դամների երկու երրոդականը կարևոր է գտնում, կօնդ-» րէսը պարտաւոր է առաջարկել սրբագրութիւնները » ներկայ սահմանադրութեան մէջ, կամ բոլոր նահանգների » երկու երրոդականի օրէնսդրական ժողովների ենդրուլ պէտք-» է հրաւիրի համագումար սրբագրութիւններ առաջարկե-» լու համար, որոնք երկու գեպքում էլ պարտաւորիչ ոյժ կու-» նենան իրեն այս սահմանադրութեան բաղադրիչ մասեր, » եթէ կհաստատւեն բոլոր նահանգների երեք քառորդի » օրէնսդրական մարմինների, կամ համագումարի կողմից, » որովհետև թէ այն և թէ միւս հաստատման, միջոցը կա-» րող է առաջարկել կօնդրէսի կողմից . . . բայցոչ մի նա-» հանգ առանց իւր ցանկութեան չպէտք է զրկել միւսների » հետ հաւասար իրաւունքից ձայն ունենալու սենատում:¹⁾

Այս է երեխ պատճառը, որ, չնայած հարիւր տասնեօթ տար-» այ զոյտութեանը սահմանադրութեան հիմնական կետերի մէջ շատ քիչ փոփոխութիւն է տեղի ունեցել: Եղած փոփոխութիւններն էլ վերաբերում են աւելի քաղաքական, գեմօլիպատական-սօցիալական հարցերին: Նոր մտցրած փաքրածիւ յոդւածների ձնշող մեծամաս-» նութիւնը ընդհանուր գեմօլիպատական հարցեր ևն չօշափում՝ անձի, բնակարանի անձեռնմխելիութիւն (յօդ. IV, V), երգւեալ-» ների զատարան (յօդ. VI), ճորտութեան վերացումը (յօդ. VII), և միայն X յօդւածը վերաբերում է դաշնուկցութեանը և նահանգների յարաբերութեանը, բայց հէնց նա էլ, ինչպէս երեւում է մոքից²⁾, ա-

1) Սահմանադրութեան յօդւած V

2) X յօդւածը, այն իրաւունքները, որ սահմանադրութեամբ չեն դրած Միա-» ցեալ նահանգներին և շնու առնւած նահանգներից, պատկանում են նահանգնե-» րին, կամ ժողովրդին».

ւելի կարգաւորում է այդ հարաբերութիւնները, թիւրիմացութիւնների առաջն է առնում, քան թէ սկզբունքային փոփոխութիւն է մտցնում սիստեմի մէջ:

Անմիջական օրէնսդրութեան բացակայութիւնը թէ ամբողջ դաշնակցութեան վերաբերող հարցերում և թ'է նահանգների պրակտիկայի մէջ բարդացընել է սահմանադրութեան փոփոխման հարցը: Այդպէս չէ նվեցյարիայում և Աւտորալիայում: Նվեցյարեայում ոչ միայն հիմնական, այլ և սովորական ընթացիկ օրէնսդրութեան մէջ ժողովուրդը վճռողական դիր ունի: 'Իաշնակցական սահմանադրութեան փոփոխման անհրաժեշտութեան վերաբերմամբ կայ երկու տեսակ հանապարհ: Կամ դաշնակցական ժողովը (կենտ. օրէնսդիր մարմնը) տուաշարկում է նվեցյարիայի ժողովրդին որոշել նախօրաք այն հարց, թէ հարկաւո՞ր է փոփոխութիւն մտցնել, թէ ոչ. դրական պատասխանի դէպքում կարող են առաջարկւել նախագծեր թէ օրէնսդրական մարմնի և թէ 30000 քաղաքացիների կողմից: Կամ փոփոխման անհրաժեշտութիւն յարուցանողը լինում է 50000 շվեցյարիացի քաղաքացիների ձայնը, և զործը ընթանում է փերի յիշւած ճանապարհով: Փոփոխութիւն մտցնողը նվեցյարիայի քաղաքացիների և կանոնադրութիւնների պարզ մեծամասնութիւնն է¹⁾:

Այդպիսով, անտարակլրյա, նրեցյարիայի պետական կազմը աւելի է վայելում ժողովրդի վսահութիւնը, քան մի որեէ այլ երկրի կազմ:

Աւտորալիայի դաշնակցական յարաբերութիւնները (օրոնց մասին յետոյ կիսունքը) փոփոխելու համար մօտաւորակէս նոյնն է հարկաւոր: Սահմանադրութեան § 128 ասում է, որ դա կախւած է «օրէնքի նախագծի ընդունելուց երկու պալատների²⁾ բացարձակ մեծամասնութեան կողմից և ներկայացուցիչների պալատի ընտրութիւններին ձայն տալու իրաւունք ունեցող ընտրողների հաւանութիւնից»:

Սա արգէն աւելի հեշտ է, թէև ոչ այնքան արգարացի, որքան նվեցյարիայում է, ուր այդ փոփոխութիւնը կարող է տեսի ունենալ առանց դաշնակցական օրէնսդիր մարմնի հաճութեան, միայն քաղաքացիների որոշ թւի ցանկութեամբ և առ աջարկութեամբ:

1) Սահմ. յօդ. 89, 118, 119, 120, 121:

2) Գլուխին գտնում է, որ կան դէպքեր երբ բաւական է միայն մէկ պալատի ընդունելը և ընտրողների հաւանութիւնը:

Բայց կայ բացի ժողովրդից և մի ալի ինսախոռուա, որ զբազւում է կենտրոնի և նահանգի յարաբերութիւնների (Երկրորդական, սահմանադրութիւնից բղխող) պարզաբանութեամբ և աւելի հեշտութեամբ և անահաւութեամբ է լուծում երկու իշխանութիւնների մէջ առաջ եկած տարածայնութիւնները, քան կարող են անել իրենք օրէնսդիր մարմիններն անմիջապէս: 'Իա դաշնակցական դատարանն է: Միացեալ նահանգներում նա մեծ դեր է կատարում. քընում է այն օրէնսդրական շփումները, որ կարող են տեղի ունենալ և տեղի են ունենում նահանգների և դաշնակցական իշխանութիւնների մէջ. նա կոչւած է բացարեկու սահմանադրութիւնը: Աչքի առաջ ունենալով դաշնակցական սահմանադրութիւնները, նա հսկում է, որ ոչ դաշ. և ոչ նահանգների սահմանադրութիւններն իրենց լիազօրութիւնների սահմաններից դուրս չգան: Հեղինակաւորութեան տեսակէտից, ինչպէս ճշմարիտ նկատում է Զեմս Բրայսը, Միացեալ նահանգներում կայ չորս տեսակի օրէնք. դաշ. սահմանադրութիւն (այսինքն հիմնական օրէնք), այդ սահմանադրութիւնից բղխող օրէնքներ կամ յօդւածներ, նահանգների սահմանադրութիւններ և նոհանգական յօդւածներ¹⁾: Դատարանն՝ կօնֆլիկտ եղած դէպքում՝ քննում է և երկու հակասող օրէնքները գասաւորում այս հերթի համաձայն, իսկ գրանից արգէն պարզում է, թէ որ կողմը պէտք է տեղի տայ: Խհարկէ, զըլիաւոր պայմանն այն է, որ օրէնքը համաձայն լինի դաշ. սահմանադրութեանը: Դաշնակցական դատարանն ունի իր ստորաբաժանութիւնները նահանգներում, որ նահանգներին գատարանների կոնքին զրադաւում է իւր սեփական գործերով: 'Իաշնակցական դատարանի իրաւասութեան սահմանները տարածւում են դաշ. օրէնսդրութեան ազդեցութեան սփերայի վրայ. ինարկէ, կարող է պատահել, որ նահանգներին դատարանն էլ քննի այնպիսի գործեր, որ միջնահանգական և դաշնակցական հարցեր են չօշափում, բայց նրանից կարելի է գործը տեղափոխել դաշ. դատարանը վերջնական լուծումն ստանալու համար¹⁾:

1) Սահմանադրութեան յօդ. III). մաս 2-դ պատմումէ դաշ. դատարանը նի իրաւասութեան մասին. „դատարանական իշխանութիւնը պէտք է տարածւի ըոլը գործերի վրայ... որոնք

2) Զեմս Բրայս. Ամերիկ. քըպութ. I հատոր, երես 274:

Կարեորագոյնն այն է, որ դատարանն անկախ է օրէնսդրական իշխանութիւնից և կարող է թէ նահանգական և թէ դաշ. օրէնսդրական մարմինների ակտերը յայտաբարել հակասող սահմանադրութեանը և գործադրութեան համար անընդունելի: Այս բոլորը ցոյց է տալիս, որ Մ.—Նահանգներում իշխանութիւնները (օրէնս. (գործադրի) ստորագաւառած են սահմանադրութեանը և իրենց ոյժը հէնց նրանից են ստանում: Մինչդեռ Անգլիայում պարզամենը վայերում է բացարձակ իշխանութիւն, որի համար հիմնական և երկրորդական օրէնքների տարրերութիւն չ'կայ և իր թէ արտայայտում է իւր մէջ ամբողջ անգլիական ժողովրդի կամքը, որը Դայսիի սրամիա նկատողութեամբ, կարող է նոյնքան հեշտութեամբ փոփոխել հիմնական օրէնքները, որքան և ատամնաբոյժներին վերաբերող կանոնները. Ամերիկայում նոյն կենարօնական օրէնսդրական ժողովը զուրկ է այդպիսի սուվերենիտետից և միշտ դեկապարւում է սահմանադրութեամբ, իսկ վերջ ի վերջոյ ժողովրդի արամադրութեամբ: Այս է պատճառը, որ Ամերիկայի Մ.—Նահանգներում հասարակական կարծիքը բոլորովին այլ նշանակութիւն ունի, քան Եւրոպայում:

Նվեյցարիայում դաշնակցական դատարանը, ինչպէս մէկ անդամ յիշեցի, նոյն նշանակութիւնը չունի դաշնակցութեան և կանոնի յարաբերութիւնները պարզելիս, քանի որ այդ գործին ակտիւ կերպով մասնակցում է դաշնակցական խորհուրդը (գործադրի արմինը), և, ամենազիմաւորն է վերջ ի վերջոյ այդ հարցերը վճռում են ժողովրդական անմիջական ձայնուութեամբ:

Կարող են առաջ դալ այս սահմանադրութիւնից, Մ.—Նահանգների օրէնքներից և այն պայմանագրերից, որոնք ընդունած են կամ կարող են ընդունել Մ.—Ն. կողմից. բոլոր գործերի վրայ, որոնք վերաբերում են զեսպաններին, այլ և լիազօրներին և հիւլատառներին. բոլոր գործերի վրայ, որոնք վերաբերում են և ծովային վարչութեանը, ծովային դատավարութեան այն, զատերին, որտեղ դատող կողմերից մէկը Մ.—Նահանգներն են, երկու կամ աւելի նահանգների մէջ անդինեցող գատերի վրայ այս և մի այլ նահանգի քաղաքացիների մէջ ծագած գատերի վրայ, երկու նահանգների քաղաքացիների մէջ... նահանգի կամ նրա քաղաքացիների մէջ մի կողմից և օտար պետութիւնների կամ նրանց քաղաքացիների կամ հպատակների՝ միւս կողմից:

Այս տեսակէտի վրայ կանգնելով, Զէմս Բրայսն ասում է. «Եւրօպատիցները սովորաբար ենթադրում են, որ Ամերիկական դատարանի գործունէութիւնը կարելի է և անհրաժեշտ է մի այն ֆէգերատիւ կառավարչական սիստեմի վերաբերմամբ»: Բայց այդ հնթագրութիւնը սխալ է: Հիմնական օրէնքի և աւելի ստորին կարգի օրէնքների միջն եղած տարրերութիւնը կարող է գոյութիւն ունենալ և կառավարչական այն միստեմի վերաբերմամբ, որը հիմնած է միութեան սկզբունքով: Վեց կերպայ: Նա գոյութիւն ունէր մինչև 1776 թիւը բոլոր 13 գաղութներում, գոյութիւն ունէր և 1776-ից մինչև 1789 բոլոր 13 նահանգներում, գոյութիւն ունի և այժմ բոլոր 38 նահանգներում: Եւ չի ել կարելի ասել, որ ամերիկական դատարանի վերև լիւած պարտականութիւնները կազմէին գաշնակցական կառավարչական սիստեմի էական անհրաժեշտութիւնը որսվէնտես, կարող էր գոյութիւն ունենալ և այնպիսի վերաբերման կամքային օրէնսդրական ժողովը տեսականապէս նոյնքան զօրեղ լինէր, որքան բրիտանական պարլամենտը. . . . որովհետեւ կօնքէգերացիայի բազագրիչ մասերը կարող են վրա տան լինել, որ, պահպանելով իրենց համար ընտրողների կրատունքը, նրանք կ'իշխեն օրէնսդրի ժողովի վրայ: Նվեյցարիայի օրինակը ցոյց է տալիս, որ ամերիկական սիստեմը միամբ չի կարելի համարել դաշնակցական կազմակերպութիւն միան միակ հնարաւոր օրինակը:»

Մենք գեռ աւելին կասենք: Պարլամենտի հզօրութեան կարիք կայ, բայց ինքը ժողովուրդը պէտք է հզօր լինի, անսահման իրաւունքներ ունենայ օրէնսդրութեան վերաբերմամբ: Ժողովրդական անմիջական օրէնսդրութեամբ ոչ միայն վերանում է դատարանի այդ արտակարգ գերը, այլ և անհրաժեշտութիւն՝ պալատի սենատի զգացւում չի նոյն իսկ վերին նահագների իրաւունքները պահպանելու վերաբերմամբ: Դաշնակցական պետութեան ընոյթը պահանջում է, որ սահմանադրութեան այն կէտերը, որ վերաբերում են նահանգների մէջ ծագած գատերի վրայ, երկու նահանգների սահմաններին, գոփոխման ենթարկւեն նահանգների միաձամանութեան համաձայնութեամբ:

Իւարկէ, սենատը (վերին պալատը) կըկորցնի իւր բացասական

արժէքը ժողովրդապետութեան տեսակէտից, եթէ նախ ընտրւի նոյն գերմօլրատիկ սկզբունքով, ինչպէս և պատգամաւորների պալատը¹), և երկրորդ՝ ձայնի իրաւունք ունենայ միայն նահանգների և կենտրոնի լիազօրութիւնները չշափող հարցերում: Բայց այդ գէպում անհրաժեշտութիւն էլ չկայ նրան ժողովելու. նահանգների մէջ ժողովրդական անմիջական օրէնսդրութիւնը շատ աւելի հեշտ կարտայայտի քաղաքացիների տրամադրութիւնը սահմանադրութեան վերև յիշւած՝ ինչպէս և բոլոր կէտերի վերաբերմամբ: Այս մասին մենք դեռ առիթ կունենանք խօսելու:

Գործադիքը մարմնի անկախութիւնը օրէնսդրականից (իշխանութիւնների ծայրայեղ բաժանումը) նոյնպէս ֆէդէրալիզմի անհրաժեշտ յատկանից չէ կաղմում: Շիլէյցարիայի օրինակը, ինչպէս տեսանք, գալիս է ապացուցելու հակառակը. այնտեղ դաշնակցական խորհուրդ՝ իրաւարանօրէն կախւած է օրէնսդրի մարմնից և նրանից էլ ընտրում է²⁾ և ոչ թէ Մ. Նահանգների նախագահի պէս ժողովրդից ընտրում է լայն ինքնուրիյնութիւն վայելում: Ես առաջի, թէ ինչո՞ւ Շիլէյցարիայում կառավարչական մարմինները կորցրել են իշխանց վճռողական նշանակութիւնը և ամբողջ հետաքրքրութիւնը կենտրոնացել է օրէնքի իսկական աղբեւր-ժողովրդի վերայ: Բայց մենք կարող ենք մի այլ ուշելի աշխի ընկնող օրինակ բերել, ապացուցանելու, որ դաշնակցական պետութեան մէջ կարող է գոյութիւն ունենալ անզիփական մինիստրութեան նման գործադիքը իշխանութիւն: Դա Աւստրալիայի դաշնակցութիւնն է:

Եթէ թողնենք անուշադիք մի առ ժամանակ Մեծ Բրիտանիյի և Աւստրալիայի մէջ պահողանող, որ արտայայտում է զեներալ նահանգականեր նշանակելու մէջ, որոնց իշխանութիւնը, ինչպէս և իւր անզիփական թագաւորի իշխանութիւնը և ազդեցութիւնը պետական կեանքի վերայ անւանական է, Աւստրալիան երևան կդայ իրեւ մի դաշնակցական պետութիւն: Բայց հակառակ Ամերիկայի Մ. Նահանգների և մասամբ Շիլէյցարեայի օրինակին, այսուեղ չկայ օրէնսդրական և դործադիքը իշխանութիւնների ժամանում և անկախութիւն: Կարինեալը ընդունում է պարլամենտի մեծամասնութիւնից

1) Օրինակ, ինչպէս Աւստրալիայում էր վերջին ընտրութիւնների ժամանակ.

2) Բայց նա չի կարող հրաժարեցնել լայ. խորհրդի անզամներին մինչև նրա ժամանակը լրացնալը, այդ պատճառով էլ է դաշ. խորհուրդն ընդունւած է անուանել կիսապարլամենտական դործադիքը հիմնարկութիւն:

և նրան պատկանող անդամներից: Այդ մինիստրութիւնը իւրացընէ և անզիփական սովորութիւնը ցընէլ և հրաւիրել պարլամենտը (և մինչ անգամ ունատը¹), մացնել օրէնքների նախագծեր ի հաստատութիւն, ներկայ ինել պարլամենտական նիստերին, կարգեր՝ որ բոլորին բացակայում են Ամերիկայում: Շիլէյցարիայում էլ թէն գաշնակցական խորհուրդը թշակում է նախագծեր և առաջարկում դաշնակցական ժողովին, բայց նա այսուեղ չափազանց կրաւորական դեր է խաղում, նա նոյն խոկ պարտական է իւր համազուունքների հետ չհաշտուող նախագծեր մշակել և օրէնսդրի ժողովի նիստում դուրս գալ այդ նախագծի դէմ. այնտեղ գաշ. խորհուրդը մի տեսակ պաշտօնեայ է, իսկ Աւստրալիայում մինիստրութիւնը ղեկավարում է օրէնսդրի մարմնի աշխատութիւնները: Այդպիսի մի կատարեալ դաշնակցական երկու իշխանութիւնները կապւած են միմեանց հետ. կարինեալը ստանում է իր ոյժը պարլամենտի մեծամասնութիւն կազմող կուսակցութիւնից և ընկնում է նրա հետ, կամ նրա վատահութիւնը կորցնելուց յետոյ. իսկ և իսկ Անգլիայի կարինեալը պէս:

Աւստրալիայում ոչ միայն գործադիքը իշխանութիւնը, այլ և օրէնսդրականը խիստ կերպով տարբերում է Ամերիկայի մեծ ֆէդէրալիայի կօնդրէսից և ցոյց է տալիս որ վերջինը չի կարելի տիպ համարել առհասարակ դաշնակցական օրէնսդրի մարմնի: Առաջին՝ Աւստրալիայի պարլամենտի իրաւունքները տարածւում են սահմանադրութեան մի քանի կէտերի վրայ (ի հարկէ ոչ այն կէտերի, որոնք նահանգների և իւր իրաւունքների սահմանադրիծն են որոշում), և իւր սովորական օրէնսդրական նախապահով նա կարող է փոփոխել այդ կէտերը: Սահմանադրութեան ծլ յօդ. սահմանադր. լրաւունքները թւելիս չ 36-ում տառում է. Անյն ամենը, ինչ որ կազմում է ներկայ սահմանադրութեան որոշումների օրինեկտ, մինչև որ պարլամենտը այլ կերպ կտնօրինէ»: և երկրորդ՝ նա չունի կօնդրէսի թուլութիւնը օրէնսդրական գործերում, կօնդրէսի պէս երկուութիւն (սենատ և պատգամաւորների պալատ):

Կօնդրէսում պատգամաւորների պալատը շատ դէպքերում աշեմ թոյլ է գործում, քան սենատը. մի հանգամանք, որ ունի զուտ ոպերիֆիկ ամերիկական պատճառներ. այդ բանը չի նկատում նաև

1) Даиси. Основы госуд. права Англии. երես 586.

Նվէցաբիայում, ուր կանտօնական խորհուրդը շատ աւելի երկրորդական տեղ է բռնում, քան ազգային խորհուրդը (Ներկայացուցիչների պալատը): Եթէ այս բոլորից յետոյ մտարերենք, որ սահմանադրութեան փոփոխման հարցը ուելի հեշո և նօրմալ կերպով է կատարում (ժողովրդական ձայնաւութիւն), կհամոզւենք, որ Մ.-Նահանգների պետական կազմի շատ գծերը ունեն զուտ ամերեկական ծագում:

Ընդհանրապէս ուրիշն պէտք է տարբերել ֆէոէրատիւ պետութեան ընդհանուր գծերը պատահական, կամ տեղական պայմաններին առանձնայատուկ գծերից. հիմնական գծերն են պետական փունկցիաների բաժանումը նահանգների և կենտրոնական կառավարութեան միջն և սրանց իշխանութիւն ունենալը սեփական իրաւունքով. ժողովրդի գերիշխանութիւնը երկուսի էլ վրայ, հիմնական և առվրական օրէնքների տարբերութիւնը և առաջինների փոփոխումը ժողովրդի մասնակցութեամբ և հեղինակութեամբ: Պատահական և տեղական-պատմական ծագում ունեն իշխանութիւնների ծալրայի բաժանումը (օրէնսդրական, գաստարանական և զործադիր), դպատարանի արտակարգ գերը, երկարական սիստեմը և սենատի օրէնսդրական գործունէութիւնը պատպամաւորների պալատի հետ միախին և այլն:

Գաշնակցական պետութիւնը կարող է յաճախ օժտւած լինել պատմական այլանդակութիւններով, օրինակ գերմանական կամ կայսերական չէ, որ դաշնքը կուած է ոչ թէ ժողովուրդների, նահանգների, այլ «մեծութիւնների մէջ» (Նորին Մեծութիւն Պրուսիայի թագաւոր, Ն. Մեծութիւն Բաւրբայի), գեռդաշնակցութիւնն էլ առաջ է բերել քաղաքական խորոք անհաւասարութիւն շնորհիւ. Պրուսիայի հեղեմոնիայի ամբողջ գաշնակցական խորհրդի (վերին պահական) մէջ ունի 17 ձայն, այնպէս որ երեք միւս պետութիւնների հետ մեծամասնութիւն կարող է կազմել (ընդամենը 25 պետութիւն է 58 ձայնով): Բացի գրանից, մի առանձնայատկութիւն էլ ունի զերմանական այդ գաշնակցական խորհրդով. այդտեղ ձայների բաժանումը միենոյն պետութեան ներկայացուցիչների մէջ չի թողարկում և նրանք գալիս են խստրուկցիաներով իրենց կառավարութիւնների կողմից. սա, ինարկե, մեղ յիշեցնում է պետութիւնների գործաշնակցութիւնը, որ կինտրօնական ներկայացուցչութիւնը գործ

ունի ոչ ժողովուրդների, այլ կառավարութիւնների հետ: Այնպէս որ դերմանական կայսրութիւնը կարելի է համարել ինչ որ միջին բան, խառնուրդ պետութիւնների դաշնակցութեան և դաշնակցութեան:

Առաջինը արտայայտում է դաշնակցական խորհրդի բնաւորութեան մէջ, իսկ երկրորդը սէյսուտագի և օրէնսդրութեան զուտ պետական (և ոչ միջնողացին-իրաւական) նշանակութեան մէջ:

III.

Մեզ թւում է, որ այժմ դաշնակցական պետութեան իրաւարանական ստրուկտուրան (յօրինածքը) որոշ չափով պարզւած է. թէ նրա տարբերութիւնները ունիդար պետութիւնից և պետութիւնների դաշնակցութիւնից, թէ նրա ներքին օրէնսդրական ձևերը և թէ պետական երկու տեսակի իշխանութիւնների յարաբերութիւններն ու լիազօրութիւնները: Մենք կարող կիննենք անցնել ապակենարկութան ու լիազօրութիւններին, որից յիշոյ արդէն կանցնենք մեր ուսումնասիրութեան հետեւել մասերին, որտեղ պէտք է խօսննք դաշնակցական տեսակետից, որպէսզի վերջապէս անցնէինք ընդհանրապէս ապակենարկութան գնահատութեան գենուկրատիայի և ացիալիգամի տեսակետից, եթէ կցանկանացնք այսակ մի քանի խօսքով կանգ առնել ժամանակակից ամենատիպիր և հանրածանօթ ֆէկերացիաների ընդհանուր իրաւական պետական ստրուկտուրայի վրայ: Խոկապէս մեր յայտնի են երկու խակական ֆէկերացիաները (եթէ չաշւենք նոր ուժարձի մասը ֆէկերացիաները): Ամերիկայի Միացեալ-Նահանգները և Շվեյցարիան: Աւստրալիան, Կանադան թէկներքին կեռնքում նոյնական ֆէկերացիաներ են, բայց նրանց ընդհանուր քաղաքական դրութիւնը խառնուրդ է ներկայացնում ֆէկերացիայի և աստակենարկութան պետութեան առանձնում զաւառների: Գերմանիայի հակառականակցական տէրութիւնների վրայ մենք արգէն կանգ ենք առել:

Ամերիկայի անզիւտական գաղութները անշատելով Մեծ Բրիտանիայից մի քանի գարանումներից յիշոյ սանդեցին ներկայ Միացեալ-Նահանգները 1789 թւին, որը ծառացեց իրեւ տիպ ֆէկերացիայի յետագայ դաշնակցութիւնների համար: Նահանգները մէկը միւսի յետեից միացան դաշնակցութեան և այժմ նրանց թիւը հասնում է 38-ի, որոնցից ամեն մէկը ունի իր անկախ օրէնողա-

կան մարմինը, որոնց կազմը, ընտրւելու սփռումը որոշողը ինքը նահանգն է: Բոլորը հանրապետութիւններ են (և իրաւունք էլ չունեն այլ ձև մարդու), դաշնակցական կամ ազգային¹⁾ կառավարութիւնը հետեւալ կազմն ունի, օրէնդրական ժողով կամ կօնդրէս, որ բարդկացած է երկու պալատից՝ ա) սենատ, որ կաղմաւած է նահանգների ներկայացուցիչներից (երկու-երկու ամեն մէկից), որոնք ընտրում են 6 տարու և որոնց կազմը երկու տարին մէկ անդամ նորոգում է մի երրորդական մասով, և բ) ներկայացուցիչների պալատ, որի անդամներն ընտրում են երկու տարով բոլոր նահանգներից արդէն իւրաքանչիւր նահանգի ազգարնակութեան թւի համեմատ: Այդ երկու ընտրութիւններն էլ կատարում են նահանգների առնմանած ընտրողական օրէնքների համաձայն և նրա վարչական միջոցներով: Կօնդրէսը, որի օրէնուրական իրաւունքները սահմանափակւած են անդամնաթիւնութեամբ, անմիջական կապ չունի գործադիր իշխանութեան հետ, որի ներկայացուցիչը Մ.-Նահանգների նախագահն է: Աաիւր փոխնախագահի հետ ընտրում է ժողովրդի կողմից չորս տարով, ընտրութիւնները երկաստիճան են: Նախագահի իշխանութիւնը բառական լայն է, նա Մ.-Նահանգների բոլոր զօրքերի հրամանատարն է, նա է նշանակում բոլոր պաշտօնեաններին, բարձրագոյն գոտարանի անդամներին սենատի համաձայնութեամբ, արտակարգ գէպիշերում նա գումարում և յետաձգում է կօնդրէսի ժողովները: Նա կարում է կօնդրէսի մշակած օրինագծերին հաւանութիւն չուալ, որոնք ժամանակակից քրէպիկութիւնից յետոյ ($\frac{2}{3}$ մեծամասնութեամբ) անկախ նրանից օրէնքի ոյժ են ստանում: Ոչ նախագահը, ոչ նրա մինիստրները ներկայ չեն լինում կօնդրէսի ժողովներին և միայն դրաւոր կերպով թոյլ յարաքերութիւն են պահպանում: Գործադիր իշխանութիւնն ունի իւր բոլոր ստորաբաժանումները նահանգներում: Դաշնակցական գատարանը կազմաւած է բարձրագոյն գտարանից և նրա ստորաբաժանումներից: որանց պարտավանութիւնների մասին խօսել ենք իւր անդում: Դատաւոր

1) Թէ ոքան Մ.-Նահանգների ժողովուրդները իրենց մի ազգ են համարումնոյն իսկ պիտակն մարզով, և է Զէմն նըայսի բերած հետեւաւ հետաքրի դիպլոմական մարզով, Սմէրիկայի բոլորը հկեղեցու հպիսկոպոսները իրենց համադպումութարարի համար մի նոր ազօթք էին ուզում աւելացնել, որ մէկի առաջարկութարարի պատարացի համար մի նոր ազօթք էին ուզում ավագանութեան պարագաները պարագաների է սկսէր այսպէս, ո՞էքր, ողորմեա մեր ազգին. բայց ծխականները բոլորի էին այդ գարձւածի դէմ, որ շեշտամ է ազգային միավեան սկզբունքը և գարձւածը փախէլ էր այսպէս, ո՞էքր, ողորմեա այս Միացեալ-Նահանգները, Զէմն թքայո, Տ. երես 12:

ները անփոփոխելի են և միայն կարող են դատի հնֆարկւել: Սահմանադրութեան փոփոխման մասին խօսւել է: Ամբողջ պիտութեան մէջ տիրում է ժողովրդի գերիշտանութեան գիտակցութիւնը և հասարակական կարծիքի ծանրութիւնը. կոնֆիդենտները իշխանութիւնների մէջ սակաւաթիւ են գուցէ հէնց այդ պատճառով: Պիտութիւնը, եթէ ազատի մի քանի վարչական թերութիւններից, լայն դեմքութափայի պատկեր կներկայացնի:

Ծիլցաւխան, որ բազկացած է 22 կանոններից խոր դիմոկրատիական պիտական կարգերը մշակել է շատ հին ժամանակներից. Նապոլէօնի աշխարհակալութիւնը խախտեց ժամանակաւորաբէս այդ կարգերի նօրմալ զարգացումը որ հորից սկսեց 48 թւի ոնկատար գաշնակցութեամբ և վերակազմուց 72-ին, երբ ժողուաց վաշնակցութեան մէջ ժողովրդական անմիջական օրէնսդրութեան իրաւունքը (referendum), որ մինչև այդ ժամանակ իւր երեք ձեւրագում (referendum, veto, նախաձեռնութիւն) զործադրում էր միայն կանոններում:

Կանոնների մասին չենք խօսի, բոլորն էլ ի հարկէ հանրապետութիւններ են. օգտում են զանազան ձևերով ժողովրդական օրէնսդրութեամբ, չնորհիւ մասնակի իրենց փարրաթիւ պազարնակութեան, որ յաճախ մի քոնի տասնեակ հազարից չի անցում:

Գաշնակցական օրէնսդրի ժողովը (գաշնակցական ժողով) բաղկացած է երկու պալատից՝ կանոնական խորհուրդ (Մ.-Նահանգ. սենատը) հաւաքել է կանոնների ներկայացուցիչներին երկու-երկու ամենից. առ ինչպէս յայտն է, այն խոշոր դերը չի խաղում պետութեան կեանքում, ինչ որ սենատը Ամերիկայում: Ազգային խորհուրդն ընտրում է բոլոր կանոններից ազգարնակութեան թւի համեմատ: Մրանց օրէնսդրական գործունէութեան մասին խօսւել է: Հնարեւում է զաշտոպվե երեք տարով: Աւելի հետաքրի է դաշնակցութեան զործադրի մարմինը—զաշ: Խորհուրդը: Աս ընտրում է զաշ, ժողովի կողմից, երբ նա առաջին անգամ հաւաքւում է խօսը, երկու պալատների կողմից, բաղկացած է եօթ հզուց, որոնցից մէկը համարւում է թէ խորհրդի և թէ նիլցաւարիայի նախագահ: Խորհրդի զործունէութիւնը շատ բաղմատեսակ է, նաև գարչութեան վլուխ է, և շատ դէպիշերում բարձրագոյն գատարանական ինստանցիա է: Նա հոկում է կանոնական սահմանադրութիւնների և օրէնքների օրինականու-

թեանը դաշնակցական սահմանադրութեան տեսակէտից, այսինքն մասամբ իտարառում է Ամերիկական գասարանի գերը: Դուզովը, որ ընտրում է սրան, չի կարող հրաժարեցնել մինչև ժամանակը լրանալը, խորհրդի կուսակցական գոյնը առանձին նշանակութիւն չունի, որովհետեւ վերջ ի վերջոյ թէ նա, թէ նրա ընտրողը յարմարւելու են ժողովրդին, որ իւր օրէնդրական իրաւունքով անխոնջ հսկում է նրանց և դարձրել է իշխանութիւնը խոկանէս իրեն համար հրու ծառաներ—զործակալներ:

Դործադիր մարմինը չունի բայն ստորաբաժանումներ, որովհետեւ դաշնակցական օրէնքները և կարգադրութիւնները կանոններում կատարում են կանոնական ժարշութիւնները:

Դաշնակցական գասարանը որ ընտրում է դաշ. ժողովի կողմից վեց առաջի, այն նշանակութիւնը չունի, ինչ որ Մահանդութեանը: Այսաեղ սրա աշխատակիցն է մի կողմից դաշ. խորհուրդը, միւս կողմից հէնց ինքը դաշ. ժողովը. բայց դարձեալ նա զբաղում է շատ գատերով, ոլետական գաւաճանութեան, քրէտական, միջկանտօնական և կանոն-դաշնակցական և այլն: Բայց ամենազբանչելի պիտակուն ինստիտուտը, որ գոյութիւն ունի Շվեյցարիայում, գտանմիջական ժաղովրդական օրենստուրին և Շվեյցարիայում կանկանոններ, որմէն ներկայացնում են անմիջական հանրապետութիւններ (օր. Աւրի, Աւնդերվալդէն, Ապպենցէ), օրէնսդիր ժողովը քոլովը քոլովին ձայն ունեցող քաղաքացիների ժողովն է, որ քննում է ամեն մի քաղաքացու առաջարկած օրէնքի նախադիք, կատարում

ընտրութիւններ պաշտօնեաների, խոչը գատեր և այլն: Սրանք ընականաբար ամենափոքր կանաօններ են, մնացոծները ներկայացնացական սիստեմ ունեն, բայց բայն չափով օգտուում են ժողովրդական օրէնստութեամբ: Ժողովուրդը ինքը օրէնքներ չի մշակում, այլ առաջարկւած (օրէնսդիր մարմնի՝ որոշ թւով քաղաքացիների կողմից) նախադերին դրական, կամ բացասական պատասխան է առին: Արոշ օրէնքների վերաբերմում referendum-ը կարող է լինել պարագագիր (օր. սահմանադրութեան փոփոխութը), խոկ մնացածների (օր. սահմանադրութեան փոփոխութը), խոկ մնացածների վերաբերմամբ ֆակտուլտատիվ, այսինքն ժողովրդի կողմից գաղանջ եղած դէպրում: Այս իրաւունքը երկար ժամանակ գոյութիւն է ունեցել կանոնաներում, խոկ վերջերս (1872-ից) առաջաւել է պաշտական օրէնսդրութեան վրայ, թէ ինչ ազգեցութիւն ու դաշնակցական օրէնսդրութեան վրայ:

Նի ժողովրդական քւէտրկութիւնը պետական այլ հիմնարկութիւնների վրայ, մենք արգէն տեսանք:

Աւստրալիայի, Կանադայի մասին մենք պէտք է անցնենք ապակինարօնացած պետութիւնների աւտոնոմ գաւառների իրաւական դրութեան և պետական ստրուկտուրային:

IV.

Մենք մի անգամ առիթ ունեցանք անցողակի կերպով ակնարկելու, որ վասարական պետութիւնը խասա կերպով տարբերում է աւտոնոմ գաւառից, և մենք նկատեցինք, որ վասարական և սեղակըն պետութիւնների մէջ պետական ընդհանուր կազ չկայ, բացի այսպէս տած, անզական էկզեկուցիալից, որ կարող է արտայայտել հարկի, կամ այլ պարտականութիւնների մէջ, այն ինչ աւտոնոմ գաւառը բազմատեսակ կապերով կապւած է կենտրոնի հետ, ունի յաճախ ազգեցութիւն նրա ընդհանուր քաղաքականութեան վրայ:

Ինչ վերաբերում է դաշնակցական պետութեան և մի ապակենուրօնացած պետութեան մէջ եղած նմանութեան և տարբերութեան, այսաեղ արգէն հարցը աւելի նուրբ է և ուշադրութեան արժանի: Մենք յաճախ խում ենք ուստական աջակողմից, որ կենաստանին աւտոնոմիս տալ կնշանակի բաժանել նուստատանը, խախտել պետութեան միութիւնը:

Այս եղակցութիւնը թէե տգիտութեան և շովինիզմի հետ կապ ունի անմիջապէս, բայց այնուամենայնիւ իր բացարձակ զըրութեամբ, առանց հանգամանքների վերցրած, լուրջ մտքի ձև է առանում: Այզպէս է արգեօք: Ապակինարօնացած պետութիւնը մէկ պետութիւն է, թէ միքանի¹⁾, աւտոնոմ գաւառի հիմնարկութիւնները պետական են, պատկանում են ամբողջ պետութեան, թէ ոչ: Այս երկու հարցերին էլ միատեսակ չի կարելի պատասխանել, որովհետեւ ապակենարօնացած պատասխանական կամ ապակենարօնացած բազմատեսակ աստիճաններ ունի, բազմաթիւ և ճոխ

1) Մեզ համար, ինարկէ այս բալորը նախապաշարումներ են. լինի մէկ պետութիւն, անզի ունենայ բաժանում, որոնք չեն կարող մեր վերաբերմունքը դէպի պետութեան ապակենարօնացումը և ֆեդերալիզմը փոխել, քանի որ մենք զեկովարութեամբ: Մեզ համար, ինչպէս կտանենք, պետական ձևելը արգելու առաջարկանուացած բուրժուականութեամբ: Մեզ համար, ինչ-

իր մաղիքիկացիաներով, և սկառմութիւնը չի տալիս ապակինաբօնացման երկու օրինակներ:

Նախ և առաջ հարկաւոր է պարզել, թէ այսանդ ինչպէս ենք հապկանում ապակինաբօնացումը: Կարող է լինել երկու տեսակէտայդ հարցի վերաբերմամբ: Կարելի է ընդունել ապակինաբօնացումը մի ընդհանուր հասկացողութիւն, ընդհանուր պետական կատեգորիա, առաջին աստիճանները կկազմեն վարչական ապակինաբօնացումը (նայնպէս իր աստիճաններով), որին կհետեւն օրէնսդրական ապակինաբօնացման գանազան աստիճանները, և սակաւաթիւն այն գէպերը, երբ միայն վարչական ապակինաբօնացման կողմանիները թիւրիմացութեան մէջ են թողել հասարկութեան անպատրաստ շրջանները ապակինաբօնացման և մանաւանդ “ինքնափարութեան” վերաբերմամբ:

Վարչական ապակինաբօնացումը օրէնսդրականի նախընթաց աստիճանը համարել, անհիմն է այն հասարակ պատճառով, որ թէ իրաւաբանօրէն և թէ լոգիկապէս օրէնսդրական ֆունկցիան պէտք է կանխի վարչականինը, զործադրականինը, որը առաջինի կիրառման, արտայայտութեան պրօցեսն է միայն. իսկ պրօցեսը շփոթել, կամ հետեղական կոտոր կապել նրա բովանդակութեան հետ, քաղաքական այսպէս ասած, սուրասանցիայի հետ չի կարելի և ոչ մի դէպքում:

Ի հարկէ, գեմօկրատիվացիոյի տեսուկէտից չպէտք է լինի մէկը առանց միւսի. բայց հէնց տեղական օրէնսդրական զործունէութիւնը անհրաժեշտ կրածնի տեղական վարչական ինքնուրացնութիւնը, որովհետեւ կենաբօնական կառավարութեան օրէնքներ կիրառող վարչական հիմնարկութիւնները անընդունակ լիինին տեղական օրէնսդրութեան յարմարել: Բայց այդ կենաբօնական օրէնսդրութիւնը կիրառելու համար ինչքան էլ ապակինաբօնացման մէջ ձգութ: Այսպէս կենաբօնացման կողմնակիցները կամեցան վարչական ինքնափարութիւն ճանաչել և հաշոեցնել քաղաքական կենաբօնացման հետ:

Ոյդ բանն արգէն երկրութեամ կիրառւել է: Բայց ընդգուած գնալով (կամ ստիպւած լինելով գնալ) տեղական պահոնցներին, նրանք անհրաժեշտորէն ծանօթացել են և մի այլ պահանջի հետ, որ արգէն ընդունւած պետական գաղափարին հակառակ է: Եւրոպական երկրներում մեծ պետութիւններ առաջ բերելու տենդենցի հետ զուգընթացաբար, և մանաւանդ այս սկզբունքի որոշ չափով իրականանալուց յետոյ առաջ է եկել մի այլ տենդենց. քաղաքական կեանքը, նրա Փօրմակ արտայայտութիւնները գարձնել ոչ միայն կենաբօնի, այլև ամբողջ պետութեան և նրա բոլոր տարբերի սեփականութիւն. Երկիրը իր ամբողջ բարդ Փիլինոնոմիայով պէտք է անդրադառնայ պետական կազմի և օրէնսդրութեան վրայ, իսկ դրա համար միանգամայն անընդունակ է կենաբօնացումը:

Ոյժմ, կարծում եմ, պարզ կլինի, թէ վարչական և քաղաքական ապակինաբօնացման¹⁾ մէջ ինչպիսի հետեղականութիւն կայ. այդ կապը այսպէս ասած պատմական է և ոչ իրաւաբանական և լոգիկական:

Երկար կանգ տանել վարչական ապակինաբօնացման վրայ մեր նպատակից դուրս է:

Այդ իսկ պատմենտորօնացումը ունի զանազան աստիճաններ, նայած թէ կենաբօնական կառավարութիւնը որբան է միջամտում և աղդում ինքնափարութեան վրայ: Կարելի է սաեղծել նոյն իսկ այն-

նացման սկզբունքը այլ, աւելի պրիմիտիվ պետական համելացողութեամբ, ինչպէս տեսանք, զոյութիւն ունէր չին աշխարհում (օրէգերէն—վասալական յարաբերութիւն), պահել է մինչև եւրոպական արուոլիտիզմի յազթանակը ֆեոդալականութեան վրայ, որով յազթանակել է պետութեան կենաբօնացման դադափարը ժամանակակից: Այց հէնց այդ կենաբօնացումը, նրա պրօցեսը ապացուցեց, որ առաջինը բառի իսկական մտքով ոչ մի տեղ կենաբօնացումը կատարեալ ափրափետութիւն չի արել և ինքնափարութիւնը չի վերացել, այլ զոյութիւնը պահապանել է չճանաչւած անհրաժեշտութեան այս կամ այն այլանդակուած ձեռվլ: Ապա կենաբօնացման կողմնակիցները կամեցան վարչական ինքնափարութիւն ճանաչել և հաշոեցնել քաղաքական կենաբօնացման հետ:

Ոյդ բանն արգէն երկրութեամ կիրառւել է: Բայց ընդգուած գնալով (կամ ստիպւած լինելով գնալ) տեղական պահոնցներին, նրանք անհրաժեշտորէն ծանօթացել են և մի այլ պահանջի հետ, որ արգէն ընդունւած պետական գաղափարին հակառակ է: Եւրոպական երկրներում մեծ պետութիւններ առաջ բերելու տենդենցի հետ զուգընթացաբար, և մանաւանդ այս սկզբունքի որոշ չափով իրականանալուց յետոյ առաջ է եկել մի այլ տենդենց. քաղաքական կեանքը, նրա Փօրմակ արտայայտութիւնները գարձնել ոչ միայն կենաբօնի, այլև ամբողջ պետութեան և նրա բոլոր տարբերի սեփականութիւն. Երկիրը իր ամբողջ բարդ Փիլինոնոմիայով պէտք է անդրադառնայ պետական կազմի և օրէնսդրութեան վրայ, իսկ դրա համար միանգամայն անընդունակ է կենաբօնացումը:

Ոյժմ, կարծում եմ, պարզ կլինի, թէ վարչական և քաղաքական ապակինաբօնացման¹⁾ մէջ ինչպիսի հետեղականութիւն կայ. այդ կապը այսպէս ասած պատմական է և ոչ իրաւաբանական և լոգիկական:

Երկար կանգ տանել վարչական ապակինաբօնացման վրայ մեր նպատակից դուրս է:

Այդ իսկ պատմենտորօնացումը ունի զանազան աստիճաններ, նայած թէ կենաբօնական կառավարութիւնը որբան է միջամտում և աղդում ինքնափարութեան վրայ: Կարելի է սաեղծել նոյն իսկ այն-

1) Ներկայ ուսուական նահանգները իրենց սատրապներով արդպիսի լայն «ապակինաբօնացում» են ներկայացնում:

պիսի արգակենտրոնացում, որ ինքնավարութիւն բոլորովին չի լինի. վարչական հիմնարկութիւնները, ադմինիստրացիան կարող են վայելել շատ լայն ազատութիւնն կենտրոնի վերաբերմամբ, մնալով նրա միակ ներկայացուցիչը և նշանակուելով նրա կողմից:

Ներսպայում գոյութիւն ունի երեք տիպ վարչական ապակենտրոնացման՝ ֆրանսիական, գերմանական և անգլիական: Առաջինը ներկայացնում է ինքնավարութեան նւազագոյն աստիճանը, այնտեղ համարեած բոլոր տեղական գերատուական պաշտօնեաները նշանակուին են, ամենափատ միջամտութիւն կայ կենտրոնի կողմից տեղական գործերին, Գերմանականը մէջտեղն է բոնում, ինքնավարութեան պաշտօնեանների խումբը բազմած է մասամբ ընտրովի, մասամբ նշանակուի պաշտօնեաններից և համեմատարար, ֆրանսիականից աւելի մօտ է ժողովրդին: Վերջապէս աւելի կատարեալ է Անգլիական ինքնավարութիւնը, որ ժողովրդի ընտրուածների ձեռքին է գտնում (Անգլիայում ինքնավարութեան դեմոկրատիզմիան, սկզբում կազմւած էր արիստօկրատուական խաւերից, բայց գարձեալ ընտրովի էր), և այդ ինքնավարութեան փունկցիաներն ել շատ աւելի լայն են, քան թէ կոնտինենտի վրայ:

Մեզ հետաքրքրողը այստեղ օրէնսդրական, կամ քաղաքական ապակենտրոնացումն է: Եթէ մէկ պետութիւն ասելով, հասկանում ենք մէկ ընդհանուր տերրիտորիայի ընդհանուր քաղաքացիութիւն և ընդհանուր գերիշխանութիւն (սւերելութեան) պետութեան մէջ, այդ գէպօւմ, ի հարկէ, նոյնիսկ ամենալայն ապակենտրոնացած պետութիւնը մէկ է և անբաժան, բայց մէկ սկսութիւնից կարելի է ուահանջնել, որ նա բացի սուվերենեատեալից, կենտրոնացնի և քաղաքական և պետական փունկցիաները, որ բոլոր օրէնսդրատիւն հիմնարկութիւնները պատկանեն ամբողջ պետութեանը: Այդպիսի պահանջներին ի հարկէ ապակենտրոնացած պետութիւնը անկարող կլինի բաւարարութիւն տալու: Աւտոնոմ գաւառները թէկ ընդհանուր պետութեան մի մասն են կազմում, բայց նրանց օրէնսդրական և այլ հիմնարկութիւնները պատկանում են ոչ կենտրոնին, ոչ ամբողջ պետութեանը, այլ իրենց՝ աւտոնոմ գաւառ ներին: Օրինակ Աւտորայիշի գաղութներից մի որ և իցէ Վիկտորիայի պարյամենտը պատկանում է ոչ բրիտանական կայսրութեան, այլ իրեն Վիկտորիային: Նա կարող է գերիշխանութիւն չունենալ, կարող է զործելու իր սեփական իրաւունքով, այլ Միարօպոլիայի, կարող է միշտ գտնւել

նրա աշակերծ հոկողութեան ներքոյ, բայց նրա պարլամենտը միայն աւտոնոմ գաղութի պետական կեանքի արտայացութիւնը կմնայ:

Մենք նոր յիշեցինք սեփական և ոչ-սեփական իրաւունքի մասին: Այսակեղից կարելի է սկսել աւտոնոմիայի բնաւորութիւնը պարզելու համար: Գաւառը իւր օրէնսդրական փունկցիաներից օգտուում է ոչ սեփական իրաւունքով (իրաւաբանօրէն և յաճախ պատմականօրէն նա չէ ունեցել այդ իրաւունքը), այլ կենտրոնի համաձայնութեամբ, որը լիսպոր է որոշերու իւր և գաւառի յարաբերութիւնները: Այսուղի է զիսաւոր իրաւաբանական ապրելութիւնը զաշնակցութեան անդամ պետութեան և աւտոնոմ գաւառի մէջ: Բացի դրանից կենտրոնական կառավարութիւնը միշտ հակում է գաւառի ներքին գործունէութեան, և, եթէ ոչ վաստօրէն, գոնէ իրաւականօրէն կարող է միշտ խառնւել նրա գործերին, սահմանափակել և նոյն իսկ յետ վերցնել ուած ինքնավարութիւնը, այն ինչ դաշնակցական կառավարութիւնը իրեն միանդամայն օտար է զգում զէպի կանտօնի ներքին կեանքը այն չափով, ինչ չափով որ կանտօնը չի դուրս գալիս սահմանապրութեամբ իրեն թողած իրաւունքների սահմանից, հակառակ զէպքում դաշնակցական իշխանութիւնը կարող է պաշտպանել, յինւելով սահմանապրութեան վրայ: Յետոյ, կննարօնական իշխանութիւնը աւտոնոմ գաւառում ունենում է իւր ներկայացուցիչը, որ կանդնած է իշխում գործադիր իշխանութեան դըլիսին, օրինակ բրիտանական գեներալ-նահանգպալեանները գալութիւնում, որնք փունկցիաներով փունկցիաններին: Այս հանգամանքն էլ պայծառ լոյս է սփառում ֆեդերացիայի և աւտոնոմիայի սկզբունքային ապրելութիւնների վրայ, կենտրոնի գերիշխանութիւնը աւտոնոմ գաւառը միշտ զգում է իւր առօրեայ կեանքում էլ, մինչ գաշնակցութեան անդամ պետութիւնները զգում են միայն սահմանապրութեան գերիշխանութիւնը: Վերջապէս աւտոնոմ գաւառը արտաքին քաղաքականութիւնը մէջ բոլորովին ձուլում է ամբողջութեան հետ, այն ինչ ֆեդերացիայի կանտօնը գէթ միջկանաօնական վաճառականական յարաբերութեան տէջ կարող է լինել, բայց սրանով էլ սպառուում են աւտոնոմիայի ընդհանուր, հիմնական գծերը, սկսում է ապրելութիւնների, սպեցիֆիկ առանձնայտականութիւնների շրջանը:

Այդ ապրելու տեսակների մէջ ել' պէտք է ցոյց տալ ախտիքա-

կան մի քանի օրինակներ (ի հարկէ պատմական փորձնական մեթոդով, սուանց յաւակնութիւն ունենալու իրաւաբանական քաղաքական բացարձակ հասկացողութիւններ տալու: Օրինակ, ինչ կատեգորիայի վերածել ներկայ էլզաս-Լոտարինգիայի անորոշ ինքնավարութիւնը¹⁾: Սկզբում դեռ միայն կայսրութեան պրօվինցիան էր համարւում, սուանց որ և իցէ իրաւոնքներ ունենալու: Խակ այժմ գոյութիւն ունի շատ խառը զրութիւն: Գաւառում ստեղծւում է մի ներկայացուցական մարմին (Landesausschuss), որ ունի, օրէնսդրական նախաձեռնութեան իրաւոնք, խակ օրէնսդիրն է կայսրը դաշնական խորհրդի (գերմանական) և Landesausschuss-ի համաձայնութեամբ, ուրիշն օրէնսդրութիւնը միաժամանակ և՛ կենտրոնական կառավարութեան, և՛ գաւառական ներկայացուցական մարմնի միջոցով. դեռ դա բաւական չէ, Աէլյուսատգն էլ դաշնակցական խորհրդի հետ միաժամանակ առ ժամանակակի կարող և խառնել էրկայական գործադրութիւնը. եթէ սրա վրայ աւելացնենք և այն զործադրիր մարմնի ներկայացուցիչ, կամ էլզաս-Լոտարինգիայի մինիստր - շտատհալտերին, որ հաշնակւում և արձակւում է կայսեր հրամանով և իւր խորհրդականներով կառավարում է երկիրը, — կը հասկանանք, թէ ինչպիսի ձեռք և բովանդակութիւն կարող է ստանալ աւտոնոմիան: Եթէ արագիսի անորոշ գէաքերի վրայ կանոն չառնենք (իմ կարծիքով չի էլ հարկաւոր), այն ժամանակ մենք կունենանք մօտաւորապէս երեք տիպի աւտոնոմիաներ: Առաջինը Աւտորիական պրովինցիաների կամ «երկիրներն» են:

Աւտորիան, որ ներկայացնում է իրենից 17 երկիրների միութիւն, իւր քաղաքական կազմով ներսպայի ամենաանշնորհը պետութիւններից մէկն է: Ամենաանրարեխիզ ընտրողական իրաւունքը թոյլ չի առաջի ժողովրդական շահերը ներկայացնել Աէլյուսատական և առիթ է գառնում աւտոնոմ երկրներում խիստ լարւած ադ-

1) Էլզաս-Լոտարինգիան, որ 1871 թւին անցաւ Գերմանիայի ձեռքը, մինչև 74 թիւը օրէնսդրական զործերում կախած էր դաշ. խորհրդից և Աէլյուսատգից, զործադրիր իշխանութիւնը պատկանում էր կայսրին: 74-րն կայսրը հիմում է պրօվինցիալում ժողովրդական (շատ այլակակ) ներկայացուցութեամբ խորհրդական մարմին՝ Landesausschuss. 79-ին սրան արւում է օրէնսդրական նախաձեռնութեան իրաւոնք և գարշական զործերը կենտրոնացնում է կառավարչական ժամանակարի ձեռքին: Այժմ էլզաս-Լոտարինգիան ունի թէ Աէլյուսատական անգում շտատհալտերի (Շտատհալտերի) ձեռքին: Այժմ էլզաս-Լոտարինգիան ունի թէ Աէլյուսատական անգում շտատհալտերի միջոցով և խորհրդական ձայնով:

գային պայքարի: Բայց ի հարկէ այս թերութիւնները ապակենարօնացման հետ (ինչպէս յետոյ կտեսնենք) ոչ մի առնչութիւն չունի, աւտոնոմիայի հետ կազ չունի նաև զաւառական օրէնսդրական մարմինների (սէրմ) աղանդակ կազմը: Աէլյուսատգի կամ լանդտագների իրաւունքները շատ էլ լայն չեն. ատեղական վարչութեան և գիւղատընտեսութեան վերաբերութիւնը օրէնքների հրատարակութիւնը, հակողութիւնը բարձրագոյն և տեխնիկական գարուցների վրայ, պրավինցիայի անշարժ կայքերը և նրա միջոցներով սպանող բարեգործական հիմնարկութիւնները, փողեր հաւաքելը, հարկերի վրայ նոր յաւելումներով և վերջապէս սէրմի կազմի կամ նրա ընտրութեան եղանակի փոփոխութիւնը, բացի այս հարցերից, որոնց վերաբերմամբ սէրմի ըլիազօր են, կան և հարցեր, որոնց վերաբերմամբ նրանք ունեն Աէլյուսատակի նորմաններով սահմանափակւած իրաւունք. որանք են. „Ակեղեցիների, սկզբնական գարուցների և գիմնազիաների վերաբերեալ օրէնքների հրատարակութիւնը և լէլխորատի իրաւասութեան ենթակայ բանոր զործադրութիւնը, այն դէպքում, եթէ այդ հիմնարկութիւնը ցանկալի կատնի յանձնել գաւառին մանրամասնութիւնների մըրակումը²⁾:

Ինչպէս տեսնում ենք՝ գաւառներից վերցրած է շատ այնպիսի իրաւունքներ, որ պէտք է պատկանէին նրանց, օրինակ, Լանդտագներին, չէ թողնւած քաղաքացիական և քրէական օրէնսդրութիւնը և այլն:

Բայց ընդհանուրն և տիպիկականը աւտորիական պրովինցիաների համար այն է, որ նրանք իրենց ներկայացուցիչներով կազմում են ամբողջ ըէլիտարակը և խիստակ չկայ մի կենարօնական վայր, որի վերաբերմամբ նրանք «ապակենարօնացած» լինէին: Աէլյուսատգի մշակած օրէնքների հաստատութիւնը կախւած է կայսեր կամքից. նա ունի իրաւունք նաև ցրելու օրէնսդրական ժողովները, այս երկու «արքայական» իրաւունքներն էլ Աւտորիայում աւելի մեծ նըշանակութիւն ունին, քան այլ սահմանադրական երկրներում, որովհետեւ այս իրաւունքը Աւտորիայում անւանական չէ, զանազան քաղաքական նորմատիկներով շատ յաճախ խառնելում են զաւառական զործերին:

Աւտորիական աւտոնոմ գաւառների մի այլ տիպիկական յա-

1) Լույզ. Правительства и подож. партія Европы. երես 305.

կութիւնն էլ այն է, որ գործադիր իշխանութիւնը, վարչութիւնը ոչ
միայն պատասխանատու չէ տեղական օրէնսդրական ժողովների
(ոչյմ-լանդտաու) առաջ, այլ մինչև անդամ չի էլ ընտրուում այդ մար-
մինների կողմից: Վարչական իշխանութեան զլոււը՝ «շատահալու-
րը» նշանակուում է կայսեր կողմից և միայն նրա առաջ պատաս-
խանատու է: Հասկանալի է, թէ որքան ժողովրդական է այս ան-
սուիկի «աւտոնոմիան» Աւտորիայի «երկիրների» և թագաւորութիւն-
ների (королевство) մէջ:

Երկրորդ տիպի ապակենարօնացում գոյութիւն ունի Ռւնդա-
րիայում. Խօսքս Կրօացիայի մասին է: Այսեղ արդէն յարաբերու-
թիւնները աւելի կանոնաւոր են, և ամուր հիմքերի վրայ դրած:
Նախ և առաջ յայտնի է, որ գաւառի ինքնուրոյնութիւնը շատ ա-
ւելի լայն է, քան Աւտորիուում, Ռւնդարական կենտրօնական կա-
ռավարութեան է վերապահուած ֆինանսները¹⁾, զինուրական հար-
ցը, վաճառականութեան վերաբերող հարցեր և, ի հարկէ, արտա-
քին քաղաքականութիւնը մնացած օրէնսդրական ֆունկցիաները
մնում են Կրօացիայի սէյմին: Կրօանները ունեն ներկայացուցիչ-
ներ Բուդա-Պեչաի պարլամենտի երկու պարլամենտներում էլ²⁾ (Յ
վերին և 40 ներքին պարտուում), նրանք նոյնիսկ ունին առանձնապէս
ներկայացուցիչներ Աւտորի-Ռւնդարական գերեզացիայի մէջ (1 վե-
րին և 4 հոգի ներքին պալատացի): Ինչ վերաբերում է գործադիր
իշխանութեան, այն ճիւղերի վերաբերմամբ, որոնք թողիւոծ են
Ռւնդարական պարլամենտին (ֆինանս, դինուրական և այլ), աղմի-
նիարացիան կենտրօնացած է Բուդա-Պեչայում, որտեղ կայ մի ա-
ռանձին մինիստրութիւն. Կրօացիայի գործերով պարապող, իոկ
Կրօացիայի սէյմը ունի պատասխանատու գործադիր մարմին բանի
գեկավարութեամբ, որ նշանակուում է կոյսիկ կողմից: Այս գործում
մեծ փեր է խաղում Ռւնդարական կարինեալ, այնպէս որ Կրօացիան
նւաճելով 1861-ին և հետեւալ տարիների ընթացքում իւր ինքնա-
վարութիւնը, միենոյն ժամանակ անխօնի կապերով կապերց Ռւն-
դարացիայի հետ: Ես գարձեալ կանգ չեմ առնում թէ Ռւնդարացիայի և
թէ Կրօացիայի վերին աստիճանի յետամնաց ներկայացուցչական

1) Լուցը. Նոյն աշխատաւթիւնը երես 339.

2) Այս ներկայացուցիչները մասնակցում են պարլամենտացին սրաշումներին,
որոնք կամ առանձնապէս վերաբերում են Պրօացիային, կամ ամբողջ պետու-
թեամը, և բացակայում են, եթի Կրօացիային շվերաբերող հարց է լինում դրւում:

սիստեմների վրայ, քանի որ հարցը ապակենարօնացման սկզբունքից
չի բղխում:

Վերջապէս, մենք գալիս ենք աւտոնոմիայի երրորդ տիպին, որ
առաջ է բերել իւր գաղութներում Անգլիան: Ամեն ձեռնարկութեան
մէջ հմուտ և գործնական, նա այս հարցում էլ կարողացի է թէ ի-
րեն և թէ գաղութների համար միւս երկներից շատ աւելի յար-
մար և նորմալ յարաբերութիւններ ստեղծելի, մի այնպիսի դրութիւն
որ միեւնայն ժամանակ, ինչպէս առում են, երկու նապաստակ է բըռ-
նել: Նա թէ պահպանել է գերիշխանութիւնը իւր ամբողջ զօրու-
թեամբ, և թէ գաղութների ինքնախրական ձգուումներին բաւա-
րութիւնը է տւել: Եթիև մի տիպիք բուրժուական պետութիւն, որ
ամենից լաւ զիտէ վարել կապիտալի քաղաքականութիւնը³⁾ Անգ-
լիան իւրեն է վերապահել գաղութները ամենալայն չափերով շահա-
գործելու յարաբարութիւնը, և այդ իսկ հողի վրայ կապել է իւր հետ
գաղութները աւելի սերտ կերպով, քան կարելի է ամենախիստ
սահմանափակող օրէնսդրական և վարչական կենտրօնացմամբ: Անգ-
լիական գաղութացին պալակենարօնացման զիտաւոր, ախպիք դիմը
պետական ներքին օրգանատկան կապի բացակայութիւնն է գորութ-
ների և մերարապութիւնի մէջ, ուզում եմ ասել, որ գաղութները ի-
րենց ներկայացուցչուամբ չեն մտանակցում անզիտական քաղա-
քական կեանքին, նոյն իսկ իրենց վերաբերող հարցերում ձայն չու-
նեն Վեհատինիստը պարլամենտում: Կազմը պահպանում է գենե-
րալ-նահանգավետութեան միջոցով, որը անզիտական գահէ (իմա-
պարլամենտի) ներկայացուցիչն է, նա պէտք է հաստատի անդական
պարլամենտի բալոր օրէնսդրական ակաները, կամ պէտք է ստանայ
Անգլիայից թագաւորի (գաղութացին մինիստրութեան) համաձայնու-
թիւնը, նոյն այդ գեներալ-նահանգավետը կազմում է (օր. Աւտորա-
վիացում, Կանադայում) կարինետ պարլամենտի տեղական մեծամաս-
ուութիւնից և նրա առաջ պատասխանատու է, գաղութի օրէնսդրական
ֆունկցիաները շատ լայն են, միայն չպէտք է հակասեն ըրբատանական
պարլամենտի որոշումներին գաղութների գրութեան մասին: Այդ
յարաբերութիւնները կարգաւորելու համար կայ 1865-ին հրատարա-
կած «գաղութացին օրէնքների ակտ», որից բերում ենք երկու կը-
տոր: Յօգւած Յ. «գաղութացին ոչ մի օրէնք չպէտք է լինի կամ հա-
մարուի անվանել, միայն նրա համար, որ նա համաձայն չէ անգ-
լիական օրէնքներին, եթէ միայն նա չէ հակասում վերօյիշեալ

պարլամենտական Ակտի որ և է յօդւածին, հրամանին, կամ որոշամոնը:

Այսինքն ուզում է առել, որ մինոյն հարցի մասին գաղութում և մերարդում առընդում օրէնքներ կարող են դուռըթիւն ունենալ, եթէ միայն սարլամենտը չի որոշի նախօրօք որ այդ օրէնքները միատեսակ պէտք է լինին:

Գաղութային պարլամենտերի իրաւասութիւնը որոշում է յօդւած 5. «Գաղութային ամեն մի օրէնքներական հիմնարկութիւն պէտք է ունենայ իրակատար իրաւունք իւր իրաւասութեան սահմաններում հիմնել գատարաններ, ոչնչացնել և վերականգնել նրանց, փոխիմել նրանց կազմը և որոշել գատավարութեան կարգը, և ամեն մի ներկայացուցական օրէնքրական հիմնարկութիւն պէտք է ունենայ իւր իրաւասութեան տակ գտնւող գաղութի վերաբերմամբ իրակատար իրաւունք հրատարակել այդ օրէնքրական հիմնարկութեան կազմի, իրաւունքների և գործողութիւնների եղանակին վերաբերող օրէնքներ, որպէս զի այնպիսի միջոցով և այնպիսի ձևով օրէնքներ հրատարակի, որպիսին կառանձնեն պարլամենտական (անգլիական) ակտերը, պատենտը, խորհրդի մասնակցութեամբ դրւած թագաւորական հրամանները, կամ որոշ գաղութում ներկայացում գործող գաղութային օրէնքները»¹⁾:

Այս պարլամենտական ակտից կարելի է եղրակացնել մի կողմից որ բաւականին լայն իրաւունքներ ունի գաղութային պարլամենտը և միւս կողմից, որ բրիտանական պարլամենտը կարող է ամեն մի դէմքում ներս խուժել իւր վերիշխանութեամբ և բեկանել գաղութային օրէնքները: Բայց ինչպէս առանասարակ Անգլիայում գլուխաւը օրէնքից աւելի նշանակութիւն ունեն պետական սովորութը և պրակտիկան, որոնց ամուր հիմքերի վրայ միայն այսօր կանդնած է ամբողջ բրիտանական քաղաքական մեխանիզմը, այնպէս էլ այս դէմքում պարլամենտը կարողացել է որոշ գործնական քաղաքակառութներ մշակել գաղութների վերաբերմամբ: Մի կողմից նա այնպիսի պայմաններ է առեղծել, որ հարկ եղած դէմքում իրաւաբանուն միշտ կարող է ազգել գաղութի պետական կեանքի վրայ, դատարանները միշտ կարող են յայտարարել գաղութի մի որևէ օրէնք

1) Ջայս. Основы госуд. права Англіи. Եղես 190—120. «Գաղութային օրէնքների ակտ»:

հակառակ սահմանադրութեան (այսինքն պարլամենտի համապատասխան ակտերին) և զրկել նրանց ոյժից՝ գեներալ-համագալութեար, որ գարձեալ Անգլիայի շահերի պաշտպան է, կարող է անմիջապէս, կամ կայսերական հրամանով չվաւերացնել տեղական օրինագիծը և այն: Բայց սովորաբար բրիտանական պարլամենտը բարւոք է համարում շատ էլ չխառնւել գաղութների գործերին և նրանց գործունէութեան լայն ասպարէզ տալ:

Վերցնենք օրինակի համար կանագան, կամ Աւստրալիայի դաշնակցութիւնը: Երկուսն էլ իրենց ներքին կազմակերպութեամբ ֆեղերացիաներ¹⁾ են (գաղնակցական պետ), չնայած զրան գգալի կերպով տարբերում են: Կանագայում կենարօնական իշխանութիւնը շատ աւելի ուժեղ է, քան Աւստրալիայում: Նա իրաւունքը ունի քեկանել նահանգական օրէնքները նոյն իսկ այն գէպքում, երբ նըրանք սահմանադրութեան հակառակ չեն, դաշ, կառավարութեան իրաւասութեան տակ գտնւող օրէնքրական ֆունկցիաներն էլ աւելի բազմաթիւ են, բայց միւս կողմից Կանագան աւելի կախում ունի Անգլիայից, քան թէ Աւստրալիան, Աւստրալիայի ժողովուրդը կարող է գահի համաձայնութեամբ փոփոխաման ենթարկել իւր գաղնակցական և նահանգական սահմանադրութիւնները, իսկ Կանագան ունի այդ իրաւունքը սահմանադրութեան միայն երկրորդական կէտերի վերաբերմամբ:

Ցիշտակութեան արժանի է նաև մի առանձնայատուկ կէտթէ Կանագայի և թէ Աւստրալիայի պետական յարաբերութիւնների մէջ գէպի մետրոպօլիան: Անգլիան գաղնակցական կառավարութեան միջոցով չի կապւած առանձին-առանձին նահանգների հետ, այլ անմիջապէս: Գաղնակցութեան մէջ մտնադ գաղութներն իրենց պարլամենտական ակտերը պէտք է ներկայացնեն իրենց գեներալ-համագալութեարին, որոնց բրիտանական կառավարութիւնն է նշանակում: Այնպէս որ Անգլիան միաժամանակ յարաբերութիւնն մէջ է և՛ դաշնակցութեան հետ, որի գործադիր իշխանութիւնն էլ յանձնած է գեներալ-նահանգական պատասխանի հետ, որոնց ամեն մէկում նոյնպէս կան նահանգապետներ:

1) Ֆէդէրացիա են անւանում յաճախ պետութիւնների գաղնակցութիւնը. բայց մենք մի անգամ ընդմիշտ ֆէդէրացիայի տակ հասկանում ենք դաշնակցական պետական:

Մենք կանգ չենք առնում այդ գաղութների ներքին պետական կեանքի վրայ. դրանց մասին, իրեն ֆէդէրացիաների, մենք իւր տեղում խօսել ենք:

Այսպէս ուրեմն, ապակենտրօնացած պետութեան վերաբերմամբ բոլոր ասածներից հետեւել եզրակացոթեան ենք գալու. բացի էլզաս-Լուտարինդիայից, որ դեռ չի վերածել աւտօնում գաւառի մի որոշ ձևի, մենք գտնում ենք զիսաւորապէս երեք ախալի ապակենտրօնացում.

1) Ապակենտրօնացում օրէնսդրական (շատ նեղ) և կենտրօնացում գործագիր իշխանութեան, կենտրօնական կառավարութեան բոլոր աւտօնում գաւառների ներկայացուցչութեամբ (Աւտորիա):

2) Ապակենտրօնացում օրէնսդրական և գործագիր իշխանութեան, ներկայացուցչութեան կենտրօնում (Կրօացիա):

3) Ապակենտրօնացում օրէնսդրական և գործագիր իշխանութեան առանց ներկայացուցչութեան կենտրօնում (Անդիայի գաղութները):

Իսկ բնդհանուր հիմնական գծերը մենք սկզբում արդէն ցոյց ենք տւել: Տարբերութիւններն ապակենտրօնացման և ֆեղերալիզմի մէջ կայանում է ոչ թէ աւելի կամ որակու լայն ինքնուրոյնութեան մէջ, այլ աւելի կամ պակաս ակտիւ միջամտութեան մէջ կենտրօնի կողմից: Աւտորալիան, որ Մեծ-Բրիտանիայի աւտօնում գաղութնէ, իր ներքին կեանքում փաստօրէն աւելի խնդուրոյն է, քան Նվէճացրիայի մի որեիցէ կանաօն, որ պետութիւն է ներկայացնում. տարբերութիւնը կայանում է նախ և առաջ զուտ իրաւական յարաբերութիւնների մէջ. Աւտորալիան պաշտօնապէս, իրաւաբանօրէն կախած է Անդիայից, որը կարող է փոփոխել նրա սահմանակրութիւնը, լայնացնել կամ նեղացնել նրա ինքնուրոյնութեան սահմանները: Աւտորալիան օգտում է իւր աւտօնումիայից շնորհիւ Անդիայի և նրանից ստացած իրաւունքով, երկրի գրութիւնը, ոյժերի փախադարձ յարաբերութիւնը կարող են որոշել գաւառի ինքնուրոյնութիւնը, կարող են կապն ու կախումը կենտրօնից վերածել զուտ պաշտօնականի և իրաւաբանականի, և փաստօրէն ընդարձակ գարձնել կենտրօնին օգտելու իր սուվերէնիտէտով:

Աւտօնումիայի թերութիւնների և ֆեղերալիզմի գերազանցութեան մասին գէմօլիրատիայի տեսակէտից մենք կխօսենք՝ հետեւել գլուխներում:

V.

Այժմ մեզ անհրաժեշտ է պարզել այն հանգամանքները, որոնք պատճառ են դարձել և գառնում են թէ ֆեղերատիւ պետութեան և թէ աւտօնում գաւառների պատմական ասպարէզում երեան գալուն:

Մինչեւ այժմ զոյութիւն ունեցող ֆեղերացիաներ առաջ են եկել զիսաւորապէս միջազգային պատճառներից. օրինակ՝ Ամերիկայի անդիական գաղութները հէնց մեարոպօլիայից բաժանւելու համար հարկադրւած պէտք է լինէին միանալու, դաշն կապկելու, դա անհրաժեշտ էր յաջողութիւնը (որի մէջ շահագրգուած էին բոլոր գաղութները) ապահովելու համար, յաջողութիւնից յետոյ էլ այդ կապը պէտք է ամրանար և յարատեէլ, քանի որ թշնամու ձեռքում գեռ մնում էին շրջակայ երկները, մանաւանդ հիւսիսում. ուրեմն հանգամանքը զիսաւորապէս արտաքին, միջազգային էր: Բայց իրենց ներքին գրութիւնն էլ դրգում էր ամերիկացիներին դէպի միութիւն: Երկար ժամանակ գտնելով միենոյն պետութեան գերիշտանութեան տակ և շահագրծւելով միենոյն քաղաքական պայմաններից, իրացներով նոյն անդիական քաղաքական և քաղաքացիական կեանքը, գաղութները, անտարակոյս, պէտք է ներկայացնէին զգալի շափով նման ձգտումներ ապագայ ինքնուրոյն պետական կհանքի վերաբերմամբ:

Միենոյն ժամանակ նրանք իրենց մէջ կրում էին այնպիսի ոյժեր, որոնք թոյլ չին տալ առաջ բերելու մի պիտութիւն, թէկուզ լայն ապակենտրօնացմամբ: Նոյն Անդիան կառվարել էր երկար տարիներ այդ գաղութները առանձին-առանձին, նրանք միաժամանակ չէին առաջ եկել, գաղթականները բռնել էին զանազան վայրեր և միմեանց հետ այն չափով մօտ յարաբերութիւններ չէին ստեղծել, որ տեղական ինքնուրոյնութեան ձգտումը ոչնչանար: Մետրօպօլիան իւր անմիջական յարաբերութիւններով գանազան գաղութների հետ նպաստել էր նրանց մէջ տեղական քաղաքական կեանքի առաջ գալուն և հաստատելուն: Բացի դրանից չպէտք է մոռանալ որ կային գաղութներում տարբեր ազգութիւններ, որոնք գեռ այնքան չէին ենթարկել ասսիմիլացիայի, որքան այժմ և ունէին իրենց զուտ ազգային շահերը: Եթէ աչքի առաջ ունենանք այդ բոլոր հանգամանքները, մեզ համար պարզ կլինի, թէ ինչու կենտ-

րօնացման գաղափարը ոչ միայն հող չպառ Ամերիկայում, այլ նոյն իսկ երեան չեկաւ: Քաղութերը, ընդհակառակը, երկար ժամանակ գէպի գաղանակցական իշխանութիւնը մեծ կասկածով էին վերտրերում և բոլորը միահնգամից չմտան մէջը, այլ տասնեակ տարիների ընթացքում: Կենտրոնական իշխանութիւնը կատարելապէս ապահովեց միայն քաղաքացիական պատերազմից յետոյ:

Ինչ վերաբերում է Նվելյացարիյին, այսաեղ գոյութիւն են ունեցել համարեա թէ նման պայմաններ, ի հարկէ Նվելյացարիայի պատմութիւնը բոլորովին այլ է եղել՝ թէ քաղաքական և թէ սոցիալական տեսակէտից, բայց անկախ կանոնների համախմբումը գլխաւորավէս նոյն պատճառներից է եղել: Երջապատող մեծ պետութիւնների սահմանադրութեան մասեցրել է առանց այն էլ եռոնների մէջ միասին ընկած կատօնները: Միւս կողմից էլ աշխարհագրական շատ մեծ նշանակութիւն ունեցող գիրքը առաջ է բերել պետութիւնների մէջ շահերի ներհակութիւն և այդպիսով պահանջել է Նվելյացարիայի՝ իրեւ անկախ պետութեան գոյութիւնը: Քաղաքական-պատմական անցեան էլ բերել շատ անգամ բաղդակից է դարձել անկախ կանոններին: Եթէ որա վրայ աւելացնենք, որ շատ կանոններում խառը պազարնակութիւն է պարում և ոչ հաւասար պըրուզոցիայով¹⁾, կտեսնենք, որ թէ կանոնների անկախ գոյութիւնը, թէ նրանց կենտրոնացումը մի կառավարութեան ձեռքում չէր կարող բնական համարել և զգիսել իրերի դրութիւնից:

Սյս փաստերից կարելի է եղբակացնել որ ֆեդերատիւ պետութիւններն առաջ են եկած գլխաւորապէս երկու պատճառներից: մի կողմից ընդհանուր քաղաքական կեանքի անհրաժեշտութիւնը (արտաքին քաղաքականութիւն, անցեալ պատճութիւնը և այլն) կապում է անկախ քաղաքական մարմիններին, իսկ ինքնուրոյնութեան ձգտումը, որ իւր գոյութիւնը պահպանած է լինում մինչ այդ, թոյլ չի տալիս կենտրոնացնել պետութիւնը, այլ ֆեդերացիայի է վերածում²⁾: Եթէ անկախ պետութիւններ դաշնակցութիւնն են կազմում, այսաեղ գործում է գլխաւորապէս առաջին մօթիւնը:

1) Պարզ բան է, որ փարբամանութիւն կազմող պազար պատճութիւնը անկախ պետութեան մէջ աելի կճնշվ, քան եթէ այլ պետութիւնը կապւած լինի մի ուրիշ հետ, որ վերոշիշեալ պազարութիւնը կարող է մեծամասնութիւն կազմել:

2) Այս երկու պատճառների վրայ աւելանում է ընդհանուր քաղաքական կեանքի դէմօլիտիպացիայի տեսդենցը. բայց դրա մասին յետոյ:

մենուը, (երկրորդը արգէն զոյսւթիւն ունի), —միութեան ձգտումը. այսպէս է եղել է Միացեալ-Նահանգներում, Աւստրալիայում և այլն, իսկ եթէ մի կենտրոնացած պետութիւն է ապակենուրօնանում և ֆեդերացիայի ձև ընդունում, այսաեղ արգէն առաջին հանգամանքը չէ, որ գործում է. ապակենտրոնացնում է ոչ թէ առաջին կենտրոնածիզ ոյժը, այլ երկրորդը՝ կենտրոնափոյսը, գուտառների ինքնուրոյնութեան, պետական կեանքի ապակենտրոնացման տեսլենցն է սա: Այսպէս է եղել օրինակ Բրազիլիայում և հարաւային Ամերիկայի այլ հանրապետութիւնների մէջ¹⁾, ուր սկզբում գոյութիւն է ունեցել մի պետութիւն: Կենտրոնական իշխանութիւնը հարժարութեալ իւր մի քանի փունքիցիաներից և ենթարկելով ընդհանուր սահմանադրութեան, կարող է իւր նախկին գաւառը վերածել գաշնակական պետութիւն:

Երկրորդ մօմենտը յաճախ կարող է տալ և տւել է ապակենտրոնացման պետութիւն աւտոնում գաւառներով, փոխանակ տալու պետութեան աւելի նորմալ ձեւը՝ ֆեդերացիա: Այսպէս է առաջ եկել աւտոնոմիան Աւստրալիայում, նրա «երկրների» վերաբերմամբ, այսպէս է Կրօացիան նւաճել իւր լայն ինքնավարութիւնը Ռւնդուրիայից, այս փակտօրի անխուսափելութիւնն է ստիպել Գերմանիային յարգել Ելդասի իրաւունքները:

Եթէ առաջին մօմենտը, կենտրոնաձեռք ոյժը բոլորովին գոյութիւն չունենայ, այսինքն եթէ պետութիւն կազմող զանազան մասերի մէջ կապը բացակայի, եթէ ընդհանուր քաղաքական կեանքը տնտեսական, կուլտուրական յարաբերութիւններով անհրաժեշտութիւն չգառնայ, այն ժամանակ վերևում յիշած կենտրոնախոյս ձգտումը կարող է տանել պետութիւնը տարբարուծման բոլորովին, կամ մասամբ, և ամեն մի արհեստական պետական միջոց, քաղաքական եքսպերիմենտ, որ կգործադրուի կենտրոնի միջից պահպանելու համար պետութեան միութիւնը, անբաժանելիութիւնը, կինի ապարդիւն և միանգամայն վնասակար թէ կենտրոնի և թէ մանաւանդ անջատած գաւառի նօրմալ զարգացման և առաջադիմութեան տեսակէտից²⁾: Այդպիսի պայմաններն էին, որ բաժանեցին Վտալի-

1) Պ. Էլլինօք, նախ աշխաւութիւնը. երես 519:

2) օրինակ, երկար ժամանակ այն կարծիքին էին, և մինչեւ այժմ էլ շատերը կարծում են, որ Լիճաստանը չի կարող նօրմալ կերպով զարգանալ Ռուսաստանի հետ կապւած լինելով, որ նա վաղ կամ ուշ պէտք է բաժանվի Ռուսաստանից: Մինչեւ այժմ էլ այդ կարծիքին է լ. Ֆաւմլուլիշը:

ան Աւստրիայից, Բելգիան Հոլլանդիայից. նոյն քաղաքական պայմաններն են, որ տարրակութում են Օտտոմաննեան կայսրութիւնը:

Ոչ միայն տեղական ինքնուրոյնուրթեան, այլ և անհատական քաղաքական ազատութեան գաղափարը տրամադրում էր ամերիկացիներին յօդուա ֆեղերալիզմի: Եւ իսկապէս, որքան պետական-քաղաքական կեանքը մօտ է ժողովրդին, որքոն ժողովութիւնը կարողանում է հետեւ օրէնսդրութեան և առհասարակ երկրի վարչական կեանքին, այնքան աւելի առաջովւած է անհատի քաղաքացիական և քաղաքական իրաւունքները, այնքան նաև, քաղաքացին, աւելի ինտենսիւ (ներոյժ) կերպով մասնակցում է պետական կեանքին և, հետեւաբար, աւելի յարմարութիւն և ընդունակութիւն է ստանում աղքելու այդ պետական կազմի կատարելագործման վրայ: Երբ պետական օրգանները (օրէնսդրական, վարչական, դատավորական) մօտ են ժողովրդին (իսկ դա ամենից հեշտութեամբ իրագործելի է ֆեղերացիայի մէջ), նա աւելի հետաքրքրութիւն է ցոյր է տալիս դէպի իւր կենսական հարցերը և նրանց լուծումը: Մեզ յայտնի է, որ միշտ նոյն իսկ շատ քաղաքակիրթ երկրներում ժողովրդի մի սոււար մասը սառնասիրտ է դէպի երկրի քաղաքական կեանքը. այս երեսյթի գլխաւոր պահանջներից մէկն էլ անտարակոյս այն է, որ պետական օրգանները չափազանց ընդհանուր բնաւորութիւն ունեն, իրենց գործունէութիւնը տանում են, ստիլաւած են տանել ընդհանուր պետական քաղաքականութեամբ, որտեղ հարցերը երեան են գալիս աւելի աբստրակտ ձևով (զանազան շրջանների վերաբերմամբ իհարկէ), և որը շատ էլ չի զբաղեցնում զանազան շրջանների աղդաբնակութեան ներքին խաւերը: Դեռ զոյութիւն չունի քաղաքական այն ներոյժ կեանքը, որի մէջ աղդաբնակութեան ամենալայն խաւերն իրանց զգային և համարէին քաղաքացիներ, գիտակցէին ժողովրդի, իրեւ սարձրագոյն պետական ինստանցի գերը:

Անտարակոյս, օրէնսդրութեան բաժանումը նահանգի և կենտրոնի մէջ աւելի նպաստում է ժողովրդի մերձեցմանը պետական կեանքին: Միջակ քաղաքացին աւելի հեշտութեամբ կարող է ըմբռութեան ներ իւր նահանգի, գաւառի օրէնսդրական նշանակութիւնը, քան կենտրօնական համապետական քաղաքականութիւնը. օրէնսդրական փունկցիաների բաժանմամբ կենտրօնական կառավարութիւնն էլ աւելի դիւրմբռնելի, հետաքրքրական է դառնում մասսաների համար, քանի որ նա այդ դէպրում առանձնատպէս զբաղւում է կարեռ-

ըագոյն քաղաքական հարցերով, որոնք, չփոթելով տեղական նահանգական հարցերի հետ, իրենց լրջութեամբ մատչելի են դառնում ժողովրդական ցածր խաւերին: 'Կաշնակցական սիստեմը ամեն մի պետական բնաւորութիւն ունեցող հարցին իրեն համապատասխան տեղն է տալիս ժողովրդական կեանքի մէջ: Խոկ մեր յաջորդութիւնը խոչոր չափով կախւած է նրանից, թէ որպիսի հեշտութեամբ կկարողանայ աշխատաւոր դասակարգը ըմբռնել իրերի գրութիւնը պետութեան մէջ, որ չափով դժւար կդառնայ տիրող դասակարգերի համար այլ կերպ պատկերացնել քաղաքական կեանքը, պետութեան գաղափարը, քան թէ մեզ է ցանկալի: Պետական կեանքը, «իշխանութիւնը» գեռ կրում են մասսաների համար որոշ չափով խորհրդաւոր բնաւորութիւն, սրբազործւած, յաւերժական հասկացողութիւններ են դեռ, որոնց վրայից պէտք է պոկել քօղը և ժամանակակից պետութիւնը պէտք է որ երեան գայ իւր խակական էութեամբ, դասակարգային շահներով զեկավարւող իւր բնաւորութեամբ, մօտեցներով ժողովրդին օրէնսդրութիւնը, որ պետական կեանքի գլխաւոր և էական մասն է կազմում, և դրա հետ միասին միւս ձիւղերը, ես խորապէս համոււած նմ, որ մենք նպաստած կլինենք այդ գործին, փութացրած կլինենք մասսաների քաղաքական հասունացումը:

Ինչ որ վերաբերում է ֆեղերատի սիստեմի կազմակերպչական կազմին, պէտք է խոստովանել, որ նա մի շարք առաւելութիւնների հետ, որոնց մասին յետոյ կիսունք, ունի երկու աչքի ընկնդող առաւելութիւններ կենտրօնացման համեմատութեամբ. առաջինը նա շատ բեղմնաւոր է դարձնում վարչական ապակենտրոնացումը կամ ինքնավարութիւնը, (որի կարևորութեան մասին կարծեմ երկու կարծիք գոյութիւն չուն): Ի՞նչ է խոկապէս ինքնավարութեան կոչումը. կիրաւել պետական օրէնքները կեանքի մէջ և հասարակութեանը մասնակից անել օրէնսդրական բնաւորութիւն չունեցող տեղական գործերին: Կինտրօնացած պետութեան մէջ, եթէ նոյն իսկ նա ֆեղերատի պետութեան չափ ուամկավար է, օրէնքները շատ աւելի ընդհանուր գծերով են մշակուում. այդ պատճառով էլ զանազան գաւառների իրականութեան վերաբերմամբ վերացական բնաւորութիւն ունեն, հետաքրքրար իրենց կիրառման մէջ չեն կարող կարենը չափով ձկուն լինել, ինքնավարութիւնները չեն կարող այնքան օգտակար լինել, որքան կլինէին այն դէպրում, երբ օրէնքներն

տւելի կոնկրետ կերպով կմշակւեն տեղական օրէնսդրական մարմիններում. այն ժամանակ պարզաբնութից դուրս եկած օրէնքը մինչև իւր կիրառումը այնպիսի փոփոխութեան կարիք չէր ունենայ, որքան եթէ օրէնքը դուրս գալու լիներ կենտրօնական պարլամենտից. Երկրորդ դէպքում ինքնավարութիւնը, կատարելով այն, ինչ որ լիազօր է անել, այսինքն մասնամասնութիւններ, տիտուլներ մտցնելով օրէնքների մէջ, իւր նպատակին համաձ կինէր—կդորժադրէր օրէնքները, այն ինչ առաջին դէպքում ինքնավարութեանը բաժին կընկնէր այնպիսի մի դործ, որի համար նա լիազօր չէ իւր վարչական բնաւորութեամբ: Օրէնքի գործադրութեան համար այդ դէպքում հարկաւոր կինի էական փոփոխութիւն մտցնել, որի համար ինքնավարութիւնը ձեռնհաս չէ: Այդ է պատճառը, որ կենտրօնացած պետութիւնը անկարող է շատ լայն ասպարէզներ տալ ինքնավարութիւններին և շատ օրէնքներ այդպիսի պետութիւնների մէջ կիրառուում է կենտրօնական վարչութեան ինստանցիաների, կամ այլ խօսքերով, բիւրօկրատիայի օգնութեամբ, որ «կարողանում է յարմարեցնել» օրէնքները ամեն տեսակ իրականութեան, իսկ այդ հագումանքը գորկ է տալիս բիւրօկրատիզմի բարգաւաճման:

Հըսւիթել հասարակութիւնը մասնակցելու պետական և այլ գործերին, արդէն դժւար է և ասաբագիւն, եթք զարգացած է բիւրօկրտափառն, ամեն բանի ձեռնհատ և ամեն բանի վրայ իւր պաշտօնական և թթամիտ տեսակէտի կնիքը դնող:

Որքան էլ լայն օրէնքարական իրաւունքներ ունենան քաղաքացիները կենարօնական պարզամենառում, այնուամենայնիւ շնորհիւ օրէնքների վերև յիշւած բնաւորութեանը և բիւրօկարգախայի լայն գործունէկութեան, նրանք մնանք են համեմատարար հեռու լնգնագարաւոթեան գործերից:

Զէմս Բրայմը, խասելով ինքնավարութեան և ընդհանրանապէէսքաղաքացիների մասնակցութեան մասին տեղական վարչական գործերում, նկատում է. «Որբան ազգի¹⁾ մէջ մտնող քաղաքական մարմինների իրաւունքները լայն են, և որքան նեղ են ամբողջ ազգի և նրա կենտրոնական կառավարութեան իրաւունքները, այնքան աւելի ազգեցութիւն և եռանդ կինքի ազգը կազմող անհամաների պարծունէութեան մէջ»։ Եւ հետաքրքիր է, որ կան հրապարակախօս-

1) *Вզգ այստեղ գործ է ածւած պետութեան մտքով:* Դ. Բրայսъ. Աмерик. республика I. եր. 386:

Ներ, որոնք յարմար են համարում պնդել, թէ զարգացած բիւրոկրատիզմը պետութեան կենտրոնացման յատկունիչներից և հետեւնքներից մէկը չէ:

Յո իշարկէ յաւակնութիւն չունեմ պաշտպանելու այն միաքը, թէ դաշնակ. պետութեան մէջ բոլորովին հող չկայ բիւրոկատիզմի բարգաւաճման համար: Կարծես թէ դաշնակցական սիստեմը խանդագրում է որ պետութեան մէջ գոյութիւն ունենան ամենայետամնաց կարգեր, ինչպէս օր. Գերմանիայում: Մեր նպատակը չէ ժամանակակից դաշնակցական պետութիւների բոլոր սեւտոկան կարգերը արգարացնել այդ քաղաքական սիստեմի տեսակէտից. այդպիսի ցանկութիւնը տարօրինակ կլինէր: Մենք վերցնում ենք ֆեւերալիզմը, իրեն մի քաղաքական-պետական կատեգորիա, վերցնում ենք ոչ ներկայ լուժնակցութիւնները իրենց ամբողջութեամբ, այլ նրանց, այսպէս ասած, պետական կմախքը, առանց պատմական թերութիւնների և առաւելութիւնների. այսպէս, վերցնելով ֆեւերալիզման և կենտրոնացումը իրեն պետական կազմակերպութեան տիպեր, և երեակայելով նրանց միասեսակ և հաւասար պայմաններում, ևս համեմատութեան եմ դնում միմեանց հետ:

Կենտրոնացման կողմնակիցները յաճախ մատնանիշ են անում, թէ փէտրացիայի պետական մէխանիզմը բարդ է, իսկ ցենտրալիզացիան ընդհանուրակը աւելի պարզ է և հեշտ է գործում։ Հետաքրքիր առարկութիւն և խոստովանութիւն։ Այս տեսակէտից դատելով, գալիս ենք այն եզրակացութեան, որ ովետութիւնը ոչ թէ իր ինստիտուտներով պէտք է արտայայտած լինի իրերի իսկական դրութիւնը պետութեան մէջ, ոչ թէ պէտք է արտայայտի հասարակական բազմատեսակութիւնը, որ գոյութիւն ունի այս ինչ պետութեան մէջ, այլ ուղղակի «պարզութիւնը» միայն աչքի առաջ ունենալով պէտք է իւր հիմնարկութիւնները հասցնի պրիմիտիվ դրութեան։ Ոչ ոք մեղաւոր չէ, որ կեանքը բարդ է, և քանի գնում բարդանում է, երբ զանազան նոր, օրէնսդրական ճիւղեր և նորնոր «իրաւունքներ» են երեան գալիս, տեղի, տարածութեան համեմատ տարբերելով միմեանցից, ոչ ոք մեղաւոր չէ, որ պետութեան մէջ ապրում են բազմատեսակ ժողովուրդներ, իրենց անհատականութիւնը խորապէս շեշտող և նրա համար կուտղ ժողովուրդներ, որոնք միևնույն ժամանակ կանգնած են կուլտուրական զանազան աստիճանների վրայ, ի հարկէ այս բոլորը մի որ և է «մարքսիստի»։

Համար գրոշ չարժէ, և իրականութիւնն ըմբռնելու համար դին չունի, բայց գժբաղդաբար «մարքսիստի» այդ տեսակէտը չի փոխում ազգաբնակութեան խայտաբռէտ կազմը և չի տալիս նրան ցանկալի միատեսակութիւն։ Եթէ իրականութիւնը բարդ է, այն պետական մեխանիզմն էլ, որ պէտք է գործէ այդ պայմաններում, նոյնպէս բարդ կինի, բարդ միմիայն այդ իրականութեան յարմարելու և առանց վշանալու գործելու համար։ Կենտրօնացումը իւր «պարզութեամբ» այն առաւելութիւնն է ներկայացնում, որ անտես է առնում իրականութեան շատ ու շատ երկոյթներ։ Խճարկէ, սահետեւանք չի անցնում այս կոպտութիւնը մի պետական սիստեմի կողմից, որ իւր թէ կրչւած է ժողովրդապետութիւն հաստատելու։ Ժողովրդապետութեան տեղ ստեղծում է քաղաքական-պետական ամլութիւն։ Բայց հետաքըրքիր է իմանալ թէ ապակենտրօնացման պետական «բարդութիւնը» և կենտրօնացման «պարզութիւնը» ինչնումն է կայանում։ Երեխ բարդութեան տակ հասկացում է օրէնսդրական ֆունկցիաների բաժանում, կամ հիմնարկութիւնների սոորյաբաժանում։ բայց, դա կարծեմ, նշանակում է միայն (բացի էական առաւելութիւններից), օրէնսդրական գործունէութիւնը հեշտացնել, օրէնսդրական խճաւած գործութիւնից հանել և յարմարեցնել ժողովրդական կարիքներին, մի խօսքով՝ նպաստել, որ այդ մեխանիզմը ազատ, առանց արգելվների և սահուն գործի։ Խսկ ինչ է կենտրօնացման «պարզութիւնը»։ Օրէնսդրական գործունէութեան մի մարմնի համար, որ ըոլորովին ձեռնհաս չէ և ստիպւած է անընդհատ ոտնահարել իրականութիւնը, վերացնել մէջտեղից հարցեր, որոնք լուծումն են պահանջում և, անընդունակ լինելով տեսնել այնքան յայն շրջան, որքան նրան յանձնած է, ենթադրել, որ ամբողջ պետական միջավայրը նման է իւր «ըրջակայքին»¹⁾։ այդ տեսակէտից եթէ հետեղողական լինենք, կդանք այն եղբակացութեան, որ տեղի օգտակար կինէր, օրինակ, արովիւտիզմը, իւր օրէնսդրական օրգանի չափազանց «պարզութեամբ»։ Յետոյ չափազանց շապարդ» մեխանիզմ է երեխ գործադիր իշխանութեան մեխանիզմը, իւր բիւրօկրատիզմով հանդերձ։

Լսել ենք, որ բուրժուական բանակը չափազանց անբաւական է ֆեղբարակիզմի թուլութիւնից, իբրև պետական սիստեմի։ Մ..Նա-

1) Մի օրամիտուու հրապարակաթօսի նկատողութեամբ այդ կնշանակէ հրամայել մեղանում ամեն տեղ պառկել քնելու, եթե Ս. Պետերուրապում ճրագնեցը հանդցնում են։

հանդների կենտրօնական կառավարութիւնը անկարող է այնպիսի իմպիրիալիստական քաղաքականութիւն վարել, ինչպէս վարում է անզիվական կառավարութիւնը, իշխանութիւնների աւելի լայն բաժանումը, նահանգների քաղաքական իրաւունքները խոշորութիւն... որ ակնյայտ է զաշնակցական պետութիւնների մէջ... դա աւելի փանագաւոր բան է, որովհետև թշնամիները քանի գնում ուժեղանում են պետութեան ներսում... Օրինակ՝ Մ..Նահանգներում այդ թուլութիւնը շատ դէպքերում երեան է եկել։ Կենտրօնացած, բազմաթիւ և բոլոր պարտականարիները կրող սատիկանութիւն և այլ տեսակի շինովնիկութիւն ըստակայում է այնաեղ։ Կենտրօնական կառավարութեան իշխանութիւնները չեն խառնւում նահանգական գործերին, քանի որ գործն ընդհանուր պետական նշանակութիւն չի ստանում, և միջամտութիւնն էլ շատ դէպքերում անժամանակ և թոյլ է լինում. զօրքերը առանձին են՝ նահանգինը, դաշնակցական իշխանութեանը, և գործագրում են առանձին-առանձին, իրենց համապատասխան, իրենց իշխանութեան վերաբերող դէպքերում։

Ուզիղ է այդ երկու թերթութիւններն էլ ունի դաշ. պետութիւնը, թոյլ է համեմատաբար թէ արտաքին և թէ ներքին քաղաքականութեան մէջ։ Առաջին տեսակի թուլութիւնը մեզ բոլորովին չի էլ հետաքքրբում. թէ, ինչպէս է վարում կառավարութիւնը բուրժուազիյի գասակարգային քաղաքականութիւնը պետութեան սահմաններից դուրս, միջազգային շուկայում նա էլ դարձեալ բուրժուական պետութիւն է, և անհրաժեշտօրէն զարգացնելու է իր մրցական ընդունակութիւնները։

Ինչ որ վերաբերում է երկրորդ թերթութեանը, դա մեզ այնքան էլ չի անհանգստացնում. մենք ի հարկէ, լաւատեսներ չենք բուրժուական ռամկավարութեան վերաբերմամբ, բայց այնուամենայնիւ, եթէ իրօք դաշնակցական կազմը աւելի պակաս ընդունակութիւն ունի ճնշելու, աւելի թոյլ զէնք է բուրժուազիյի ձեռքին մեր դէմ, մենք անբաւական չենք լինի և կգերազանք նրան կենտրօնացած հանրապետութեանը։ Բայց մեղ յայտնի է, որ բուրժուազիան, բացի գործադիր իշխանութիւնից, կարիք ունի ամբողջովին իւր գերիշխանութեան տակ պահել և օրէնսդրական օրգանները, ուրեմն «թուլութիւնը» կարող է վերաբերել և օրէնսդրական գործունէու-

թիւն։ Յուրժուական քաղաքագէտները բողոքում են Գեղերալիդի՛ գէմ, որ նա յարմարութիւն չի տալիս կենտրօնին զատելու նահանգների ցիմարութիւնները» և «փութկոտ», «անգպոյշ» օրէնսդրական փորձերը։ Մեղ լաւ ծանօթ են, այդ խօսքերը։ «փութկոտ», «անգպոյշ» յամենայն դէպս չեն վերաբերում յատադիմուկան, պահպանողական օրէնսդրութեան։ դրանց համար ներկայ պարլամենտական կեանքում զգոջ լինոլու կարիք չկայ բոլորովին։ նրանք իրենց արգումենտացիան վազուց արգէն սպառել են։ զգուշութիւնը վերաբերում է, անտարակոյս ամեն մի նորութեան, իսկ նորութիւնը քաղաքական կեանքում առաջադիմուկան կարգերի յատկութիւնն է, ամենայետամնաց երկրի կարգերը գնում են դէպսի տուաջ և ոչ թէ դէպսի յետ։ Եւ եթէ կենտրօնացած պետութիւնների մէջ էլ նշմարուում է առաջադիմութիւն, կենտրօնական պարլամենտն էլ է արտադրուում յաճախ «նորութիւններ», կնշանակէ, երկրի զանազան տեղերում կան առաջադիմուկան ոյժեր, և այդ ոյժերը չեն կարող ամեն տեղ, բոլոր շրջաններում հաւասար պրօալօրցիայով դասաւորւած լինել։ Կիրին շրջաններ, որտեղ այդ պայմանուցիկ ոյժերը տեղի իւրացած, տեղի համախմբւած կերպով երեան կդան, և եթէ ապակենորունացումը չի խանգարում, որ կենտրօնում նորմալ յարաբերութեամբ արտայայտւեն երկրի ոյժերը, ապա ուրեմն ինչու չցանկանալ զանազան նահանգներում առաջ բերել օրէնսդրական մարմիններ, որոնց թւում կիրինն այդպիսինները, որ իրենց առաջադիմուկան ոյժերի քանակով աւելի բարեյածող պայմաններ կներկայացնեն ու փորմների համար, քան կենտրօնական պարլամենտը։ Ինչու մի նահանգ, ուր անհրաժեշտ ոյժեր և պայմաններ կան փոփոխութիւններ մացնելու տիրող կարգերի մէջ, նոյն իսկ երկրորդուկան խնդիր լուծելու, պէտք է սպասի, մինչի որ ամբողջ պետութեան մէջ համապատասխան յարաբերութեամբ ոյժեր առաջ գան։ Թող մի երկրում, ուր ոյժերի յարաբերութիւնը փոխւել է, կարգերն էլ փոխւեն նրա համեմատ և մի պետութեան մէջ որոշ քաղաքական կամսօցիալուկան ու փորմ աւելի առաջ մտնի, քան միւսում։ Օրինակ՝ նահանգներին է վերապահւած դաշնակցական պետութիւնների մէջ ընարողական սիստեմի փոփոխութեան իրաւունքը, և եթէ վերցնելք այն պրոցեսը, որով մի օրէնք հասունանումէ (այսինքն կողմնակիցների թիւը բազմանում է), կտեսնելք, որ մինչև կենտրօնական պարլամենտում մեծամասնութիւն նւաճելը, նա արդէն շտա առաջ ունենում է

համակրող մեծամասնութիւն զանազան բնարուգական շրջաններում, որոնք սակայն ընդհանուր թւի մէջ փոքրամասնութիւն են կազմում։ Ապակենտրօնացման չնորհիւ արդ աեղերում կարելի կլինէր արդէն սկզբից անցկացնել օրէնքը։ Եւ եթէ մի առաջադիմուկան քայլ բորովին անկախ պետութիւններից մէկում մեծ ազգեցութիւն է ունենում միւսի վրայ, ապա ուրեմն պարզ է, որ դաշնակցական նահանգի առաջադիմութիւնը զօրեղ խթան կլինի միւս կանոնների համար, կբազմանան աւելի արագութեամբ րեփորմի կողմնակիցները, աւելի վստահութիւն և եռանդ կստանան նրա պաշտպանները, մահաւանդ որ չալէտք է ուրանալ, թէ յաճախ պատահում են դէպքեր, երբ մի որ և է նորութեան դէմ են լինում մարդիկ, որոնք միայն թերահաւատ են դէպի բէֆօրմի պաղպան, առաջարակ հինը պաշտպանում են ոչ սկզբունքով, այլ իրեն փորձւած սիստէմ մի ուրիշի համեմատութեամբ, որ պրօբլեմատիկ է թւում։ բուրիս յայնի է, որ այդպիսի անգոյն ներկայացուցիչներ գեռ մասսաները շարունակում են արտադրել, և դրանք կյարեն մի նորութեան, եթէ նրա կիրաւամտն հետեանքները տեսնեն։ Պարզ է, որ այդ տեսակէտից նահանգական օրէնսդրութիւնը կարող է մեծ ծառայութիւն մատուցանել պետութեան ընդհանուր յառաջադիմութեան։

Այնպէս որ դաշնակցական պետութեան օրէնսդրական «թուլութիւնն» էլ մեզ չի վշացնում, և զեռ իրախուսում է։ Աւշագրաւ է այն հանգամանքը, որ Միացեալ-Նահանգներում կենտրօնական կառավարութիւնը միշտ ներշնչել է երկիւզ ոչ միայն նահանգական ինքնուրոյնութեան, այլև զուտ քայլացւցիական իրաւունքների և աղատութեան տեսակէտից և Ամերիկայում զործող երկու զուսակցութիւններից մէկը՝ փեղերախատների կուսակցութիւնը, որ պաշտպանում էր կենտրօնի իրաւունքների լայնացման գաղափարը¹⁾, իւր ծրագրով պետութեան մէջ աւելի յետագէմ էր, միւսը՝ դէմօկրատական կոչւած կուսակցութիւնը, որ պաշտպանում

1) Ի հարկէ հասկանալի է, որ Փեղերախուսների կուսակցութիւնը պէտք է լինի կենտրօնի պտշտպանը, եթէ դաշնակցութիւնը առաջ է եկել կենտրօնաձիգ տեսդենցով, և ընդհակառակը, այն պետութիւնների մէջ, ուր դաշնակցութիւնն առաջ է գալիս կենտրօնախոյս տեսդենցով, փեղերախստ անոնը կրում են նահանգների նվազությունութեան կողմնակիցները։ Այդ երկու կուսակցութիւնների և նրանց գլխաւոր առաջնորդների՝ չամելածնի և Զեֆերսոնի մասին, ուս Զիմ Բրայսի նոյն աշխատ, I, երես 98.

էր նահանգների պահպանած իրաւունքների անձեռնմխելիութիւնը առաջդիմականն էր. առաջինը, վերջ ի վերջոյ տեղի տևեց և քայլաւեց:

Բացի այս մեղագրանքներից, մի յանդիմանութիւն էլ եւ անում դաշնակցական պետութեան կազմակերպութեան հասցեին: Առում են, որ դաշնակցութիւնը յարմարութիւն է տալիս նահանգներին դուրս գալու պետութիւնից, իսկ այս հանգամանքից քայլաւում է պետութիւնը, մանաւանդ որ դաշնակցական իշխանութիւնն էլ այնքան ուժեղ չէ, որ կարողանայ միշտ զսպել նահանգների անջատական ձգտումները: Բուրժուական զգացմունքներ և մտածողութեան եղանակ...

Նուի և առաջ դա տղիտութիւն է. եթէ մենք դաշնակցութիւնը համարում ենք պետութիւն, եթէ նա բաղկացած լինելով միքանի պետութիւններից, ինքը այնուամենայնիւ, իրենից պետութիւն է ներկայացնում և ունի սահմանադրութիւն, ուրեմն նա չի կարող իրաւացի ճանաչել մի որեկից նահանգի անջատական ձըդումները. ոչ մի դաշնակցական պետութեան սահմանադրութեան մէջ չէք գտնի գէթ անջատման իրաւունքի մասին. սահմանադրութիւնը պայմանագիր չէ և նրան խախտել առանց մեծամասնութեանց անկութեան չի կարելի: Այդ մէկ յիտոյ ինչ որ վերաբերում է անջատուկան տրամադրութեան, նա, յիրաւի, կարող է գոյութիւն ունենալ. նա կարող է արդիւնք լինել զանազան նացիօնակիսուական ձգտումների, մենք այստեղ ի հարկէ շահ չունենք, և այլ տեսակէտ կապաշտանենք, բայց եթէ այդ անջատական ձգտումը անխուսափելի է դարձել, բաժանումը պէտք է տեղի ունենայ, մենք՝ ազգերի փակտար ինքնորոշման սկզբունք պաշտպանողներս չենք, որ պիտի դուրս գանք բռնի կերպով կռւելու այդ անկախութեան կողմնադիր դէմ, մանաւանդ որ կարող է պատահել, ինչպէս ասացի, այդ անջատումն ընդհանուր առաջադիմութեան տեսակէտից անհամեշտ և ընական երեսյթ համարւի: Դաշնակցական պետութեան գերազանցութիւնը հէնց նրա մէջ է կայանում, որ նա առաջ է գալիս աղքեցի և շըջանների ազատ ցանկութեամբ և քաղաքական ընդհանուր կեանքի ձգտմամբ: Այսինքն այն մարդկանց, որոնք կանգնած միջնորդութիւնը առաջդիմական տեսակէտից անհամար և իրեն մէջ ոչ մի խորհրդաւոր վեհութիւն չենք նկատում, հետու պիտի լինենք այդպիսի նախապաշտրւած վերաբերմունքից դէպէ կենտրոնի գերիշանութիւնը:

Ճ տայ նահանգին բաժանւելու. իսկ այլ ձանապարհով բաժանւել կարող է և կենտրոնացած պետութեան մի որևէ գաւառ. գա ոյժերի յարաբերութիւնից է կախած: Ամերիկայի քաղաքացիական պատերազմն ապացուցանում է իմ միտքը: Նահանգների դիմադրութեան վերաբերմամբ հետաքրքիր է այն բացարարութիւնը, որ բերում է Զէմս Բրայս. նա ասում է, որ նահանգի օրէնսդիր և գործադիր իշխանութիւնները իրաւաբանօրէն չեն կարող սահմանադրութեան հակառակ որոշումներ կայացնել, և եթէ կայանում է այդպիսին, դա համարւում է ոչ թէ նահանգի կամքի արտյայատութիւն, այլ այն մարդկանց, որոնք իրենց համարում են նահանգի ներկայացուցիչներ, այսինքն մեղքը ընկնում է անհատների վրայ:

Դաշնակցական պետութեան ստրուկտուրան ոչ միայն աւելի կատարեալ է կենտրոնացածի հետ համեմատած, նա բարձր է և աւտոնում գաւառներից բաղկացած ապակենտրոնացած պետութիւնից:

Իսկապէս մենք պնդում ենք, որ տեղական օրէնսդրութիւնը անհրաժեշտ է, և ժողովրդապետութեան պայմաններից մէկն է: «Դա վերաբերում է թէ ֆեղերացիային և թէ աւտոնոմիային: Եւ եթէ այդ ընդունում ենք, ինչո՞վ կարելի է արգարացնել մի պեսական ստրուկտուրան, երբ կենտրոնական իշխանութիւնը իրաւաբանօրէն լիազօր է բռնազրութիւնը կերպով, առանց գաւառի համաձայնութեան ազգերու նրա աւտոնոմ կազմի, օրէնսդրութեան վրայ, ինչ առաւելութիւններ ունի կենտրոնը տեղական շահերի պաշտպանութեան տեսակէտից, երբ հէնց գաւառական օրէնսդրութեան անհրաժեշտութիւնը գալիս է ապացուցանելու, որ կենտրոնը հեղինակաւոր լինել չի կարող այդ գործում: Ուրեմն ինչո՞ւ նա պէտք է իրաւունք ունենայ հասատատելու կամ մերժելու տեղական օրէնքերի նախագիծը:»

Այդ բանը թէրևս հասկանալի է բուրժուական «հայրենասէրներին», որոնց համար գոյութիւն ունի ինչ որ «պետական ամբողջութիւն, գերիշանութիւն» գաղափարը, որը ինքն ըստինքեան մի մետափիզիկապական արժէք է ներկայացնում:

Իսկ մենք որ չգիտենք և չենք ցանկանում գիտենալ ոչինչ, բացի անմիջական պարզ ժողովրդական շահից, որ պետութիւնը համարում հենք միջոց (և ոչ միակ միջոց!) որոշ նախատակների հասնելու համար և իրեն մէջ ոչ մի խորհրդաւոր վեհութիւն չենք նկատում, հետու պիտի լինենք այդպիսի նախապաշտրւած վերաբերմունքից դէպէ կենտրոնի գերիշանութիւնը:

Համեմատած փեղերացիայի հետ, աւտօնումիան աւելի հեռու է ժողովրդականութիւն գաղափարից այն պատճառով, որ պահպա- նում է գեռ իւր մէջ հին տրաղիցիաներ և ժողովրդին հակադրած „իշխանութեան“ սկզբունքը, որ միապետութեան մնացորդ կարող է համարել, մահաւանդ որ աւտօնոմ գաւառներ աւելի յաճախ տեսնում ենք սահմանադրական միապետութիւնների, քան թէ հան բապետութիւնների մէջ:

Բայց ի հարկէ ապակենտրօնացած պետութիւնը իւր աւտօնում գաւառներով շատ հեռու է կենտրօնացածից, և անհամեմատ աւելի սպասառուր դէմօլիքափախից համարէ ինչպէս տեսանք, աւտօնումիան միատեսակ հասկացողութիւն չէ և կարող է յաճախ ունենալ շատ թիւրութիւններ. օրինակ՝ աւտոբիփական աւտօնում „երկները“, կամ էլեկտրա-օժարինգփախն իրենց կազմով սոցատել են նօրմալ ապակենտրօնացման սկզբունքը: Իսպի նրանից, որ պահպանում են ամենայետամնաց քաղաքական կարգեր, ամենաանարդար ներկայացուցչական սիստեմներ, դրանք իրենց ապակենտրօնացմամբ հանգերձ, չեն կակարողանում մեղմանցել զգելի ազգայնական կուիւը և վայրենութեան հասցրած օտարակիրութիւնը:

Բայց սրանից եզրակացնել, թէ ապակենարօնացման սկզբունքը անպէտք է ազգային անտաղոնիզմի մեղմացման համար, անհիմն կլինէր. ո՞ւ է մեղաւոր, որ Աւատրիան դեռ շարունակում է յամառել «պատմական» սահմանները պահպաններու հարցում. որ նա չի ցանկանում աւելի նպատակայարմար սահմաններ գծել աւտոնոմ գաւառների մէջ, համապատասխան ազգութիւնների գասաւորման, միթէ ապակենարօնացման սկզբունքն է մեղաւոր, որ կոզք կողքի պարող ազգութիւններից մէկը իւր գասակարգային շահը պաշտպանելու համար խոչընդուռ է հանդիսանում քաղաքական իրաւունքների լայնացման, որի մէջ շահագրգոււծ է միւս ազգութիւնը, որ իւր գասակարգային գրութեամբ շահագործող է, լին իւնկերը Գալիցիայում մաքառում է Ռումին գլւղացու քաղաքական արաւունքների դէմ, տալով այդ կաւին ազգային բնաւորութիւն, տրանսիլվանիան, զըրկած իւր ինքնավարութիւնից, ենթարկում է մաջարացման, նոյնը և ուրիշ շատ տեղիրում:

Ես, ի հարկէ, երբէք չեմ պնդի, որ ապակենտրօնացումը կարող է լուծել ազգային հարցը, մանաւանդ Աւստրիայի պէս մի երկրում, ուր ազգութիւնները շատ անդերում ապրում են խառը, մէկի,

Պամ միւսի գերակիւռ քաղաքականութեամբ. ծշմաբիտ է, մինչև անդամ այն կարծիքը, որ այդ հարցը վերջնականապէս կարող է լուծւել աօցիալական յեղաշրջմամբ միայն, բայց այնուամենայնիւ հասկանալի է, որ սկզբունքով, հետևողականութեամբ տարած տպակենտրոնացումը քաղաքական-պետական հիմնարկութիւնների գետօլրատիզացիայի հետ միասին կարող է մեծ ծառայութիւն մատուցել ազգային հարցի լուծմանը:

Աւատրիայի պէս պետութիւնների համար ապակենտրօնացման անհրաժեշտութիւնը զգացել են չատ առաջադիմական կուսակցութիւններ. օրինակ աւատրիական սօցիալ-դեմոկրատիան որ ինչպէս յետոյ կտեսնենք, կարեոր է գտնում ազգային և տերրիտորիալ աւտոնոմիան, յարում է դեցենտրալիզմին, որի մասին Բրիւննին իւր պարտէյտագի որոշումների մէջ ասում է հետևեալը. «Աւատրիական ժողովուրդների ազգային առանձնայատկութիւնների պահպանումը և զարգացումը (՞ն, ինչ սարսափելի աղանդականութիւն) կարելի կլինի միայն հաւասարութեան և ամեն տեսակ կեղեցման բացակայութեան հիման վրայ, ուստի ամենից առաջ պէտք է դատապարտւութեան բոլոր բեկրօկրատիական-պետական կենսօնացման սիստեմները, ինչպէս և առանձին երկրների ֆեօդարիական առանձնաշնորհութերը», և ոչ միայն Աւատրիայի պէս բազմաթիւ ազգութիւնների երկրում անհրաժեշտ և նորմալ են գտնում ապակենտրօնացումը, այնպիսի մի միավագաղ ազգաբնակութիւն ունեցող երկրում, ինչպիսին է օրինակ՝ Խոտիան, ամենաառաջադիմական քաղաքական գործիչներից մէկը՝ Հենրիկօ Ֆերրին (սօցիալիստ), պահպանում է ֆեղերատիւ պետական կազմ¹⁾, աչքի առաջ ունենալով անտարակոյս ոչ ազգային, այլ զուտ գեմոկրատական սկզբունքը:

Մենք մինչև այժմ խօսել ենք Փեղնրալիզմի և տպակենարո-նացման մասին գուշ պետական սարուկառութայի առաւելութիւնների տեսակէտից և այդ տիպերի երեան գալու պատճական անհրաժեշտութեան մասին:

Բացի ներքին ոյժերից ապակենտրօնացման և մասւանով գեղարաբիզմի տանում է զանազան մանր պետութիւններին միջազգային-

1) Энрико Ферри. Социализмъ и позитивная наука. (*միջանկեալ կերպարվածք է այդ հարցի մասին*):

գրութիւն. ներկայ դարում անհրաժեշտութիւն է զբացւում պետութիւնների աւելի և աւելի սերտ համախմբման, իսկ դրա համար ամենագիւղին և երկրի գրութեան համապատասխան պետական սիստեմը ֆեդերալիզմն է: Մենք ծանօթացանք միշտաք պետական և միջակետական քաղաքական սիստեմների հետ. ունիաների, սիւզերէն-վասսալական յարարերութիւնների հետ, կանք առանք պետութիւնների դաշնակցութեան վրայ, բայց դրանցից և ոչ մէկը չի ներկայացնում ժամանակակից պայմաններին համապատասխան պետական միաւորմանձեւ, բայց դաշնակցական պետութիւնից: Այս հարցի առթիւ շատ ուշագրաւ նկատողութիւններ անում է յայտնի Գ. Ելլինէկը, որ ի միջի այսոց առում է. «Քններով քաղաքական բնաւորութիւն ունեցող պետական միաւորումները իրենց պատմա-քաղաքական կողմից, մենք դալիս ենք այն եզրակացութեան, որ միաւորումների միակ առողջ և նորմալ ձեր դաշնակցական պետութիւնն է...: Պետութիւնների դաշնակցութիւնները թոյլ են դրսից և ներսից, իսկ քաղաքականապէս աւելի յարատե ու էալ ունիաներին սպառնում են միշտ ներքին երկսպառակութիւններ, ուղղած գէալի միութեան քայլացումը: Այլ միջակետական միաւորումները իրենց էութեամբ անցողական բնաւորութիւննեն. նրանք կամ ստեղծում են մի պետութիւն (կինտրօնացած), կամ տանում են գէալի կասի լուծումը: Պետութիւնների պետութիւնը (սիւզերէն-վասսալ) ներկայում արդէն երեան չի դալիս իրրի բնական կազմակերպութիւն, այլ ցոյց է տալիս քայլայող պետութեան տարրալուծման որոշ աստիճանը, ինչպէս որ հաստատում է Թիւրքիայի պատմութիւնը: Իսկ դաշնակցական պետութիւնը մի ազգի, կամ զանազան ազգերի մի քանի մասերի միութեան ամուր ձեն է, երբ դրանք կապւած են միմեանց հետ ընդհանուր պատմական բաղդով: Մասնաւորապէս մեծ կայսրութիւնների համար¹⁾ բեղմնաւոր կերպով գարգանալ աւելի հեշտ է ֆեդերատիւ, քան թէ միջակետութեան մէջ, որքան էլ վերջինը ալակենտրոնացած լինի: Այդ իսկ պատճառով դաշնակցական պետութիւնը մեծ գեր ունի քաղաքակիրթ պետութիւնների ապագայ կադմականապութեան գործում: Արդէն ներկայում նա երեան է դալիս Ամերիկայում իրրե պետութեան տիրապետող ձեւ: Բայց հէնց բրիտանական կայութիւնն էլ կարող կլինի ամբացնել իւր և գաղութ-

1) Ելլինէկը երկի աշքի առաջ ունի իւր հայրենիքը...

ների մէջ եղած կասը միայն այն գէալքում, եթէ նրան յաջողի երականացնել Imperial federation-ի գաղափարը, այն ինչ ներկայում նա, եթէ ոչ իրաւաբանօքէն, գոնէ քաղաքականապէս, արգէն պետութիւնների շատ թոյլ գաղնակցութեան բնաւորութիւն ունի: Գերմանական աշխարհը... իւր պատմական գարգացման ընթացքի ըընորհիւ պէտք է գարձնի գաղնակցական պետութիւնը իւր ժողովուրդների գաղափական կեանքի նորմալ ձեւ: Հէնց այժմ իսկ շատ քիչ երկրորդական պետութիւններ կան, ինչպէս Դանիան և Հոլանդիան, որոնք չունենացին պետութիւնների գաշնակցութեան, դաշ. պետութեան ձեւ, կամ որոնք գէալի այդպիսի կազմակերպութիւնը տեսնդենց ցոյց չային: Գերմանական կայսրութեան, Եվրոպարիայի գաշնակցութիւնների և Հիւսիս-Ամերիկական ունիայի կողքին կանգնած է Եվրոպարիայի և Նորվեգիայի բէալ ունիան¹⁾, մինչ Անգլիան ձգում է իւր գերմանական գաղութները վերածել պետութիւնների և գաղնակցութեան անդամների:

Ֆեդերալիստական գաղափարի գարգացման հետ ժամանակի ընթացքում պիտի փոխւի և միջակ ու մանր անկախ պետութիւնների զրութիւնը, որուինեան նրանք վերջ ի վերջոյ հարկադրուած կինեն յարելու աւելի խոշոր միութիւններին²⁾»:

Ամենամեծ պետութիւններից մէկն էլ Ռուսաստանն է, որ պատմական ընթացքում, քաղաքական իրերի բերմամբ լայնանորով ընդգրկել է բազմաթիւ ժողովուրդներ, որոնք կամաց-կամաց քաղաքական և սօցիալական յարաբերութիւններով կապւում են մէջանդիպի ուսւում մեծ ժողովրդի հետ, սակայն որոնց գարգացումը և յառաջադիմութիւնը պահանջում է միապետութեան վկասակենների վրայ հիմնել մի այնպիսի պետութիւն, որ ըոլոր ժողովուրդների համար աղաւութեան պայմանները հաւասարապէս երաշխաւորեն, որ վերացնելով քաղաքական ասպարեզից ազգային անտագօնիզմը, թողնէր որ սօցիալական հարցը ոյժերի ճշգրիտ յարաբերութեամբ մօտենայ իւր վերջնական լուծման...

VI.

Կայ և մի այլ հարց, որ, մեծ առնչութիւն ունեն որով հանգերձ պետական կարգերի ընդհանուր գէօլիցատիզացիայի հետ, այնու-

1) Այժմ լուծաւած:

2) Ելլինէկ, Право соврем. госуд. I, երես 526—27.

ամենայնիւ թողնւած է տռանց լուրջ ուշագրութեան ժամանակակից արմատական կուսակցութիւնների կողմից, մասնաւորապէս սօցիալիստական բանակում, և որ դարձեալ կապւած է ֆեդերալիզմի, կամ առնւազը լայն քաղաքական ապակենտրոնացման հետ: 'Իս ժամանակակից պարլամենտարիզմի և ժողովրդական անմիջական օրէնսդրութեան նշանակութիւնն է:

Եւրոպական այն երկրներում, ուր ներկայացուցչական սիստեմը վաղուց արդէն հաստատել է և բաւականաչափ ուամփուլարական հիմքերի վրայ է զրւած, պարլամենտարիզմը կամաց-կամաց կորցնում է իւր վաղեմի նշանակութիւնը և մատնում է համեմատական ամուլթեան: Բուրժուական գէմօկրատիան նկատում է արդէն իւր փայփայած քաղաքական գաղափարների սնանկութիւնն ու անպէտութիւնը սօցիալական սլրօբւմը լուծելու գործում: Դեմօկրատիան տարրալուծում է և ինչպէս շատ ճշմարիտ կերպով ցոյց է տալիս Կ. Կառլցին, կատարում է տեղափոխութիւններ՝ թէ պարլամենտական նատարանների վերաբերմամբ և թէ պարլամենտի պատերից դուրս: Ալլրներում պարլամենտական կօմպակտ մեծամասնութիւն կազմող «լիբերալ խոնակը բաժանւում է իւր բաղադրիչ մասի և առաջ չի գալիս ոչ մի խոչոր պարլամենտական կուսակցութիւն, որ ունինայ մի միաձոյլ բնաւորութիւն և որ կարողնայ փոխարինել նրան», որքան որ ունենոր գասակարգերը բեալցիօննեն դառնում, նոյնքան աւելի պակաս չափով կարողանում են նըրանք կազմել միասակաղ մոսսա, նոյնքան նրանք աւելի բաժանում են մանր կուսակցութիւնների:

Տնտեսական, դաստկարգային յարաբերութիւնների բիւրեղացմամբ ամեն հարաբակական տարրի ներկայացուցիչ սկսում է ճանաչել իւր իսկական տեղը պարլամենտառում, զադարում է գնալը ուրիշուազի յետեկից, և վերջինը սարսափած տեսնում է, որ այդ շարժումը ռմջում է իւր առանձին դասակարգային ինքնազիտակցութիւնը մըշակած պրօխտարիատին, նաև ինտելիգենցիայի, մանր բարժուազի և մանր գիւղացիութեան մի մասը գէպի սօցիալիստական բանակը: Բուրժուական միծտամանութիւնը տարրալուծուած, հազիւ կարողանում է ժամանակ առ ժամանակ կօալիցիաներ, բլոկներ կազմել՝ իւր գիրքը պահպանելու համար:

«Պարլամենտարիզմը աւելի և աւելի անընդունակ է դառնում

մի որ և իցէ ուղղութեամբ վճռողական քաղաքականութիւն պահպանել: Նա աւելի և աւելի զառամեալ է դառնում»¹⁾:

Եւ չի էլ կարելի ասել, թէ այս երկոյթը տեղի ունի միայն այն երկրներում, ուր արդէն նւաճւել է լայն սամկավարական կարգեր: Ոյս երկոյթի իսկական աղբիւրը շուտով որոնելու է տնտեսական յարաբերութիւնների հասունացման, քան թէ քաղաքական հանգամանքների մէջ: Ոյս երկոյթը տեղի ունի Դեմօնիայի պէս սամկավարական տեսակէտից համեմատաբար յետ մնացած երկրում, նոյնը լինելու է անտարակյու և Առաստանում, չնայած որ բանակալութիւնը այսուեղ գեռ նոր է տապալում, և լիբերալիզմը դեռ չի սպառել իւր ոյժերը:

Բուրժուագիան սովորում է յինւել միապետութեան վրայ և դուրս գալ՝ իւր ոյժերը աւելի կոպիտ կերպով փորձելու, բանի որ սպարբամնար կամաց-կամաց անընդունակ է զառնում նրա դաստկարգային շահելը պաշտպանելու: Մենամարտի դաշտը լայնանում, տարածում է պարլամենտի պատերից այն կողմը:

Բայց ինչ է մնում ստանալ այլ ևս դեմօկրատիայից, որ հիմնեց պարլամենտար և որ այնտեղ արդէն սպառել է իւր ոյժերը, չե՞ որ մենք պէտք է գէմօկրատիայից առնենք այն, ինչ որ նա կարող է տեղակէտից մեկ մեր շահելը տեսակէտից:

Ալժմ գէմօկրատիայից մեղ մնում է ստանալ միայն ժողովը գալիքան օրէնսդրութեան սկզբունքը: Գծւար է չափազանցութեան մէջ ընկնել այս բնօրմների նշանակութեան վիրաբերմամբ աշխատառոր գասի համար. լայն մասսաները քաղաքականապէս կրթելու համար սա մի անփոխարինելի քաղաքական իրաւունք է: Մենք տասցինք վերսում, որ միշտ ժողովրդի գուալի մասը անտարբեր է մընում գէպի ներկայացուցիչների ընբառութիւնը, կամ աւելի յաճախ զանազան հանդամանքների աղդեցութեան տակ, կամ ուղղակի աղդգիտութեան պատճառով, ընտրում է ոչ իւր իսկական ներկայացուցիչներին, ընդհակառակը ժողովրդական անմիջական օրէնսդրութեան ժամանակ (ինչպէս գոյութիւն ունի ներկայում նվելյացարիայում), երբ մասսայի առաջ դրում է կոնկրեկտ հարց, օրէնքի նախագիծ, որ յաճախ շօշափում է նրա անմիջական շահերը, նա չափազանց լարւած հետաքրքրութեամբ աէտք է մտանակցի: և քանի փաղանց լարւած հետաքրքրութեամբ աէտք է մտանակցի:

1) Կայտեկի. Օպերատոր. բլոկ 79, 81.

որ այստեղ արդէն չի կարող տեղի ունենալ այնպիսի դրութիւն, եթք բուրժուական թեկնածուն նախընտրական պայքարի ժամանակ ժողովրդակացնում է մի ծրագիր, որ՝ ձայներ գրաւելուց յետոյ պարլամենտում չի պաշտպանելու, և երկար տարիներ խարելու և շահագոլծելու է ժողովրդի միամառ թիւնը, հետեւ արքար, ոյժերի փոխարձ յարաբերութիւնը աւելի մօտ կլինի իրականութեան, քան պատմենտական կեանքումն է:

Իսկ եթէ մօտենանք հարցին կուսակցական պրօպագանդիայի տեսակէտից, կտեսնենք որ ժողովրդի այսպիսի ձեռու միջամտութիւնը օրէնսդրական կեանքին, աւելի կոնկրետ, շահագործող բովանդակութիւն է տախո նրան և աւելի խորն ու համոզեցուցիչ է լինում, քան թէ սովորական պրօպագանդան, որ տարիում է տւելի տեսական հոդի վրայ: Անմիջական ժողովրդական օրէնսդրութիւնը քաղաքական կեանքի է կոչում, ներոյժ քաղաքական կեանքի այնպիսի խաւեր, որոնց վրայ ներկայացուցչական օրէնսդրական կեանքը չի կարողանում զօրեղ ազդեցութիւն ունենալ: Բոլորը համաձայն են այն բանի հետ, որ զիւղի ազգաքնակութիւնը (ինի դա մանր ուժականատէր, կամ երկրադորձական բանւոր—բառակ, միենոյն է) շատ աւելի թողի կիրարով է մասնակցում երկրի քաղաքական կեանքին, քան քաղաքի ազգաքնակութիւնը, այդպէս է զիւղի դրութիւնը պետութեան մէջ, այդպէս է երկրագործական աշխատանքի ընթրեան աւելութեամբ է խարում բուրժուազիայի և կղերականութեան կողմից, քան քաղաքում աշխատող բանւորը:

Անմիջական օրէնսդրութիւնը մի զօրեղ խթան է գաւառական, զիւղական աշխատաւոր գասակարգի քաղաքական հասունութեան համար. և այդ մինք տեսնում ենք Նեյցարիայի օրինակով, որ զիւղիութիւնը՝ իւր հասունութիւնը ունենալով շատ աւելի բարձր է, քան այլ երկրներում, ուր անմիջական օրէնսդրական իրաւունք չկայ:

Բացի դրանից, այդ իրաւունքի շնորհիւ ժողովրդի ազգեցութիւնը՝ թէ օրէնսդրական ներկայացուցչական մարմնի և թէ կառավարութեան վրայ չափազանց աճում է, որի շնորհիւ խորհրդաւութեան քօղը իշխանութեան վրայից ընկնում է:

Բայց հետաքրիր է ծոնօթանալ այն արգումենտացիայի հետ, որ բերւում է անմիջական օրէնսդրութեան դէմ. բուրժուական բառակից սոցիալիստներից մի քանիսի կողմից: Ասում են սովորաբար մասսան „խուժան է“, նա թեթեամիտ է, շուտ տղզող է, կա-

զող է տարւել զանազան բաղդախմնդիր մարդկանց ազգեցիկ ճառերով և այն, որ օրէնսդրական գործը կարող է վարել միայն ինտերուկ և այլն, որ օրէնսդրական գործը կարող է վազմամարդ ամբողջը, իբր թէ լիգենար և փոքրաթիւ ժողովը և ոչ բազմամարդ ամբողջը, իբր թէ ժողովրդի անակներակ միջամտութիւնը կառավարչական, օրէնսդրական գործերին, կարող է խոշընդու հանդիսանալ պետական մեխանիզմի նօրմալ ընթացքին, որ ժողովուրդը դեռ չի հասունացել այդ պիտի ընդհանուր գործունէութեան համար և այն:

Ի հարկէ հէնց սկզբից կարելի է նկատել այս պատմաւարանութիւնների տեսնդենցիօք լինելը, Նեյցարիայի յայտնի հրապարակախօս Կուրափին բերում է իւր երկրի անմիջական օրէնսդրութիւնից վաստեր, որնոնք ապացուցում են, որ ժողովուրդն ընդունակ է շատ լուրջ վերաբերելու զէպի այդ գործը և թեթև որոշումներ չի տալիս. բացի դրանից, ժողովուրդն ստանում է օրինագծի պատրաստի բանաձեռ և միայն քէարկում է՝ դրական կամ բացասական պատասխան դուրս բերելու համար, այնպէս որ՝ այդ տեխնիկական աշխատանքից ազատ է լինում. ինչ վերաբերում է ժողովրդի քաղաքական անասութեան, այդ առթիւ, Նեյցարական բեկերենդումի պաշտպան Գինդին ասում է. «Եյդ պայմանը (այսինքն, որ ժողովուրդը նախօրօք պէտք է հասունացած լինի) ամենալաւ միջոցն է, որպէս զի բարեացակամութեան պատրւակով ընդմիջտ զրկել ժողովրդին յարմարութիւնից, իւր գերիշխանութիւնից, իսկ մինչ այդ, բարեացակամ ինամակաները կիսուավարեն առաջւայ պէս և ժողովուրդը երբէք չի հասունանայ, առաջնինը այն պատճառով, որ ինամակաները երբէք չեն ցանկանայ ճանաչել նրան չափահաս, և երկրորդ՝ որովհետեւ նրան երբէք չեն թողնի ինքնուրոյն գործունէութեան, նա, վերջ ի վերջոյ, կկորցնի ցանկանարու և գործելու ընդունակութիւնը»¹⁾:

Փաստ է և այն, որ ժողովրդական քէարկութիւնը ոչակցիայի առաջը ընդմիջտ առնում է: Կուրափին վկայում է, որ ամենից կայուն լինում են այն օրէնքները, որոնք անցնում են ժողովրդական քէարկութեամբ. նրանք համապատասխանում են ժողովրդի կառիքներին:

«Վեօ»-ն, որ անմիջական օրէնսդրութեան մի ձեն է, յարմարութիւն է տալիս զանազան կուսակցութիւններին օպլօգիցիան դէ-

1) Курти. Исторія народ. законод. и демократія въ Швейцарії. № 168.

պի կառավարութիւնը, կամ պարլամենտը առաջ մղել ոչ միայն ռելէնսդրական ժողովում, այլև գուրսը և շատ անզամ պարլամենտում՝ փոքրամասնութիւն կազմող, կամ բոլորովին բացակայող կուսակցութիւնը կարողանում է ժողովրդական քւէարկութեամբ անցկացնել կամ ժողովրդականացնել շատ օրէնքներ:

Օրինակ, չվեցարական սուդեմօկրատիան, որ միայն 1893 թւին յաջողեցրեց իւր ներկայացուցիչն անցկացնել Ազգային ժողով (պարմենտ), կրանից շատ սուած էր, օգտւելով վերայիշեալ իրաւունքից, զօրիդ ագիտացիա էր մղում զանազան կարեռ բէֆօրմներ մտցներու համար անմիջական օրէնսդրութեամբ:

Կարիք չկայ յիշեցնելու, որ անմիջական օրէնսդրութեան կողմանիցները բոլորովին չին ժխտում պարլամենտական ներկայացուցչական սխառեմը. ներկայացուցչութիւնը միշտ պէտք է մնայ, իրեն օրէնսդրութեան հիմնական ձև, որ սակայն պէտք է խիստ հսկողութեան նեթարկել առաջինի կողմից, մանաւանդ որ պարլամենտաները ինչպէս տեսանք, կամաց-կամաց կորցնում են իրենց վատեմի նշանակութիւնը: Անմիջական օրէնսդրութեան դադարարը, պաշտպանել դեռ չի նշանակում մուսսօի ժողովրդապետութիւնը պաշտպանել, որ իրադրծելի էր կլասիկ Յունաստանում շնորհիւ ճորտական սխառեմի, մենք չենք պաշտպանում նաև Միդլբնհասուզէնի ծրագիրը, որ վերացնում է պարլամենտները և օրէնքներ մշակելու գործը յանձնում բազմաթիւ օրէնսդրական ժողովների, որոնց պէտք է մասնակցի ամբողջ ժողովուրդը: Մենք միայն պաշտպանում ենք չվեցարական անմիջական օրէնսդրութիւնը, կտմ խիստէս ասած՝ քւէարկութիւնն ու նախաձեռնութիւնը:

Սօցիալիստներից այս հարցի վերաբերմամբ մեր ուշագրութիւնը, գրաւում է Կառուցին. իւր աշխատութիւններից մէկի մէջ (Պարլամենտարիզմ և ժողովրդական օրէնսդրութիւն) նա չափազանց անորոշ զիրք է բռնում, մէկ խոստովանում է, որ այդ ինստիտուտը օգտակար է, որովհետեւ գաւառական կեանքը հանում է կղզիացած դրութիւնից (որից խիստէս միշտ օգաւել են պահպանողականները), նպաստում է զիւղացիութեան զարգացման. իսկ միւս կողմից, վատէ, որովհետեւ պրօլետարիատը, ընդունակ լինելով պարլամենտարիզմի, շատ բան սպասել ժողովրդական օրէնսդրութիւնից չի կարող, ուս դեռ վնասում է նրան այն պատճառով, որ քաղաքների ազդեցու-

թիւնը պետութեան մէջ ընկնում է, իսկ գաւառը, գիւղը ոյժ է ստանում:

Բայց այս տուարկութիւնն անհիմն է այն հասարակ պատճառով, որ քաղաքի ազդեցութիւնն ընկնում է ոչ բացարձակ, այլ յարաբերական մարով. անմիջական օրէնսդրութիւնը քաղաքի եղած պրօլետարիատի ոյժերը խօմ չի թուլացնում, նա գեռ նպաստում է. բայց որովհետեւ ինդուստրիայի պրօլետարիատը քաղաքականապէս աւելի ներոյժ կերպով է ապրում պարլամենտարիզմի ժամանակ, քան զիւղացին, այդ պատճառով էլ անմիջական օրէնսդրութիւնը իրեւ մի լրացուցիչ միջոց աւելի խոշոր ծառայութիւն է մաստուցանում զիւղին, քան թէ քաղաքին: Դիւղական աշխատաւոր մասսաները օգնութեան են հասնում քաղաքին. մենք կրկնում ենք, որ մասսաները աւելի հեշտ են խարւում ընտրութեան ժամանակ, երբ թեկնածուի գործունէութիւնը անորոշ է և անպատճախանառու, այն ինչ անմիջական օրէնսդրութիւնը կոնկրետ հարցեր է դնում ժողովրդի առաջ, որոնց վերաբերմամբ դասակարգային տեսակէտը հեշտ է պարզել. այսաեղ արգէն խոստումներով չես կարող խարել: Օրինակ՝ տպէտ անդիտակից բանւորը երբէք իւր խոկական բարեկամին, յեղափոխականին չի ընտրի պարլամենտի համար, բայց երբ զրւեց մի կոնկրետ հարց, օր. 8 ժամեւյ բանւորական օրի հարցը, ամենախուլգան բանւորը յունակի ձայն կոտյ սօցիալիստի առաջարկին, նոյնը և զիւղացու վերաբերմամբ:

Կառուցկին հէնց այդ հարցերի «կոնկրետ» ձև ստանալուց է վախինում. «այդ բնաւորութեամբ օրէնսդրութիւնը չի նպաստում կուսակցական զիփփերենցիցիալին, կուսակցութիւնների գերը նսեմանութիւնը է»: Բայց նսեմանում է կուսակցութիւնների գերը պարլամենտական ներսը և ոչ գուրաը. ընդհակառակը, շնորհիւ այդ իրաւունքի կուսակցութիւնը յարմարութիւն ունի ամենատատանող, թերահաւատ տարբերին համոզել, որովհետեւ հարցը չափազանց մօտ է ժողովրդին և չի պահանջում երկար գատութարակութիւն. բանւորութիւնը շատ հեշտութեամբ տեսնում է իւր խոկական և կեղծ բարեկամներին, այն բանւորը, որ շնորհիւ ծանր աշխատանքի շատ քիչ էր հետևում կամ բոլորովին չեր հետևում պարլամենտարիզմի գործունէութեան և քիչ էլ հասկանում էր նրա բարդ քաղաքականութիւնը:

Կառուցկին, ինչպէս երեսում է, Նվեցարիայի գասակարգային շարժման յետամենացութիւնը կապում է այս քաղաքական ինստիտու-

տի հետ։ Բայց վերջինը այստեղ մեղաւոր չէ։ Նվելցարիայի դաստիարգին կռւի թուլութիւնը և դանդաղութիւնը բոլորովին այլ պատճառներ ունի։ Դբա հիմնական պատճառները երկու տեսակ են։ մի կողմից գրա վրայ ազդել է այն հանգամանքը, որ դեմոկրատիզմը Նվելցարիայում կախնել է կապիտալիզմի զարգացումը (ինչպէս Անդրիայում դասակարգային կռււը շատ առաջ է սկսւել, քան սօցիալիստական շարժումը)։ Նվելցարիայում ամենալայն դեմոկրատիական կարգեր կային այն ժամանակ, երբ կապիտալիզմը գեռ մուտք չեր գործել այդ երկիրը։ Այդ պատճառով էլ դասակարգային կռււը քաղաքական հողի վրայ այնտեղ չի մգնել, յեզափոխութիւններ չեն եղել, իսկ դա է որ մինչև ոյժմ յեզափոխականացնում է աշխատաւոր գասակարգը և զարկ տալիս նրա գիտակցութեան, նա գասակարգային կռւի չի մղել իւր քաղաքական իրաւունքները նւաճելու համար, նա չի տեսել քաղաքական անհաւասարութիւն, երկրորդ և գլխաւոր պատճառն այն է, որ Նվելցարիայում մինչև այժմ էլ խոշոր արդիւնագործութիւնը շատ թոյլ է՝ համեմատած միւս երկրների հետ, իւնկերութիւնը բացակայում է, երկիրը քաղաքական եռուն կեանք չունի, մանաւանդ որ Նվելցարական բանւորութեան խոշոր առկոսը ստարերկրացիներ են, որ մեծ ազդեցութիւն չունեն պիտական կեանքի վրայ։

Կառուցին բերում է մի այլ արդումենտ էլ անմիջական օրէնսդրութեան դէմ։ Նա առում է։ «Նա (սօցիալ-դեմոկրատիան) երեան է գալիս իրեն պրօխտարիատի շահերի, իսկ պրօխտարիատ և ժողովուրդ—մէկ չէ»։ Իսկ մի փոքր յետոյ առում է։ «Պրօխտարիատը չի կարող նւաճել քաղաքական իրաւունքներ, գոնէ ամբողջութեամբ, մինչեւ այդ չստանան բոլորը (ընդուռումը իրենն է)։ Ուստի ս.-դեմոկրատիան դեմոկրատական ձգտումների ամենավլատահելի նեցուկն է, աւելի վստահելի, քան.. ինքը դեմոկրատիան»։ Նատ ճշմորիս է, բայց սկզբում յայտնած մտքին հակասում է, որովհետեւ այդ միտքը բերւած էր ապացուցանելու համար, թէ ժողովրդական պահանջները պարտաւորիչ չեն ս.-դեմոկրատիայի համար։ Եթէ այդպէս լինէր, սօցիալիստական տեօրիան կկորցնէր իւր ոտքի տակի իրական հողը, նա գիտական է այն չափով, որ չափով չի հակասում ընդհանուր գարգացման ընթացքին, այլ հէնց աւելի զարկ է տալիս նրան. իսկ դեմոկրատիան, ժողովրդական իրաւունքների պայմանացումը, անկախ դասակարգերից—դա այնպիսի երեսյթ է, որին,

յամենայն դէպա, սօցիալիստական շարժումը չպէտք է հակասի։ Հէնց ինքը՝ Կառուցկին է, որ րոլոր գրւածքների մէջ ձանձրալի կըրկնողութեամբ պաշտպանում է այն միտքը, որ ս.-դեմոկրատիան ժողովրդական կուսակցութիւն է իւր պահանջներով և շուտով էլ կրտնայ իւր կազմով։

Վերջապէս աչք է ծակում այն հակասութիւնը, որի մէջ նա ընկնում է Նվելցարիայի վերաբերմամբ։ Յիշածու աշխատութեան 118-ր երեսում ասում է, որ այն, ինչ որ զարդացնում է Նվելցարիայում գիւղացուն (անմիջական օրէնսդրութիւնը), յետամնաց է դարձնում բանտորին, իսկ 125-րդ երեսում ասում է „Մենք շատ լաւ հասկանում ենք միր Նվելցարական ընկերներին, երբ նրանք դուրս են գալիս պաշտպաներա. ուղղակի օրէնսդրութիւնը“ և յետոյ թւում է այն պայմանները, որ տարբերում են Նվելցարիան այլ երկրներից։ Զարմանալի է, երբ մի ինստիտուտ, որ խանդարում է բանւորի առաջադիմութեանը հէնց Նվելցարիայում, կարելի է պաշտպանել այնպիսի եռանդով, ինչպէս Նվելցարիայի սօցիալ-դեմոկրատները¹⁾։

Բայց Կառուցկին, ապացուցանելու համար, թէ ժողովրդական օրէնսդրութիւնը վնասակար է դասակարգային կռւի տեսակետից, մատնանիշ է անում Կոնգեգերանի (այս իրաւունք կողմնակից) վրայ, որ յուսով է, թէ անմիջական օրէնսդրութեամբ կարելի կինի հարւած տալ սօցիալիզմին և սօցիալիստներին։ Բայց Կառուցկին չի նըկառում այն պարզ բանը, որ Կոնգեգերանը պատկանում է այն ժարգանց թւին, որոնք դեռ կարծում են, թէ սօցիալիզմը միքանի անհատների ուղեղի սպեկուլեատի ծնունդ է, զցած շրջանառութեան մէջ, վերացական թէօրիա է, և ոչ թէ իրական կեանքի պայմանների, հասարակական գարգացման արամադրութեան արդիւնք է, մշակած և գիտական սիստեմի վերածւած։ Հէնց այն խօսքերը՝ „նրանք („սօցիալիզմի տեսակները“) դադարելով լինել քաղաքական կուսակցութիւններ (ծովովդի հսկողութեան ընտրիլ), կդառնան չկօլաներ, որոնք կմրցեն մէկը միւսի հետ աշխատելով տիրանալ ուղեղներին“

1) 1872 թվին ս.-դեմոկրատական կուսակցութեան ծրագիրը պահանջում էր ոչսահմանափակւած դաշնակցական քէպարկութիւն տուփերի միջոցով կարեսագոյն ֆինանսական կարգագործիւնների և օրէնքների վերաբերմամբ, որ կառաջարկեն խորհուրդները կամ առաջ կան ժողովրդական նախաձեռնութեան, տատշարկութեան չսահմանափակւած իրաւունքներով, որով ժողովրդական պէտք է օգտի յանձին 20,000 իրաւատէր քաղաքացիների։ Կորտի. նոյն աշխատեր. 171.

(ընդգծում իմս է): Յէ որքան „վնաս է“ գտակարգային կռւին այդ ժողովրդական իրաւունքը, մենք արդէն վերև տեսանք:

Մենք բաւական երկար կանգ առանք այս հարցի վրայ. բայց դա անհամեշտ էր, որպէսզի այժմ կարողանանք անցնել այն պայմաններին, որոնց մէջ միայն կարելի է իրականացնել այս պետական բնափառութը, և այն հետեանքներին, որ ունենալու է սրա կիրառումը:

Ժողովրդական անմիջական օրէնսդրութիւնը կամ, աւելի ճիշտը, մասնակցութիւնը օրէնսդրական կեանքին ամեսող պետութիւնը ներոյժ քաղաքական կեանքի մէջ ձգտելով, վերացնում է պետութեան կենտրօնացումը քաղաքական տեսակէտից. կենտրօնացած պետութեան մէջ լայն քաղաքական կեանքով ապրում է միայն կենտրօնական վայրը, կամ ամենաչափը, շրջանը. պետութեան միւս մասերը աւելի թոյլ մասնակցութիւն են ցոյց տալիս, անմիջական օրէնսդրութիւնը ձգտում է գաւառը հաւասարեցնել կենտրօնին, կամ առնւազը գաւառի ազգեցութիւնը գորեզացնել: Եթէ այդպէս է այս ժողովրդական իրաւունքի ազգեցութիւնը, նա անտորակոյս աւելի հետաքրքրութեամբ կիրականանայ ոչ թէ կենտրօնացած պետութեան այլ ընդհաւառակը պետութեան լայն ապակենտրօնացման պայմանով միայն. գեռ թողնենք մի կողմ տեխնիքական յարաբերութիւնը, որ ներկայացնում է ապակենտրօնացումը այդպիսի մի գործի համար: Ապակենտրօնացումն անհամեշտ է այն տեսակէտից, որ քւէարկւելիք օրէնքները կարող են չփերաբերել ամբողջ պետութեան, այլ նրա մի որեէ մասին, նահանգին: Ամբողջ ազգաբնակութիւնը մասնակից դարձնել մի որեէ գաւառի վերաբերող հարցի քւէարկման, և անարդարացի կինսի, և չի արտայայտի խական արամազութիւնը. անարդարացի կինսի մի նահանգի վերաբերող հարցի քւէարկութեան մէջ հաւասար արժէք տալ այդ նահանգի և պետութեան այլ մասերի քաղաքացիների ձայներին, որոնք անմիջապէս շահագրգուած չեն հարցի այս կամ այն լուծման մէջ, չի արտայատի իսկական գրութիւնը, որովհետեւ այլ մասերի պատահակութիւնը ոչ կարող է լաւ տեղեակ լինել գործին, և ոչ էլ շատ լուրջ վերաբերել. դա սրարդ է:

Բայց առենք թէ ընդունեց, որ ամեն վայրի վերաբերեալ հարցերը քւէարկւելու հն այդտեղի քաղաքացիները. այդ դէպքում հարց

է առաջ դալիս, ինչ յարաբերութեան մէջ է լինելու այդ նահանգի քւէարկութեան կոմպետենցիան կենտրօնական օրէնսդրական մարմնի կոմպետենցիայի հետ. դա մի անլուծելի հարց է, որ ստեղծում է մի կենտրօնացած պետութեան մէջ, որի կենտրօնական և միակ օրէնսդրի մարմինը և՛ ամենակարող է, և՛ սահմանափակուած, այն էլ ոչ ամբողջ ժողովրդի, այլ այս ինչ կամ այն ինչ նահանգի կողմից, և ոչ գոնէ սահմանադրութեան հիմնական կէտերում, այլ ամեն մի կոնկրէտ օրէնսդրական ակտի վերաբերմամբ:

Այդպիսի գրութիւն պետութեան մէջ գոյութիւն ունենալ չի կարող: Կ. Կառւցկին պարզ ասում է, որ ըեփերենուումի և նախաձեռնուութեան ներմուծումը կախած է զանազան պայմաններից, որոնցից մէկն է «չափազանց կենտրօնացած պետական իշխանութեան բացակայութիւնը, որ անկախ հակադրւած է ժողովրդական ներկայացուցչութեան», կամ ինչպէս ինքն անւանում է «կեղծ-պարլամենտարիզմի բացակայութիւնը»¹⁾: Բայց ես չեմ կարծում որ կենտրօնացած պարլամենտարիզմի մէջ կարելի է իրականացնել այդ ժողովրդական իրաւունքը վերև յիշած պատճառով, մասնաւոնդ որ ինքը Կառւցկին էլ մի քանի անդամ նոյն գրւածքի մէջ, շեշտում է, որ անմիջական օրէնսդրութիւնը ցրում է կենտրօնը ամբողջ դրսութեան մէջ, առաջ բերելով գաւառական գորեղ քաղաքական կեանք:

Իրականութիւնն էլ ցոյց է տալիս, որ անմիջական օրէնսդրութիւնը մինչեւ այժմ գործադրւել է ֆէզէրացիաների և ապակենտրօնացած պետութեան մէջ, օր. Նվէցարիայում: Հետաքրքիր է ինչ այլանդակ եղանակացութիւններ կստացնէր, և թէ ամբողջ նրաւանական կայսրութիւնը քւէարկէր մի որ և իցէ Վիկտօրիային, կամ Կևինօլէնտին վերաբերող օրինագիծ:

Այժմ առաջ է գալիս մի հարց. Ինչպէս պէտք է տեղի ունենայ գաշնակցական պետութեան մէջ այդ անմիջական օրէնսդրութիւնը: Նվէցարիայում կանտօնների շահերի ծայրացեղ պաշտպանները պահանջում էին, որ դաշնակցական օրէնքների քւէարկութիւնը

1) Կառւցկին ուզում է առել՝ պարլամենտից անկախ, ըէակցիօն կառավարութիւնը կարող է շահագրծել այդ իրաւունքը, գործ գնելով իւր անկախ իշխանութիւնը ժողովրդի վրայ: Գտ ի հարկէ միանգամայն ճշմարիտ է. բայց ոչ է ասում որ անմիջական օրէնսդրութիւնը հաստատի գեռ կեղծ-պարլամենտարիզմի ժամանակ, բայց դա չի նշանակում, որ ծրագրի մէջ պարզ կերպով շեշտել պէտք չէ:

Հոյնպէս առղի ունենայ կանտօնական սիստեմով, ինչպէս և սահմանադրութեան, այսինքն ձայները հաշւելիս, հաշւի առեւի կանտօնական ձայները, ննթադրելով, որ եթէ միայն բոլոր քաղաքացիների ձայները որոշելու լինեն հարցը, կանտօնական շահերը կտուժեն և կենտրոնը իրը թէ կուժեղանայ: Բայց այստեղ պէտք է մտարերել այն հիմնական գծերը, որոնցով բնորոշեցինք դաշնակցական սիստեմը. մենք ի միջի այլոց ասացինք, որ ֆէդէրալիզմը պահանջում է, որ սահմանադրութեան այն կէտերը, որոնք որոշում են նահանգների և դաշնակցական իշխանութեան կոմպետենցիաները, հաստատւեն և փոփոխման ենթարկեն կանտօնների մեծամասնութեան համաձայնութեամբ. բայց դա բոլորովին չի նշանակում, որ մի անդամ ընդդից կանտօնին, կամ կենտրոնին թողած իրաւունքից օգտուելու համար մէկը պէտք է ստանայ միւսի համաձայնութիւնը. կանտօնների համաձայնութեամբ կարող է մի որ և է իրաւունք անցնել կենտրոնական իշխանութեան. օրինակ՝ զաշնակցական պարլամենտի ընտրութեան սիստեմը որոշելը. եթէ այդ իրաւունքը անցնում է դաշնակցական իշխանութեան լիազօրութիւնների շարքը, գրանից յետոյ նրա գործն է, թէ ինչպէս կօգտվի այդ իրաւունքից: Եթէ կանտօնները հրաժարուել են այդպիսի օրէնքներ հրաժարակելու իրաւունքից, ել ինչպէս կարող են իրենց ազգեցութիւնն ունենալ կենտրոնական իշխանութեան այդ փունկցիայի վրայ: Այս նոյն կարծիքը յայտնում է Շվեյցարիայում պատգամաւոր Բլիւմէրը. „Եթէ սահմանադրութեան փոփոխման համար, տուում է նա, հարկաւոր է կանտօնական քուէալիզութիւն, դրա համար բաւականաշապի հիմք կայ այն առսակէտից, որ սահմանադրական հարցերում խնդիրը վերաբերում է դաշնակցութեան և կանտօնների կօմպետենցիաների սահմանների որոշման: Նակ օրէնսդրութիւնը զաշնակցութեանը յանձնած կօմպետենցիաների կանտօնների գործման: Նակ օրէնսդրութիւնը զաշնակցութեանը է միայն և կանտօնների քուէալիզութիւն այստեղ այնպիսի հիմք չունի, ինչպէս սահմանադրական հարցերի վերաբերմամբ»¹⁾:

Այս հարցը պարզելու համար անհրաժեշտ է յիշել թէ ինչպէս ենք հասկանում մենք նահանգների և դաշնակցութեան յարաբերութիւնը—ֆէդէրալիզմը:

Կանտօնների շահերի նախանձախնդիրներից շատերը կանգնած

են աւելի պետութիւնների դաշնակցութեան, քան թէ դաշնակցական պետութեան տեսակէտի վրայ. ֆէդէրացիա, ֆէդէրալիզմ անունը յաճախ այդ երկու համակացութիւններին էլ տալիս են, առաջինը՝ ֆէդէրալիզմը հին մտքով, կայանում է նրանում, որ կենտրոնական իշխանութիւնը օրէնսդրի պէտք է լինի, բայց նրա օրէնսդրական գործունէութիւնը պէտք է արտայայտի ոչ ամբողջ ժողովրդի ցանկութիւնները անկախ կանտօններից, այլ այդ կանտօնների, իրեր պետութիւնների, և այդ է պատճառը, որ կային մարդիկ որոնք առաջարկում էին ոչ միայն սահմանադրական հարցերի վերաբերմամբ ձայն տալ կանտօններին, այլ և սովորական օրէնսդրութեան հարցերում: Ինչպէս վերեւում տեսանք, Միացեալ-Նահանգների ներկայ դաշնակցութիւնը թէ կօնդրէսի ընդհանուր զործունէութեամբ և թէ սենատի ընաւորութեամբ (ներկայացուցիչ ինելով նահանգների, սենատորները, այնուամենայնիւ, մասնակցում են օրէնսդրութեան ոչ իրեր նահանգի կարծիքների տրամայականիներ, այլ ամբողջ պետութեան) գալիս է մի աւելի նոր հասկացողութիւն տալու ժամանակից ֆէդէրալիզմին: Պէտք է տեղի ունինայ փունկցիաների բաժանումն նահանգների և դաշնակցութեան մէջ, և դրանից յետոյ երկուսն էլ անկախ են իրենց ընդհանակի մէջ, որ որոշել է սահմանադրութիւնը: Մենք ֆէդէրացիայի կողմանից ենք ոչ նահանգների աղքացութիւնը կենտրոնական օրէնսդրութեան վերաբերուն էլ ապատակն է, որ նահանգները ուներայ տարածելու համար: Մեր նպատակն է, որ նահանգները ունենաց նահանգի վերաբերեալ հարցերում ազատ օրէնսդրական նան իրենց նահանգի վերաբերեալ հարցեր, նոյնպէս պէտք է լինի անկախ կանտօններից և կենտրոնական օրէնսդրութեան ժամանակ կանտօնների սահմանադրել ոչ մի գեր չպէտք է խաղան: Եթէ այդպէս հասկանակ ժամանակից ֆէդէրալիզմը վերի բերած հարցը անմիջական օրէնսդրութեան մասին, ինքըստինքեան լուծուում է, կանոնական քուէալիզութիւն են երենց կօմպետենցիային վերաբերող հարցերը անկախ դաշնակցութիւնից, սա էլ իւր օրէնսդրական զործութիւնը նէութեան մէջ կիրառելով անմիջական օրէնսդրութեան իրաւունքը, նոյնպէս ուշագրութիւն չի դարձներու կանտօնների սահմանադրերի կանգրայ և դիմելու է դաշնակցութեան բոլոր բայցարացիներին: Կանոնական հարցերի վերաբերմար»¹⁾:

1) Կորտ. երես 179.

ըի կոմպետենցիաների սահմանները որոշելու հարցը (այսինքն սահմանադրութեան հիմնական կէտերը) քւէարկելիս:

VII.

Ներկայացուցչութիւնը աւելի ու աւելի դեմօկրատիզացիայի ենթարկելով, բերում է պետութիւնը անմիջական ժողովրդական ձայնատութեան սիստեմին: Դա պահանջում է հետեւղականութիւնը, առաջ թէ ոչ սկզբունքը խախտած կլինի:

Բայց մինք որ արտասանում ենք դեմօկրատիա խօսքը, յաճախ նրան քաղաքացիական և քաղաքական պատութիւնների հասկացողութեան հետ ենք շփոթում. դեմօկրատիայի այդպիսի հասկացողութիւնը լիբերալիզմին է յատուկ և վայել: Խոկ մենք դեմօկրատիզմ ասելով պէտք է հասկանանք ուրիշ բան. դեմօկրատական մենք անւանում ենք այն երկրին, որտեղ լուծւած են բոլոր հասարակական այն հարցերը, որ անմիջական կապ չունեն սօցիալիստական յեղափոխութեան հետ: Դեմօկրատիզմը,—գա լուծումն է բոլոր հարցերի, բացի մեծ սօցիալիստական պրօբլեմից: Դեռ աւելին, դեմօկրատիզմը իւր մէջ պէտք է պարունակէ բոլոր այն միջոցները, որոնցով պէտք է մաքրու սօցիալիստական յեղափոխութեան ձանապարհը, նա պէտք է վերացնի դասակարգային կուրի հետ առնչութիւն չունեցող և այդ կուրը թուլացնող, կամ բարդացնող կողմնակի մօմենտները: Յս խսկական դեմօկրատական կանւանեմ միայն այն պետութեանը, որտեղ պետական կեանքում, ներկայացուցչական օրէնսդրական մարմիններում տեղի է ունենում լոկ չքողարկւած, պարզ դասակարգային կուր, ուր ոչ մի միջոց չկայ տիրող դասակարգի ձեռքին, այլ արտայացութիւններ տալու այդ կուրին, բացի կոպիտ, պարզ դասակարգին շահից:

Սյապիսի պետական կազմը պէտք է լինի սօցիալիստական կուսակցութեան նւազագոյն քաղաքական պահանջ, և ոչ զուտ մանշեատերական, քաղաքական «առատութիւնները», ինչպէս տեսնում ենք մի քանի կուսակցութիւնների ծրագրում:

Մենք մինչև սցմ խօսել ենք մի շարք մօմենտների և մի քանի դեմօկրատական առաւելութիւնների մասին, որ ներկայացնում է ֆէդերատիւ պետութիւնը, կենտրոնացման հետ համեմատելիս:

Նի հետ համեմատած, դա ազգային հարցի՝ գեմօկրատիզմի այս ամենակատաղի թշնամու դրութիւնն է ապակենտրոնացման մէջ: Ապակենտրոնացումը, անհամեմատ աւելի գիւրութիւն է տալիս ազգային կնճռու հարցի լուծման կամ մեղմացման համար, քան թէ մի կենտրօնացած պետութիւն: Թէ ազգային հարցը նրան կարող է կասեցնել դասակարգային կուրը և պետութեան գեմօկրատիզմին, գա, վանք Աստուծոյ, մենք լաւ գիտենք, և զնահատում ենք ըստ արժանոյն ազգային հարցի լրջութիւնը:

Բայց այն հասարակական թէօրիան, որ ազգային հարցը համարում է ծնունդ ժամանակակից կապիտալիստական ձեր տնտեսութեան, որ ազգային անտազոնիզմը համարում է գաստկարգային անտօգոնիզմի մի արտայայտութիւնը միայն, թոյլ չի տալիս մօրդկանց ազատ մտածելու, աւելի երկար կանգ առնելու այսպիսի խոչը պատամական երկոյթի վրայ, որովհետեւ, իսկապէս, ևթէ ազգային հարցը ծնունդ է կապիտալիզմի. և դասակարգային կուրի արտայայտութիւն, այդ դէքրում ի հարկէ, անմտութիւն, նոյն խոկ յանդինութիւն կլինէր զանազան փորձեր, էքսպերիմենտներ անել՝ իրականութեան երկարթէ անհաժեշտութիւնը մէջտեղից վերացնելու համար: Ինքօրմներ սուածարկել ազգային հարցի լուծման համար, նոյնն է թէ կապիտալիզմի առաջնարարացութեան օրէնքը չհասկանալ, ձգտել նրան ինքօրմներով փոխել, այլ ուղղութիւն տալ, և դա ի հարկէ սօցիօգիտական պարզամտութիւն կլինէր:

Բայց իրօք ազգային հարցը ծնունդ է կապիտալիստական տընտեսութեան, չէ եղել նոյն հարցը հրապարակի վրայ կապիտալիզմից շատ ու շատ գարեր առաջ:

Այս հարցում էլ ինչպէս ուրիշ շատ հարցերում, բոլորովին կողմնակի շարժառիթը շփոթում են առարկայի, երեսյթի էութեան հետ, նրանց մէջ զինետիքական կապ են հաստատում: Եթէ կապիտալիզմը ծնունդ է ազգային հարց, հապա ինչու նրա այդ ծննդաբերութիւնը չենք տեսնում, օրինակ՝ միեւնոյն ազգութեան մէջ: Հարցին այսպիսի ձեր կարող է տարօրինակ թւալ, բայց նթէ տընտեսութիւնը աղքիւր և ազգային հարցի առաջացման, շատ բնական է պահանջել, որ նո շփնտուի անհրաժեշտ հանգամանեներ, այլ մօմենտներ, որոնց արդէն ինքը, կարծեմ, չի ծնել:

Որ ազգային հարցը գոյութիւն է ունեցել կապիտալիզմից շատ առաջ, դրա մասին վկայում է ամրող մարդկութեան պատութիւ-

Նը: Հարցը միայն նրանում է, թէ ինչու կապիտալիստական անտեսութեան օրով (և ոչ միայն այդ օրով, այլ ընդհանրապէս եւրոպական լուսաւորութեան զարում) ազգային հարցը այդպէս առաջ մըդւեց հասարակական-պատմական հրապարակը:

Թէ ազգութեան հիմնական մօմենտը բասարական-բիօլօգիական մօմենտն է, բայց ամբողջ այդ հասկացողութիւնը չի պարփակւում բասարական առանձնայատկութեան մէջ, և բացի գրանից, հէնց այդ բասարական տարբերութիւնը զարգացման միենոյն աստիճանի վրայ չի լինում, քա մի պրօցէս է, որ կարող է և ըեղրեսիւ և պրօգրեսիւ բնաւորութիւն ունենալ: Օրինակ՝ կարելի է ասել, որ ինտելլիգէնս մարդը աւելի զօրեղ կերպով է արտարայտում իւր ազգութիւնը, քան տղէտը, նրա վրայ աւելի ցաւոս կերպով է անդրադառում ազգային ճնշումը, քոն տգէտի վրայ: Այժմեան գերմանացու մէջ, օրինակ՝ աւելի է զարգացած զերմանացու հոգեբանութիւնը, քան թէ նրա նախանայրելի մէջ և այն, ի հարկէ նո զանազան հականազգեցութիւններ աչքի առաջ չունեմ:

Եթէ վերցնենք հին դարերը, կտեսնենք, որ այնտեղ, թէ կային ազգութիւններ, բայց ազգային կետնքով ինտենսիւ կերպով ապրում էր ժողովրդի միայն չնչին փոքրամասնութիւնը, այն էլ ոչ այնչափ, ինչպէս այժմ: Այն ժամանակայ կուլտուրական հարստութիւնները, գրականութիւնը, եկեղեցական լուսաւորութիւնը և այնշատ չնչին լինելով հանդերձ, մատչելի էին միայն մի ազգի, մի ժողովրդի տիրող և ամենաբարձր գասակարգին: Հոգեսրականութեան և ազնւականութեան: Ամբողջ ժողովրդական մասսան բոլորովին կտրւած էր կրթութիւնից ընդհանրապէս և ազգային կուլտուրայից օգտւելու և նրան զարգացնելու յարմարութիւնից մասնաւորապէս, զրա վրայ եթէ աւելացնենք այն հանգամանքը, որ նրա ազգեցութիւնը պետութեան քաղաքական կեանքի վրայ յաճախ հասցըած էր զրօի, մենք կհասկանանք, թէ ինչու նա իրենից չէր ներկայացնում ազգ, այլ միայն անգոյն մասսա՝ ժողովուրդ:

Լուսաւորութեան գարը, բոլորովին տակն ու վրայ արեց այս անգոյն մասսային, զիսաւորապէս չնորհիւ տպագրութեան՝ վիտութիւնները, գրականութիւնը և ընդհանրապէս «ազգային կուլտուրան» հակայական ոյժով ծակեց հասարակութեան վերին շերտերը և արագութեամբ տարածւեց նրա ներքին խաւերում. շնորհիւ այն հանգամանքի, որ ազգային լեզուից և կուլտուրայից սկսեցին օգտւելի

ժողովրդի մեծ մասը, քան առաջ, այդ ինքուն և այդ կուլտուրան առելի բարգաւաճեցին և որ զիսաւորն է, ուելի հարազատ դարձան մասսաներին և խոր արմատներ ձգեցին նրա հոգերածութեան մէջ: Տընաեսական բարգացած պայմանները և յարաբերութիւնները իրենց տեխնիքական առաջադիմութեամբ նոյնպէս ալեկոծեցին նախկին ճահճիքը: Կուլտուրան տարածւում էր և նրա ալիքները հասնում էին մինչև ամենայիշին գիւղերը, թէ ի հարկէ ոչ այն չափով, ինչպէս կենարօնական վայրերը: Ժաղովուրդը իւր կուսական հոգերանութեամբ այնպէս զարկ է տալիս և այնպէս ճոխացնում է ազգային լիզուն և կուլտուրան, որպէս անկարող էին տիրող գասակարգերը իրենց սպառած-գատանած հոգեկան ոյժերով: Այդ երեսովը ամեն մի ազգի մէջ կտրելի է գտնել: Հէնց մեր ազգատ իրականութեան մէջ, մեր գրական կեանքում տեսնում ենք, որ գրականութիւնը, զեզարւեսար, լեզուն հարստանում, բարգաւաճում են այնքան, որքան կարապանում են օգտւել ժողովրդական հոգերանութեան անսպառ աղբիւրից, և որքան ի հարկէ կլթութիւնը թափանցում է այդ ժողովրդական լայն խաւերը:

Հասկանալի է, որ այլ մօմենտների թւում, որոնք ազգել են ազգային կուլտուրայի հաստատման, պէտք է յիշել և զարգացած հաղորդակցութիւնը, քանի որ նա խախտեց կղզիացած կեանքը և մինչոյն ցեղի հատւածներին զարձրեց միենոյն ազգութեան հատւածներ:

Ուշադրաւ է նաև այն հանգամանքը, որ դասակարգային շերտաւորումը նոյնպէս նպաստել է ազգային կուլտուրայի աւելի ուժեղ զիմանը թեառն ամեն տեսակ ասսիմիլիատորութեան, մի հաստատւած ազգի տիրող կարգերը շատ աւելի հեշտութեամբ են ենթարկւում ասսիմիլիացիայի, որովհեակ դրա մէջ նրանք անտեսական շահ ունեն¹⁾: Ընդհակառակը, աշխատաւոր գասակարգը, որ հակալրւած է թէ իւր և թէ օտար տիրող գասակարգին, շահազըր-

1) Ի հարկէ նրանք ազգակում են յանուն ազգային իրաւունքների, բայց այդ ճայնի մէջ միայն զասակարգային նոտան է հնչում, քանի որ նրանք բոլորին խորթանում են դէպի իրենց մայրենի կուլտուրան: Դրատ բուրժուազիան ահազին կռիւ է սկսում այն բանի համար, որ աւորած-ունդապական գեկեցացի մէջ կրօատ անդամները իրաւունք ունենան բացարձիւ իրենց լեզով այն իսկ ժամանակ, եթե իրենց սեփական պարլամենտում նրանք զործ են ածում օտար լեզու, որովհետեւ իրենցը չզիտին. այդ է բուրժուական ազգային շահը..

գուած է չափազանց ազգային կուտուրայի ապահովութեան մէջ, քանի որ այդ է միակ միջոցը, որ նա ունի յառաջաղիմութեան և դասակարգային գիտակցութեան իւրացման համար:

Պարզ է ուրեմն, որ ազգային գաղափարը և նրա որոշ դրութիւնից առաջ եկող ազգային հարցը ոչ թէ կապիտալիզմի ծնունդ է, այլ նա նոյնպիսի մօմննում է ժողովուրդների կեանքի մէջ, ինչպէս ինքը տնտեսական մօմննում, որ նա մտնում է մարդկութեան պրօդրեսի հասկացողութեան բովանդակութեան մէջ, և այն հակադգեցութիւնները, որ նա ստանում է տնտեսական և այլ մօմննուներից, ոչ թէ բովանդակութիւն և առաջի այդ գաղափարին, այլ շարժանիք են դառնում նրա զարգանալուն, զօրեղանալուն կամ թուլանալուն:

Մեր նպատակից դուրս է այդ հարցի վրայ երկար կանգ առնելլ:

Փաստ է, որ անցեալում և ներկայում քաղաքական և սօցիալական հանգամանքներ զանազան ազգութիւններին ըլել են անհպատ պայմանների մէջ, նրանց զարգացումը կանգ է առնում, խափանւում է և առաջ է բերում ճնշւածի կողմից զօրեղ դիմադրութիւն:

Այդ ճնշումը յաճախ զգում են իրենց վրայ ժողովրդի բոլոր տարրերը՝ և՛ շահագործող, և՛ շահագործող դասակարգերը: Այդ պատճառով տռաջ է գալիս «Եղբայրացում» երկու իրենց էութեամբ, սօցիալական դրութեամբ անհաջտ հասարակական տարրերի, որը շատ կորստարեր է աշխատաւոր մասսաների համար, որովհետեւ «ընդհանուր» ազգային շահը, որ չափազանց այժմէութիւն է ստանում, վարագուրում է դասակարգային անտաղօնիքմը,—և բոլոր վին փչացնում է դասակարգային կուի քաղաքական արտայայտութիւնը: Սա իրականութիւն է: Խնչլիսի գիրք ուզում էք բռնեցէք դէպի ազգային հարցը սկզբունքով, ուզում էք համարէք նրան կապիտալիզմի ծնունդ, ուզում էք տոզորէք առելութեամբ դէպի ազգային «արհամարնելի առանձայտակութիւնները», անւանեցէք գաղափարը բուրժուական, կամ կանդնած եղէք իմ վերև բերած տեսակէտի վրայ—այդ միենայն է և այս կամ այն տեսակէտաը չի վերացնում հարցի լուծման անհրաժեշտութիւնը. նա մնում է առկաս: Սօցիալիստական կուսակցութեանը հարկաւոր է որոշ և պարզ քաղաքականութիւն դէպի հարցը, երկու տեսակ քաղաքականութիւն

իարելի է ունենալ, կարելի է, առաջինը՝ ուզում կա բացասական գիրք բռնել դէպի հարցի լուծումը, վնասակար համարելով զբաղւել այդ հարցով, կամ յետաձգել նրա լուծումը մինչեւ... սօցիալական յիդափոխութիւնը: Այս գիրքը ոչ ոքի չի գրաւում, որովհետեւ ժխտելով՝ իրականութեան փաստը չի վերանում. ոչ ազգերն են ձուլում, ոչ «համերաշխութեան» գաղափարը իւրացնում, այլ շարունակում է ձանձրացնել: Հարկաւոր է մօտենալ հարցին որոշ միջոցներով, եթէ ոչ լուծելու, գոնէ մեղմացնելու գաղաքական, արհեստական ազգեցութիւնից ազատելու:

Դեռ գոյութիւն ունեն մարդիկ, որոնք կարծում են, թէ ազգային հարցի լուծման համար (որքան որ նա լուծելի է կապիտալիստական կարգերում), բաւական է պետութեան մէջ ապրող բոլոր ազգերի քաղաքական և քաղաքացիական հաւասարութիւնը, որ աղբային ճնշումների աղբերը այդ անհաւասարութիւնն է, երբ ուժեղ ազգի բուրժուազիան քաղաքական օրէնսդրական յարմարութիւններ է ստեղծել հարստահարելու աւելի թոյլ ազգութիւնները: Ճանաչել լեզուների, գվարչների հաւասարութիւնը, իրաւունք տալ հասարակական հիմնարկութիւններում գործ ածել մայրենի լեզուն և այն այդ բոլորը շատ բաւական է, որ ճնշումները վերանան և հաստատի խօսկան ազգային հաւասարութիւն: Այս տեսակէտը մանշեստերական-բուրժուական ազատութեան գաղափարն է, որ սակայն իրացրել են սօցիալ-դեմոկրատական շատ կուսակցութիւններ: Բուրժուական լիբերալիզմը՝ աշխարհի երեսին շարիքի արմատը տեսնում է իրաւական անհաւասարութեան մէջ: Նրա կարծիքով չարիքը կիրանայ, եթէ բոլորը հաւասար լինեն օրէնքի առաջ, վայելին հաւասար չափով գաղաքական իրաւունքներ և այլն:

Պարզ է, որ այստեղ իրաւունքների հաւասարութիւնը շփոթում է ոյժերի հաւասարութեան հետ, կամ, թերես, ենթադրում է, թէ առաջին հաւասարութիւնը կտայ և երկրորդը:

Բայց մնաք լաւ զիտենք, որ իրաւական հաւասարութիւնը ոչ մի շրջանում չի տալիս հաւասարութիւն: Բանւորի և նրա գործարանատիրոջ գաղաքական իրաւունքների հաւասարացումը չխանգարեց, որ առաջինը ամրողովին կախւած մնաց երկրորդից. բանւորի իրաւական անկախութիւնը չտեղծեց անկախութիւն անհաստական:

Դեռ բաւական չէ, որ պետութիւնը թոյլատի, ճանանչի ազ-

գերի իրաւունքները և հաւասարութիւնը, հարկաւոր է, որ նա միջոցներ հայթայինի և քաղաքացու համար այդ իրաւունքից օգտւելու հնարաւորութիւն տայ: Դա արդէն կնշանակի, ոչ միայն ազատել քաղաքացուն որոշ կապանքներից, այլ և որոշ քաղաքական ինստիտուտներ առաջացնի այդ իրաւունքը ապահովելու համար: Պայմանագրի մանչեստերական ազատութիւնը չի ապահովում բանւորին կապիտալիստի ճշգումներից, դրա համար էլ գեմոկրատիան նւաճել է որոշ դրական միջոցներ, օրինակ՝ գործարանային տեսչութեան և առհասարակ հակողութեան համար աւելի կամ պակաս նպաստաւոր պայմաններ: Նոյնը անհրաժեշտ է և ազգային հարցի վերաբերմամբ: Բայց այդպիսի միջոցներ անկարող է հայթաթել կենտրօնացած հանրապետութիւնը նոյն իսկ ամենալայն գերմակրատիզմի միջոցով (եթէ միայն միակ իրաւական հաւասարութիւնը կարելի է գեմոկրատիզմ անւանել):

Ամեն մի պետութեան մէջ, ուր ապրում են այլազան տարրեր, ազգութիւնների, ազգութիւններից մէկը իւր քանակութեամբ կամ կուրսուրական ոյժերով գերիշխող և կարգեր թելափող է լինում: Այդ ազգութեան բուրժուազիան միշտ յարմարութիւն կունենայ զրօի հաւասարեցնել սահմանադրութեան մերկ կէտերը ազգերի, լեզուների և դպրցների հաւասարութեան վերաբերմամբ, եթէ նա իրաւունք կունենալ մասնակցելու ամբողջ պետական և գաւառին վերաբերող օրէնսդրութեան վարչական գործերին: Նա միանգամյան ապարդիւն կդարձնի սահմանադրութեան բարի ցանկութիւնները, որ նոյնքան ծաղրի առարկայ կլինեն, որքան Աւստրիայի սահմանադրութեան ազգային հաւասարութեան վերաբերող կէտերը: Ինքնավարութիւնները և այլ պետական իմնարկութիւնները իրենց կազմով և ազգեցութեամբ անկարող կլինեն դիմագրել բուրժուազիայի ոտնձգութիւններին, որոնք, սակայն, խուսափող կլինեն և պաշտօնական, իրաւաբանական դիմադրութեան համար հող չին տայ:

Ուրեմն այլ միջոցներ պէտք է ձեռնարկել: Զարիքի արմատը, նրանումն է, որ կենտրօնական իշխանութիւնը իրաւունք ունի խառնըւելու ազգային գործերին և օրէնքներ մշակելու երկրի բոլոր մասերի ազգարնակութեան համար: Պէտք է զրկել նրան այդ իրաւունքից, բայց ում յանձնել այդ իրաւունքը: Այստեղ արդէն մենք հանդիպում ենք մի քանի առաջային միայն գիտակցել այս կամ հրաժեշտ պայմաններ չեն: Հարկաւոր է միայն գիտակցել այս կամ ազգութեան պատկանելը և առանձնապէս մացնել անունները ազգային տօմարների մէջ, և այդպիսով կստացւի մի կազմակերպած իրաւական անհատ, ազգը կնմանեի մի որեւէ ընկերութեան, կամ անշպէս, ինքը՝ Սինօպտիկուսը համեմատում է, որեից կրօնական

«Բունդ» կազմակերպութիւնը, և որ գեռ ոչ մի պետութեան մէջ իրականացած չէ: Ինչումն է կայտանում այդ պրօեկտը. «Բունդը» առաջարկում է ազգային կուլտուրական աւտօնոմիա. բովանդակութիւնը հետեւալն է. կենտրօնական օրէնսդրութիւնը զիջում է ազգութիւններին, իրեւ իրաւաբանական անհատների այն ֆունկցիաները, որոնք վերաբերում են ազգերի զուտ կուլտուրական կեանքին՝ լեզվին, գլորոցներին և այլն. ազգութիւններով իրենց գործերը վարելու համար գեմոկրատական ընտրութիւններով կազմում են օրգաններ էլ. այդ օրգանները ստանձնում են այն ֆունկցիաները և կոմպետենցիան. որ պէտք է պատկանէր կենտրօնական իշխանութեան համապատասխան մարմիններին, և այդպէս բոլոր ազգութիւնները: Հիմնական սկզբունքն այն է, որ աւտօնոմիան տերրիտորիալ չէ, այլ տարածւում է ամեն մի ազգութեան բոլոր անդամների վրայ, որտեղ էլ նրանք բնակւելիս լինին: Եթէ կան այնպիսի կուլտուրական կարգենէր, որոնց բաւարարութիւն տալը մի ազգութեան ոյժերից վեր է, դրա համար գոյութիւն կունենայ բոլոր «սէյմերի» գաշնակցական մարմինը, որը և կհոգայ այդպիսի կարիքները: Այս զուտ ազգային կուլտուրական հարցերից դուրս, աւտօնոմիան դափարում է գոյութիւն ունենալուց և ազգային աւտօնոմիաներին պատկանող քաղաքացիները սովորական ձևով մասնակցում են պետական կեանքին այլ ֆունկցիաներին¹⁾:

Այս պրօեկտը յիշեցնում է մի այլ աւելի բարդ և զուտ իրաւաբանական պօստուլատների վրայ հիմնած թէօրիա. խօսքս Սինօպտիկուսի «Օզգերի կազմակերպութեան» կամ «Ազգային իրաւունքի» մասին է²⁾: Սա փոքր ինչ այլ կերպ է մտածում. ազգութիւնները պետական-իրաւական անհատներ դարձնելու համար պէտք է զեկավարել ոչ ծագման, ինքը և այլ նշաններով. դրանք անհրաժեշտ պայմաններ չեն: Հարկաւոր է միայն գիտակցել այս կամ ազգութեան պատկանելը և առանձնապէս մացնել անունները ազգային տօմարների մէջ, և այդպիսով կստացւի մի կազմակերպած իրաւական անհատ, ազգը կնմանեի մի որեւէ ընկերութեան, կամ անշպէս, ինքը՝ Սինօպտիկուսը համեմատում է, որեից կրօնական

1) Այս հարցի աւելի մանրամասն բացատրութիւնը տես Մեծմ. Ը.-Հեմոքրատիա և ազգութեան վորոշ.

2) Синооптикус, Государство и нація. ռուս. թարգմ.

միութեան, օր. կաթոլիկ եկեղեցուն: Այս կազմակերպութիւնը լինելով իրաւաբանական անհատ, կունենայ բոլոր իրեն վերաբերող օրէնքները և գործելու յարմարութիւնները. պէտք է տաել, որ այդ կազմակերպւած ազգերի իրաւունքները Սինօպակիուսը աւելի լայն է հասկանում, քան «Բունդը» իւր աւտօնոմիայի. նա ունի բացի ազգային կուլտուրական հարցերին վերաբերող իրաւունքներից, նաև լայն քաղաքացիական իրաւունքներ, քրէական, և պետութեան մէջ, այսպէս առած, «միջազգային» յարաբերութիւններից առաջ եկած անբաւականութիւնները վերջացնելու իրաւունքներ:

Այս թէօրիայի հիմքը կազմում է այն սկզբունքը, որ Սինօպակիուսը իւր ամբողջ գրւածքի մէջ շարունակ պաշտպանում է, որ ժողովուրդ, ցեղ, ազգութիւն բոլորովին տարբեր հասկացողութիւններ են. ժողովուրդ պետական հասկացողութիւն է, ցեղն ել ծաղման, էտնօլոգիական հասկացողութիւն է, այն ինչ «ազգութիւնը հասկանում ենք իրեն հոգեկան և կուլտուրական ընդհանրութիւն աւելի կամ պակաս զարգացած ազգային գրականութեամբ, իրեն այդ ընդհանրութեան արտայայտութիւն»¹⁾. և մի ուրիշ տեղ՝ «ազգութիւնը կուլտուրական ամբողջութիւն է»:

Ազգութեան այսպիսի հասկացողութիւնը շատ մօտ է իրականութեան, բայց ամբողջը չէ: Սինօպակիուսն ասում է. «Հոգեկան և կուլտուրական այդ ընդհանրութեան ստուգման համար էլ ինչ կրիտերիում կարող է դոյութիւն ունենալ, բայց այդ պատկանելիութեան գիտակցութիւնից. բայց չէ որ զիտակցութիւնը շտափազանց առաձգական հասկացողութիւն է: Կարելի կինք արդեօք ազգութեան այդ կազմակերպութեան անդամ համարել նրան, ով բոլորովին կորցնելով այդ ազգութեան յատկանիցները. լեզուն գիրը, անծանօթ լինելով իւր ազգի գրականութեան, այնուամենայնիւ ցանկանում է լինել մի կուլտուրական ընկերութեան անդամ. կամ արդեօք ինչ միջոցներով կարելի է ի կատար ածել տալ այն պարտականութիւնները, որ դնում է կազմակերպւած ազգութիւնը իւր անդամների վրայ, կամ կարելի է երաշխաւորել, որ բոլոր այդ ընկերութեանը մասնակցել ցանկացողները յարմարութիւն կունենան մտնելու այդ կազմակերպութեան մէջ և եթէ դուրսը մնացածներ լինեն, պետութիւնը ինչպէս պէտք է վերաբերի գէպի դրանց. չէ որ վերջապէս

2) Երես 17.

կարող է պատահել, որ ես չուզենամ ոչ մի ազգի անդամ գրւել, կարող եմ լինել աշխարհականացի, այն ժամանակ ինչ կլինի արդեօք իմ դրութիւնը:

Ինչ վերաբերում է «Բունդի» ազգային-կուլտուրական աւտոնոմիային, պէտք է տաել, որ նա (ինչպէս և Սինօպակիուսի պետական-իրաւուկան հողի վրայ կազմակերպած ազգութիւնը) չի պարզում, թէ ինչ յարաբերութիւն կարող է լինել պետական-վարչական ինստանցիաների, իշխանութիւնների և ազգային ինքնավարութեան օրգանների մէջ: Պետական բաժանումները հեշտ և պարզ են, որովհետեւ ունին որոշ կոնկրետ սուբստրատ-տերրիտորիան, իսկ ֆունկցիաների բաժանումը պետական իշխանութեան և ազգերի, եթեև կուլտուրական ընկերութիւնների մէջ, չունի այն իրական, չօշափելի հողը, որ կարելի լինէր լրիւ կերպով մինչև վերջը տանել այդ բաժանումը, մանաւանդ որ Սինօպակիուսը բաւական լոյն է հասկանում կազմակերպած ազգութեան իրաւունքները. մենք այդ հարցի հետ ծանօթացանք սկզբում, եթք խօսում էինք դաշնակցական պետութեան սուվերենիտետի մասին:

Ազգային հարցի այսպիսի լուծումը ենթադրում է արգէն պետական մեխանիզմի. մանաւանդ գործադիր իշխանութեան կատարեալ յեղափոխութիւն, որի դէպս, ոչ մի տեղ գեռ չի կատարել և նոյն իսկ պլոեկտը գեռ բոլորովին ժողովրդականութիւն չի վայելում: Բայց, այնուամենայնիւ, չնայած նախագծերի բաւական բարդութեան, կարելի է տաել, որ նրանք ընդունելի են և խեցին մօտ հարցը լուծելու համար, բայց նախ և առաջ դրանք չեն ժրիստում (գոնէ «Բունդը») ապակենտրոնացման կտրենութիւնը:

Առաջինը, որ վերև յիշւած միջոցով եթէ կարելի լինի ել լուծել հարցը, նրանք չեն կարող փոխարինել ապակենտրոնացումը և գէղերալիզմը, քանի որ ազգային հարցը (ինչպէս տեսանք և գեռ գէղերալիզմը, քանի որ ազգային հարցը հարկաւոր է սպառել այդ հարցի լուծման համար ըոլոր քաղաքական միջոցները, ապա դիմել այդ ձերի կազմակերպութեան աշխակցութեան: Տարօրինակ կլինէր Լեհաստանին չտալ ազգային տերրիտորիալ աւտոնոմիա և բաւականանալ միայն կուլտուրական աւտոնոմիայով: Կարելի է տալ Լեհաստանին տես-

Պական աւտօնոմիա և այնտեղ ապրող հրէաներին, ոռւսներին այդ կուլտուրական իրաւունքը:

Զալէտք է մոռանալ հասկ, որ ազգերը իրենց կուլտուրական գործերում էլ տմբողջութին ազատ չեն քաղաքական պայմաններից: Այդ կուլտուրական կենաքը ունի այնպիսի բոլիանդակութիւն, որտեղ երկիրը, ընջանը, կամ „հայրենիքը“ նոյնպէս գեր են խաղում: Ազգութեան հետ կապւած են նրա քաղաքացիական և իրաւական հասկացողութիւնները. ազգային կուլտուրան՝ աւելի լայն բան է, քան թէ լեզու, գլուխոց և գրականութիւն միասին վեցցրած, և հէնց գրանք էլ որոշ փախիկայի արտայայտութիւններ են, որը գունաւորում է ազգութիւնը և նրա միջավայրը, և ով կարող է ասել, թէ այդ քաղաքացիական-իրաւական անհատականութիւնը ոչ մի արժէք չունի և պետութիւնը կարող է արհամարհել: Եթէ այդ սկզբունքների առանձնայատկութիւնների ոտնահարումը այնպիսի գիմագրութեան չի հանդիպում, ինչպէս գլուխինը, լեզվինը, այդ գեռ չի նշանակում, թէ նրանք կուլտուրական արժէք չունեն, և ժաղովորդը չի տուժում այդպիսի վերաբերմունքից, ու միայն նշանակում է որ սովորոյթները, քաղաքացիական - իրաւական առանձնայատկութիւնները ազգային անհատի ինստինքտական մասն են կազմում և պարզ, գիտակցաբար չեն արտայայտուկմ. թէ այդ առանձնայատկութիւններըն էլ, տարբերութիւններն էլ մեծ նշանակութիւն ունեն և նրանց էլ պէտք է հաշւել առնել, որը պերճախօս ապացոյցը այն հետեանքներն են, որ առաջ են գալիս ամբողջ պետութեան մէջ միենոյն կողեկանների գործադրութիւնը, միենոյն դատարանական և պատժական պատեմների կիրառութիւնը:

Իսկ այս բոլոր մօմենտները անկարող են տեղ գտնել ազգային կուլտուրական աւտոնոմիայի մէջ, և պահանջում են քաղաքական առակենարկում:

Հէնց ազգային հարցի լուծման համար էլ ապակենտրօնացու-
մը կարող է մեծ ծառայութիւն մատուցել մեզ: Առաջնը չպէտք է
չափազանցել այն հանգամանքը, թէ մի տերիտորիայի վրայ մէկ
ազգութիւն չէ ապրում, այլ խճճւած ապրում են շատ ազգեր: Յա-
ձախ, ինչպէս օրինակ՝ Լեհաստանում, մի ազգութիւն իւր թւով մի
կատարիալ ամբողջութիւն է կազմում, որի մէջ միւս ազգութիւն-
ները շատ չնշին տոկոս են կազմում, որպէսզի նրանց համար կարելի
լինէր զրկել ազգաբնակութեան մեծամասնութիւնը ապակենտրօնաց-

ման բարիքներից, և երկրորդը մենք բոլորովին չենք ել պնդում, որ քաղաքական ապակենարօնացումը կարող է կատարելապէս լուծել հարցը. Նա միայն կթեթևացնէր անտագոնիզմը, բաւարարութիւն կտար գուռառի կուլուրական պահանջներին, վերջապէս գաւառական և մանաւանդ կենտրոնական պարլամենտաները կմաքրէր ազգային և այլ «տեղական» հարցերից և կդարձնէր նրանց աղատ հրապարակ այն կռւի համար, որը առաջ է բերել հէնց իրհնց պարամենտաները:

Որպեսն մօտ է լուծման ազգային հարցը հետևողական ապահովագործության մեջ, մանաւանդ երբ գրա վրայ ծանրանում է և հասունացման մէջ, մանաւանդ երբ գրա վրայ ծանրանում է և հասունացման մէջ:

Կարգերի բարախությունը կ լինի ապրում
Վերցնենք Շվեյցարիան: Եթեք ազգութիւններ են ապրում
այդ փոքրիկ հանրապետութիւնն մէջ՝ գերմանացիք, ֆրանսիացիք,
և իտալացիք: Կան կանոններ, որոնք զուտ ֆրանսիական կամ ի-
տալական են և այնուեղ այդ լեզուները ազատ գործ են ածում
ամբողջ կանոնի մէջ բռում հիմնարկութիւններում, չնայած որ
ամբողջ զաշնակցութեան մէջ ֆրանսիացիք և մանաւանդ իտալացիք
փոքրամասնութիւն են կազմում¹⁾): Այն կանոններում, որտեղ
երկու ազգութիւնները ապրում են իտան, լեզունները բոլորն էլ
ճանաչում են պաշտօնական և թէ վարչական, թէ գտտավարական
գործերը տարւում են տարբեր լեզուններով: Դաշնակցական հիմ-
նարկութիւններում էլ համաձայն սահմանադրութեան ընդունւած է
նարկութիւններում էլ համաձայն սահմանադրութեան ընդունւած է
երեք լեզուններն էլ իրեք պաշտօնական: Միայն ուոմանական բար-
բառով խօսողները (որոնց թիւը շատ չնեին է) այնտեղ, ուր նրանք
չափազանց փոքրամասնութիւն են կազմում, կարող են յարաբերու-
թիւն պահպանել կենարօնի հետ իրենց լեզուի, միայն վերցնելով
իրենց վրայ թարգմանութեան համար անհրաժեշտ ծախքերը:

Նվեցարիայում հին ժամանակ էլ ազգային սշակումը չառ
քիչ են տեղի ունեցել իսկ այժմ այդ հարցը գոնք կառավարչական
շրջաններում, օրէնսդրական մարմիններում բոլորովին չի յարուցում:

1) Վերջին վիճակգրութեամբ՝ գերմանացիք 2,083,097, ֆրանսիացիք 634,613, իտալացիք 155,130 և բռմանական բարբառով խօսադներ՝ 38,357: Այսեւ մըն գերբանացիք մօտաւորապէս երեք անդամ ֆրանսիացիներից և տասնեհինդ անդամ իտալացիներից չափ են:

տեղ էլ չի ապրում նոյն բուրժուազիան, որ Գերմանիայում խեղում է լիների և էլգասի ֆրանսիացիներին: Եւ միթէ այս երեսը կարելի է վերագրել Շվեյցարիայի դեմոկրատիկ կարգերին: Անդիսական դեմոկրատիմը բոլորովին չի խանգարում մինչև այժմ ձնշել իրանդացիներին: Շվեյցարիայում ազգային հարցի լուծումը յաջողւել է չնորհիւ զիխաւորապիս ֆեդերալիզմի: Ազգային կուլտուրական ինչպէս և միւս տեղական հարցերը թողնւած են կանաօնների իրաւասութեանը և կանաօնի մէջ փոքրամասնութիւն կազմող ազգութիւնը կարողանում է սովորեցնել ուժեղին ազգային համբերատութեամբ ոչ միայն քաղաքական իրաւունքների հաւասարութեամբ, այլ և զիխաւորապիս, յենւելով դաշնակցական իշխանութեան վրայ և ունենալով իւր կողքին մի այլ կանաօն, ուր ոյժերի յարաբերութիւնը հակառակ պատկերն է ներկայացնում և չնայած դրան, կանաօնները անջատական ձգտումներ բոլորովին չեն ցոյց տալիս և սերտ կապւած են ժմեմանց հետ:

Գուցէ ապակենտրօնացման հակառակորդները մատնացոյց անեն Աւստրիայի վրայ, ուր գոյութիւն ունենալով ապակենտրօնացումն, այնուամենայիւ ազգային հարցը շարունակում է մնալ այնքան բորբոքած և լարւած դրութեան մէջ: Բայց այդ օրինակը ի հարկիէ ծառայութիւն անել ցենտրալիստներին անկարող է այն հասարակ պատճառվ, որ ամեն մի վայրի վրայ, բռնազրուիկ բաժանումներ ապակենտրօնացում չի ներկայացնում, բաժանել երկիրը ինչ որ պատմական պետական իրաւունքի հումանայն և տալ ժողովուրդների մի սովհատած ինքնավարութիւն կենտրօնացած և անկախ գործադրի իշխանութեամբ, գա չատ բան է պարսնակում իւր օրիգինարութեան մէջ, բայց ոչ ապակենտրօնացման դրական կողմերը: Պրանք «Ռէյխսպատում» ներկայացրած երկիրներ և թագաւորութիւններ են, և ոչ ապակենտրօնացած պետութեան աւտօնում գաւառներ, թէև այդ անունը գեռ կրում են:

Բացի այս հիմնական պատճաններից, աւստրիական կեանքի այլանգակութեանը նպաստում է զօրեղ գերմանական սետութեան դրացիութիւնը իւր ազգեցութեամբ Աւստրիայի գերմանացիների վրայ:

Որ աւտորիական ապակենտրօնացումը չի տալիս այդ տիպի պետութեան բոլոր օգուտները, և որ դեռ նոր պէտք է նւաճել աւտօնմիա, դրա պերճախօս ապացոյցը—աւստրիական սօցիալ-դեմոկրատիայի ծլացին է, որ ազգային հարցի, ազգերի հաւասարու-

թեան և նրանց առանձնայատկութիւնների առլահովութեան վրայ կանգ առնելուց և դեմոկրատիկ կարգերի անհրաժեշտութիւնը շեշտելուց յետոյ առում է.

” 1) Աւստրիան պէտք է վերածվի մի պետութեան, որ ներկայացնէր ինքնուրոյն ազգային միութիւնների ռամկավար գաշնակութիւն:

” 2) Պատմական գահին պատկանող հողերի փոխարէն պէտք է ըստ տեղծւեն ազգային ինքնակար աղմինստրատիւ միութիւններ, որոնցից ամեն մէկում օրէնսդրութիւնն ու վարչութիւնը գանէր ընդհանուր, հաւասար և ուղղակի ընտրողական իրաւունքով կաղմած պարլամենտի ձեռքում:

” 3) Միենոյն պզիի ինքնավար շրջանները կազմում են բոլորը միասին մէկ ազգային գաշնակցութիւն, որը միանգամայն ինքնօրոյն է իւր ազգային գործերը վարելու մէջ:

” 4) Փոքրամասնութիւն կազմող ազգային գրուպանների իրաւունքները ապահովում են կայսերական պարլամենտի առանձին օրէնքով:

” 5) Մենք չենք ճանանչում ոչ մի ազգային առանձնաշնորհումներ, այդ պատճառով էլ մերժում ենք պետական լեզւի պահանջը, որքան որ յարաբերութիւնների համար հարկաւոր է մի լեզու, այդ հարցը կորոշի կայսերական պարլամենտը:

Պարտէյտապը, իրեկ միջազգայի սօցիալ-դեմոկրատիայի աւստրիական օրգան, արտայայտում է իր համոզմանը, որ այս սկզբունքների հիման վրայ ազգութիւնների մէջ կարելի է համաձայնութիւն կայացնել:

Պարտէյտապը հանդիսաւոր կերպով յայտարարում է, որ նա ճանաչում է ու մեն մի ազգի զոյսութեան և դարպացման իրաւունքը, սակայն ազգութիւնները կարող են հասնել իրենց կուլտուրայի բայց բարդաւաճման միայն սերու և միատեղ աշխատանքով և ոչ մանը երկպառակութիւններով, մանաւանդ բոլոր ազգութիւններէ բանւուր դասակարգը՝ ինչպէս առանձին-առանձին ազգերի, այնպէս էլ ամբողջ մարդկութեան շահերի աեսակէտից պէտք է փարի միջազգային միութեան և ընդհանուր ջանքերով առաջ մղի իւր քաղաքական և արհեստակցական պայքարը”:

Այս ծրագրից երեսում է, որ Պարտէյտապը առաջինը Աւստրիայի ներկայ բաժանումներ չի համարումբնական, նպատակացարմար

բաժանումներ. նա ձգտում է այնպիսի ապակենտրօնացման, որը աւելի կամ պակաս համարածախանէր ազդերի բաժանմանը, դասաւորմանը և այլպիսի աւտօնում դաշտուները պէտք է ունենան օրէնսդրական ֆունկցիաներ և գործադիր իշխանութիւն, յետոյ այն միտքն է արտայայտում, որ ազգային կուլտուրական ինքնավարութիւնը չի փոխարինում քաղաքական տերրիտորիալ ապակենտրօնացմանը և որ երկուսն էլ անհրաժեշտ են Աւտորիացում ազգային հարցը լուծելու համար:

ինձ յայտնի է թէ աւստրլավական սօցիալ-գեմօկրատիան թնջ-
պիսի սկզբունքային տեսակէտ ունի ապակենտրոնացման վիրարեր-
մամբ, գուցէ նրա կարծիքով քաղաքական ապակենտրոնացումը
հարկաւոր է միայն ազգային հարցը մեղմացնելու համար և ոչ թէ
ընդհանրապիս գերմօկրատական տեսակէտից։ Կարող է պատճեր,
որ պիտութեան քայլայման հաւանականութիւնը և գերմանական
իրրեզենտիզմն էլ այսուեղ գեր խաղացած լինի։ Բայց դա միևնույն է,
մեզ հետաքրքրում է այն փաստը, որ ազգային հարցի լուծումը ըս-
տիպում է ճանաչել տալ ապակենտրոնացման անհրաժեշտութիւնը։
Աւելացն մենք գալիս ենք այն եղրակացութեան, որ քաղաքական
ապակենտրոնացումը ազգային լուծման համար չի կարելի փոխա-
րինել ազգային էքստերիտօքիալ կուլտուրական աւտոնոմիայով, որ
սրանք երկուուն էլ կարեոր գեր ունեն կատարելու, և երկրորդ հար-
կաւոր է այն չափով, որ չափով աւտոնոմ գաւառը չի ներկայա-
ցնում միաձոյլ համախմբւումն, այլ բազկացած է տարրեր ազգութիւն-
ներից։

Միանգամայն ապարդիւն է պնդել, ինչպէս անում են իրենց օրդաններում մեր պ. պ. սօցիալ-դեմոկրատները, թէ „պրոլետարիատ հետեւ հիկացո ճելա ծո ֆեդերացիա¹⁾, քանի որ հէնց այդ պրօլետարիատի շահերը ստիպում են կուել կենտրոնացման գէմ, քանի որ ազգային հարցի լուծման մէջ ամենից շատ հէնց աշխատաւոր դասակարգն է շահագրդուած։ Եւ ինչպէս էլ վերաբերելու լինիք դէպի ազգութիւնը, որքան էլ պնդելու լինիք, որ «պրօլետարները հայրենիք չունեն», ինչպիսի բռնազբոսիկ բովանդակութեան տաք կսմմունիստական մանիֆեստի այդ խօսքերին, այնուամենայիւ անթիւ փաստերը հէնց պրօլետարական կեանքից զալիս են ապացուցանելու, որ բանւորն անկարող է աշքաթող անել ազգային

I) Պրօլետարիատը գործ չունի ֆէռէռապետի հետ։ S. K.

Հարցը, որ նա միշտ ծանրացել է ազգային պահանջների վրայ հակառակ իր թէօրեատիկների սովեկուլեատիւ կառուցւածքներին։
Արդեօք ի՞նչ գիրք պէտք է բռնի սօցիալիստական կուսակցութիւնը գէտի ազգային հարցը և նրա քաղաքական պահանջի արտայացութիւնը—պետական ապակենործոնացումը այն ժամանակ, երբ Գերմանիայի լին բանւորը գրում է իւր թերթում. „ Երբ ալլուսական սիստեմին յաջողւեց անըրարյականացնել և թուլացնել ազնւականութեանը և հոգերորականութեանը, պաշտօննել և տիտղոսներ շռայլելով,—պանդերմանիստ հայրենասէքները բոլորը ասում էին՝ «Պրուսիան գերմանացրեց լինելին», բայց այժմ բարձրացաւ նոր ոյժ, ոտքի կանգնեց Լեհաստանի աշխատաւոր մասսան, որ երկար դալեկ մնացած էր գերութեան և հարատահարութեան տակ. Նրա համար ազգոյին զգացմունքը դատարկ ֆրազ չէ, ոստակ. Կու կոյտով չի կարելի յաղթայարել նրա դիմադրութիւնը ազգային ամեն տեսակ հարատահարութեան. ուստի բանւոր ժողովրդին բանի կերպով գերմանացներու ցանկութիւնը պէտք է յարուցանի՝ յարատեև և ծանր պայքար⁽¹⁾:

Ի՞նչ պէտք է ասի սօցիալիստական կուռազո՞րի թեսը, “Եւ Լեհաստանի բանւորութիւնը (կազմակերպւած, գիտակից բանւորութիւնը) դժոխային պայմանների մէջ, զինուորական դրութեան ժամանակ ընդհանուր քաղաքական գործադրու կյայտալիքի, շաբաթ-ներով արիւնանեղ կույտ կմղի, և Լեհաստանի համար աւտօնութիա կպահանջի ցարիզմից (ահ, ինչ հարւած օրթոգոքութեան մաքրութեան...):

Այսպիսի իրականութեան մէջ սօցիալիստավան զաւակցութիւնը անկարող է մնալ իւր փաղեմի տեսակէտի վրայ, և պէտք է փոխէ իւր կոնկրետ քաղաքականութիւնը դէպի այդ հարցը, եթէ ի հարկէ յաւակնութիւն ունի անւանելու իրենց աշխատաւոր դասակարգի ներկայացուցիչ և ծնունդ։ «Սօցիալիստական կուսակցութիւնը», ասում է Գումավորիչը «կարող է գոյութիւն ունենալ միայն այն դէպում, եթէ նա միաժամանակ կուլում է և՛ հարստահարւած ապգի լեզւի և՛ նրա ազգային ինքնուրոյնութեան համար»։

Մենք աեսանք, որ դասակարգայիշը կռւ գումարագիտութեան է այլազան, կողմնակի հարցերի շուտափայթ լուծումը

1) Լ. Ֆումալսկի, «Նացիօնալիզմը և Բնափառության առաջնորդությունը» ՀԽԱ ք-
բում», եղ. 40.

Մենք անսպայման շահագրգռւած ենք, որ այդպիսի հարցեր լուծեն յեղափոխական շըջանում, որպէս զի ապագայ ովարլամենտական կեանքում երկար չզբաղենք զրանցով, մանաւանդ որ եթէ թողնենք պարլամենտական ապագային, գիտենք թէ ինչպէս և որքան ժամանակում կլուծւի: Մենք կարող ենք նախագուշակել, թէ ինչ գարշելի իրականութիւն կստեղծւի պարլամենտում այդ հարցի առթիւ, և թէ որքան դժւար կլինի աշխատաւոր գասակարգի ներկայացուցիներին ազատ պահել մասսանները նացիօնալիստական հոսանքի ազգեցութիւնից: Մենք ցանկանում ենք ապագայ գեմօկրատական պարլամենտները մտնել միայն սօցիալական հարցերով պարապելու և պայքարելու համար, և ոչ ազգային կունեների մէջ մասնակցելու: Տեսնել պարլամենտը իրեւ մի հարապարակ գասակարգային մաքուր, չքոպարկած կուր դաշտ—ահա թէ ինչ պէտք է լինի ամեն մի սօցիալիստի պահանջը—բուրժուական գեմօկրատիայից:

VIII.

Ուսւաստանում բացի բուրժուական կուսակցութիւններից, պետութեան արակենտրոնացման դէմ է և մեծ սօցիսլիստական յուսակցութիւններից մէկը—Ուսւաստանի սօց.-դէմ. բան, կուսակցութիւնը: Նրա վերաբերմամբ դէպի ապակենտրոնացումը և ֆեռարակմը ազգային հարցի լուծման տեսակից մենք կմօտենանք հետեւալ գլխում: իսկ այժմ քննենք ուռւա մարքսիստների գուտառեական վարժութիւնները պետական կողմի վերաբերմամբ:

Ամենից առաջ պարզ է որ պետութիւնը, ինչպէս և բոլոր հասարակական երեսյները էկոնոմիկայի վերնաշէնքի հատւածներից մէկը լինելով, անհրաժեշտորէն պէտք է անդրադարձնի իւր վրայ նրա բնութիւնը և տեսնենցները: Կապիտալիստական տնտեսութիւնը գնում է առաջ կենաքոնացման տեսնենցով: ահաւասիկ եղանակացութիւն. պետական կազմն էլ ցոյց է տալիս (պարտաւոր է ցոյց տալ) կենաքոնացման տեսնենցը իւր ֆունկցիաների և կազմակերպութեան մէջ: Այս մէկ գրութիւն:

Երկրորդ գրութիւն. պլուտարիատը պէտք է իւր ոյժերը լարէ բուրժուական կարգերը տապալելու համար. նա պէտք է միասայ, հաւաքւի, մեծ բանակ կազմի և ոչ թէ բաժան-բաժան լինի, որը միայն թուլացնելու է պլուտարիատի ոյժը և հետեւար ձեռ-

լինուու է միայն բուրժուային. ուրեմն պէտք է հրաժարւել ամեն տեսակ ապակենտրոնացումներից և առաջադրել մի և անբաժան «ռամկավար» հանրապետութիւն:

Որպէսզի աւելի բարեխիղմ լինենք արգումենտացիայի ձևակերպութեան մէջ, բերենք սօց.-դէմօկրատիայի օրթոդոքսագոյն ֆրակցիայի—„մեծամասնականների“ լէյբ-օրդան „Խօսա“ թերթի արգումենտացիան այդ հարցի վերաբերմամբ. № 6-ում այդ թերթը ասում է.

„Սօցիալ-գեմօկրատիան, պլուտարիատի կուր գեկավարը, „իւր սկզբունքներով ցենտրալիզմին կողմնակից է և դէմ է ֆերակումին: Փոքրաթիւ մեծ պետութիւնների երևան գալը, բազմաթիւ մանր պետութիւնների տեղում, որոնք բաժանած էին միանացից բաղադրական և մասսական պատճեններով, նպաստեց կապիտալիզմի միսսիային արդիւնագործութեան միացման—կենտրոնացման և հասարակականացման գործում, որը նախապատրաստութիւնը է սօցիալիզմի յաղթանակիլը: Նպաստեց նոյնպէս կազմակերպած պլուտարիատի ուժեղ և մեծ բանակների երևան գալուն, առանձին, մանր օրախմբերի¹⁾ փոխարէն, որոնք կարող էին կապիտալիզմի և գեոպոտիզմի դէմ միայն պարտիզանական կուր մղել:

Այդ պատճառով ըէակցիօն քաղաքականութիւն կինէր ձըգատիկանելու կտրատւած, և մասամբ արդէն ջնջած ազգային սահմանագծերը: Բայց միենոյն ժամանակ սօց.-դէմօկրատիան բոլոր ոյժերով բողոքում է ամեն տեսակ տպացյին հարստահարութեան դէմ, ամեն տեսակ ճնշման դէմ, որ կենաքոնացած պետութիւնը իւր ոյժով ուղղում է ազգային ինքնորոշման ձգութիւնը մէջ մտցրել է՝ պետութեան մէջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրաւունքը (§ 9), բացի շըջանային ինքնավարութեան պահանջից—(§ 3). ազգաբնակութեան իրաւունքը... (զիտենք, ձանձրակի է!) կլիթութիւն ստանալ...“

Այս կտորի երկրորդ մասը, սօց.-դէմօկրատիայի բողոքների և խոստումների մասին, մենք բերեցինք այնպէս, քէֆի համար, որպէսզի հրձենք հետեւողականութեան գոհարներով. մեզ հետաքրքրում է առաջին մասը՝ կենաքոնացման և պլուտարիատի կուր մասին:

1) Հնդկացումները բոլորն էլ իմա են:

Մենք ի հարկէ այսոտեղ չենք վիճի արդիւնագործութեան այդ կենտրօնացման տեմպի կենտրօնացման տենպենցի շրջանի մասին և այլն. սրանք աւելի վերաբերում են իդէօլոգիային, որի քննագատութիւնը մեր նպատակից դուրս է զանւում:

Նախ և առաջ տշխատենք ըմբռնիլ միտքը. ասում է, որ „երեան եկան մեծ պետութիւններ բազմաթիւ մանր պետութիւնների տեղ և դա նպաստեց միստիային... Հետաքրքիր է իմանալ այդ ինչ պրօցեսի մասին է խօսքը. եթէ խօսքը կապիտալիզմի միստիայի մասին է նրա ծննդեան օրից, դա հանրածանութ ձշմարտութիւն է. Կապիտալիզմը քանդեց ֆեոդալական ներքին բաժանումները, մանր կղզիացած պետական և քաղաքական մարմինները. նւազելով տնային և գաւառական տնտեսութիւնները, կապիտալիզմը իւր մանուկ հասակից կուի յայտարարեց պետական մարմինների տնտեսական ինքնամփոփութեան, երկրի տնտեսութիւնը մի քանի գաւառական տնտեսութիւններից գարձրից զգային:

Սլովակիան աւտատական կիսաանկախութիւնը տեղի տևեց ապդային լարւած-գործող և իւր տարրերը միշտ հաղորդակցութեան մէջ պահող պետական մեխանիզմին։ Բայց այստեղ մի մեծ թիւրի-մացութիւն է տեղի ունեցել. յօւլուծագիրը մի ինչ որ նմանութիւնն է տեսել «Փեօգալական ապակենարօնացման» (թող ներւի ինձ այս բռնազբանիկ գարձւած գործածելը) և ժամանակակից փեղերալիզմի և առհասարակ տպակենարօնացման. զա մեզ զարմացնում է. կնշանակի փեօգալական Ֆրանսիայի, կամ Խոպանիայի և ժամանակակից մօդերն կապիտալիստական Միացեալ-Նահանգների մէջ ինչ որ հեռաւոր նմանութիւն կարելի է գտնել. խսկալէս այս եզրակացութեան պէտք է գանք, բանի որ խօսքը վերաբերում է կապիտալիզմից տապալած նախակապիտալիստական պետական կազմակերպութեան և ցանկութիւնն է արտայայտում, որ ժամանակակից ապակենարօնացմած պետութեան կողմնակից չլինի սպակուլրատիան, որովհետեւ որանք էլ առաջնների նման են և հակասում են արեւական զարգացման օրէնքին։

Բայց այս միտքը արգելն ըստը ուղիղ մօտ է տպիտութեան, ուրովինեան պարզ է լոյսի պէս, որ կապիտալիզմը տապակելով հինգեատութիւնները, տւել է նորերին նոր բնոյք և ոչ թէ կազմակերպութիւն։ Գաւառները կապել միմեանց հետ անտեսուկան կեանքով, յարաբերութիւններով, դա գեռ չէ նշանակում պետական

Յունկցիաները կենտրօնացնել: Այստեղ նմանութիւն գտնել, կնշանի շփոթել, օրինակ, սիւզերէն-վասարական յարաբերութիւնները և ժամանակակից ֆլոդերալիզմը. իսկ զբանց բնաւորութեան մասին բաւական խօսել ենք: Որ յօդւածագիրը խառնում է այդ երկու պատմուկան հասկացողութիւնները, կա պարզ երկում է նրա եղրակացութիւնից. «Իէտակցիօն քաղաքականութիւն կլինէր ձգաել վերականգնել ազգային սահմանները»: Ուրիշն դուրս է գալիս, որ մենք ձգտելով ապակենաբօնացնել ժամանակակից պետութիւնը, ձգտում ենք վերականգնել այն, ինչ որ անդառնալի կերպով տապալել է պատմութիւնը, պահանջել որ տասուրիսկան թագին պատկանող հոգերը վերածւեն աւտոնոմ գաւառների, կնշանակի ձգտել վերականգնել գերմանական աւտասկանութիւնը, չեխորի թագաւորութիւնը... իսկ եթէ հեղինակը աչքի առաջ ունի վերջին ժամանակների պատմութիւնը, այն ժամանակ էլ Բնշ կարիք կայ «ազգային սահմանների» (ի հարկէ նա հասկանում է պատմական մողով) մասին խօսել:

Արդեօք Նկատելի՞ է ժամանակովոր առաջնային գործությունների մեջ զգումն զէպի կենալունացում, ևս չեմ տեսնում: առողջինների մէջ ձգումն զէպի կենալունացում, ևս չեմ տեսնում: Ամերիկայի Միացեալ-Նահանգները՝ իրենց քաղաքական կեանքի ակրթից եղել են կապիտալիստական երկրներ և մի դարից աւելի է ակրթից եղել ուն կապիտալիստական երկրներ և մի դարից աւելի է արգէն գոյութիւն ունեն, բայց պ. կապիտալը չի տապալել դեռ նահանգների խնդուրոյնութիւնը և չի վերածել երկիրը կենարօնացած հանրապէտութիւնն, այդպիսի տեսքենց անդամ չի նկատում գաշնակցութեան մէջ:

Նոյնը պէտք է ասել Նվելյարիսայի մասս. բայց օսկլրան որ-
այն վերջին 50 տարւայ (այսինքն կապիտալիզմի ամենազարգացած
շրջանում) ընթափում է մշակել և իրականացնել իւր գաղութների
ինքնավարութիւնը, որոնք այժմ ֆեղերալիստական ձգտումներ են
ցոյց տալիս: Եւրոպայի ամենակենտրոնացած պետութեան՝ Ֆրան-
սիայի մէջ էլ այժմ, հակառակ զառամեալ թէօրիային սկսել է
գործել կինարօնախոյս ոյժը և զեպարտամենտները պետական ինք-
նավարական հակումներ և պահանջներ են ցոյց տալիս: Գուցէ պ-
սօցիալ-դեմօկրատը ուշադրութեան է առել գերմանական կենտրօ-
նածիզ պրօցեսով, բայց դա շատ բնական պրօցես է՝ թէ միջազ-
նածիզ պրօցեսով, բայց զանականութեան տեսակէտից և թէ ներքին—ազգային
գային քաղաքականութեան տեսակէտից և թէ ներքին—ազգային
պետական շահերի համար կտրիոր: Մենք մէկ անդամ արդէն շեշ-
տել ենք, որ մանր պետութիւնները ներկայում մեծ շահ ունեն և

հարկավրւսծ են համախմբւելու, բայց ոչ միշտ միամբողջական կենտրօնացած պետութիւն հիմնելու, այլ ֆեդերատիւ կազմակերպութեար, ինչպէս արեցին գերմանական երկիրները:

Յետոյ խօսում է ինչ որ «քաղաքական և մաքսային պատճեռների» մասին: Մաքսային և, մանաւանդ քաղաքական պատճեռները իսկ գիտցած աւտօնոմիաների և ֆեդերացիաների մէջ զոյսթիւն չունեն, գուցէ մի այլ տեսակի պիտութեան մասին է խօսքը...»

Կղզիացում և ապակենտրոնացում՝ դրանք տարբեր հասկացուութեաւներ են:

Ֆեղալիկը և... Ֆեղերալիկը նոյնպէս տարբեր քաղաքական հասկացողութիւններ են... Ցնտեսութեան պահանջած կենտրօնացումը քաղաքական ժամանակակից ապակենարոնացման չի հակառակում; Կապիտալիզմի զարգացման հակառակ էին հին ֆեղալիկան ինքնուրոյնութիւնը և յարաբերութիւնների, հաղորդակցութիւնների բացակայութիւնը և գեղօրգանիզացիան: Իսկ այն կատարելագործւած յարաբերութիւնների կազմակերպութիւնը, ցանցը իւր հանդոյցներով այժմեան ապակենարոնացման մէջ էլ գոյութիւն՝ ունի և միանգամայն բաւականութիւն է տալիս տնտեսական պահանջներին:

Այս կենտրոնացման հարցերի հետ կապւած է նաև արգումենտը ֆեդերալիզմի դէմ—պրօլետարիատի բաժանումն և ոյժերի ջլատումն։ Որ նախակապիտոլիստական պետութեան գեղօրգանի-գացիան շփոթել են ժամանակակից ֆեդերալիզմի հետ, դա երեսում է և այս երկրորդ առարկութեան ձևակերպութեան մէջ։ սկզբում եղել են մասն անկախ պետութիւններ պրօլետարիատի «մանր գորախմբերով», որոնք կարող էին կապիտալիզմի և դեսպոտիզմի դէմ միմիայն պարտիզանական կույւ մզել։ Այստեղից եղանակացութիւն է դուրս բերում, ձգտել քաղաքական ապակենտրոնացման, կնշանակէ աշխատել վերականգնել մանր անկախ պետութիւններ, որ պրօլետարիատը կարող է պարտիզանական կույւ միայն մզել։ Բայց առաջինը մենք տեսանք, որ ժամանակակից ապակենտրոնացումը ոչ մի նմանութիւն չունի նախակապիտալիստական պետութեան և երկրորդը՝ ներեցէք անհամեստութեանս, ինչպէս թէ պրօլետարիատի բաժանում, մանր գորախմբեր։ Մենք խօսում ենք ոչ անկախ պետութիւնների մասին, մենք միջազգացին հարցերով այստեղ չենք պարապում, մենք խօսում ենք մէկ պետութեան փունկցիաների ապակենտրոնացման մասին, իսկ թէ ինչպէս է կազմակերպւած

յունն խոլ ապակենաբօնացած ողեառութիւնը և ինչպէս է նրա բազա-
գրիչ մասերի մասնակցութիւնը ընդհանուր քաղաքական կեանքին,
դա պէտք է յայտնի ինի ֆեռերալիզմի հակառակորդներին: Աւելի
լաւ կիմի սիրենք մեր խօսքերին կոնկրէտ բովանդակութիւն տալ:
Ինչ ենք հասկանում պրօլետարիատի բաժանման և միութեան մէջ.
մեծ բանակներ կազմելու մէջ բացի միջազգային, միջակատական մի-
ութիւնը, որ գոյութիւն ունի անկախ պիտական սահմանագծերից,
ներքին պետական կեանքում պրօլետարիատը պէտք է ձգտի ու-
նենալ պարլամենտաներում իւր գասակարգի ներկայացութիւնը: Նա
պէտք է աշխատի լսու կարելոյն շատ ձայն ունենալ օրէնտդրական
մարմիններում: Կարծեմ համախմբում տաելով սա ենք հասկանում
(Եթէ ի հարկէ կուսակցական ներքին կազմակերութեան մասին չէ
խօսքը, որ անտարակոյս կարող է լինել և՛ գաշնակցական, ինչպէս
Աւսորիայում, և մէկ ամբողջական, ինչպէս գերմանական ֆեկերա-
ցիայում): Բայց այդ գէորգում, չգիտեմ, խօսել ապակենարնացման
գէմինչ անհրաժեշտութիւն կայ, քանի որ բոլորին յայտնի է, որ դաշ-
նակցական պետութեան և ընդհանրապէս ապակենարնացման մէջ
պիտութեան բոլոր այն խաւերը, որ ձայն ունեն նահանգական ընտ-
րութիւնների մէջ, նահանգական հիմնարկութիւններում, մաս-
նակցում են և կենտրոնական կամ գաշնակցական ներկայացուցչական
մարմինների ընտրութիւններին: Եթէ մի ըոսէ ենթագրենք որ նա-
հանգական պարլամենտներ գոյութիւն չունեն, կստացւի նոյն պատ-
կերը. ինչ որ կենտրոնացած պետութեան մէջ է. նոյն ամբողջ ազգա-
քնակութիւնը մասնակցում է ընտրութիւններին: Այնպէս որ, եթէ
Գերմանիայում վերացնենք բաղադրիչ պետութիւնների սահմանները
(ի հարկէ թողնելով երկիրը գերմանականի նոյն աստիճանի վրայ),
բէյստագի ընտրութիւնները նոյնը կլինեն, ինչ որ այժմ են:

Գուցէ ցանկալի չէ, որ օրէնողրական փուլկըլիաններից մի մասը յանձնուի գաշնակցական պետութեան մէջ նահանգական պարլամենտներին. բայց մենք տեսանք, թէ ինչ հետեւանքներ ունի այդ բաժանումը թէ նահանգի և թէ ամբողջ պետութեան շահերի տեսակէտից, մենք տեսանք, թէ գերմօկրատական կարգերը աւելի հեշտ և շուտով կարելի է անցկացնել կենարօնացոծ պետութեան օրէնողրական մարմնի միջոցով և թէ նահանգակախն պարլամենտների միջոցով։ Պրօլետարիատը և առհասարակ աշխատաւոր ժողովուրգը, նահանգական օրէնողրական և վարչական հիմնարկութիւններում

իւր ձայնը կորցնում է արդեօք: Գուցէ կասեն, որ գերմանական լանդտագներում պրօլետարիատը ձայն չունի. բայց այդ առարկութիւնը դարձեալ կարող է ձանձրոյթ պատճառել, քանի որ մենք միշտ շեշտել ենք, որ մեր խոսքը վերաբերում է դեմօկրատական կարգերի հաւասար աստիճաններին:

Կենտրոնացած պետութեան մէջ բուրժուազիան էլ մէկ ներկայացչութիւն ունի, պրօլետարիատն էլ: Ֆեդերատիւ պետութեան մէջ նրանք ունեն երկու-երկու ներկայացուցիչներ¹⁾, ո՞վ է այստեղ տուժում. չգիտեմ, գիտեմ միայն, որ շնորհիւ երկրի մէջ դիմադրական ոյժերի տուրքերի դասաւորման, կլինեն նահանգական պարլամենտներ, ուր դասակարգային գիտակցութեան եկած աշխատաւորները շատ աւելի նպաստաւոր պայմանների մէջ կրտեն, քան թէ նրանք ունենային ներկայացուցչութիւն միմիայն կենտրոնական պարլամենտում, որտեղ նրանց ձայնները պէտք է ինդրուեն յետամնաց նահանգներից եկած ձայներով. չի կարելի հնթագրել որ սօցիալ-դէմօկրատը ցանկանար առաջ բերել շահերի հակասութիւն զանազան նահանգների աշխատաւորների մէջ, զոհելով մի նահանգի առաջադիմութիւնը միւս նահանգի յետադիմական շահերին: Այդ աեսակէտից պրօլետարիատի «ուժեղ և մեծ բանակներ» առաջ բերելու համար կարելի կինէր հրաւիրել Զինաստանին միանալու Ռուսաստանի հետ, որովհետեւ գուցէ մի քանի ձայններով կաւելանայ պրօլետարական ներկայացուցչութիւնը: Ի՞նչ փոյթ որ դրա հետ կաւելանայ տասնապատիկ և հարիւրապատիկ հակառակ բանակը: Բայց գուցէ ենթադրում է, թէ սօցիալիզմը իրականանալու է ամեն տեղ միաժամանակ...

Անհրաժեշտ է, որ անկախ պետութիւնները միանան, ձըգտեն դաշնակցութեան, բայց կարենը է նրանց միութիւնը այն դէմօկրում, երբ նրանք կանգնած են սօցիալիստական եւ կոկտուրական զարգման մօս աստիճանների վրայ, ուր մնաց, որ մի մեծ պետութիւն,

1) Եթէ երկու ներկայացուցչական օրգանների գոյութիւնը նշանակում է պրօլետարիատի բաժանում, այն ժամանակ հետևողականութիւնն ստիպում է մեզ որ վերացնենք նոյն իսկ վարչական ապակինութօնացաւմը, շրջանային ինքնառվարութիւնը (որ ո.գ. ի հօնէ է), և ամեն տեսակի լողործերը յանձնենք կենտրոնական օրէնսդիր մարմնին և նրա բիւրօկրատիային, որպիստե այս դէմօկրում էլ պրօլետարիատը որոշ շրջանում է գործում և «միայն պարտիզանական կոիւ կոռողէ մղել կապիտալիզմի դէմ»:

ապարքեր սօցիալական, կուլտուրական աստիճանների վրայ գտնւող շրջաններից, ազգութիւններից բաղկացած՝ ձգտել կենտրոնացնել մի ինչ որ «մեծ, ուժեղ» պրօլետարական բանակ ունենալու համար, որը այդ պայմաններում կենտրոնացած պետութեան մէջ գոյութիւն ունենալ չի կարող:

Յետոյ՝ իսկապէս ինչ է նշանակում արգիւնագործութեան կենտրոնացում կապիտալիստական կարգերում. ինչպէս պէտք է հասկանալ այդ կենտրոնացումը:

Մենք սացինք, որ կապիտալիզմը խորտակեց ֆէօդալական պատմէչները և գաւառական ու տնային տնտեսութեան տեղ առաջ քերեց կապիտալիստականը ամբողջ պետութեան մէջ:

Տնտեսութեան հին ձեմ տեղ հաստատեց նոր ձե: «Իրանից յետոյ տեղի պէտք է ունենար հետեւեալ երեսյթը. եթէ գաւառը մի երկր էր, որ իր կուլտուրական և այլ պայմաններով, հարսութիւններով ներկայացնում էր միայն շուկայ, այդ դէպքում գաւառում կամ գաղութում, երկար ժամանակ չէր կարող առաջ գեղական զարգացած կապիտալիստական տնտեսութիւն իւր զանազան գավական զարգացած կապիտալիստական շուկաները (օր. Հիւղերով և, ինչպէս այժմ եւրոպացիների ասիական շուկաները (օր. Պարսկաստան, Չինաստան և այլն), դրանք պէտք է մնային ամբողջականացնել զովին կենտրոնական երկրի, վայրի կամ պետութեան ազդեցութեան տակ, նրանից սաւցող ամեն ինչ և նրանով կերակրող:

Բայց միենոյն ժամանակ տեղի է ունենում և մի այլ երեսյթ. գաւառը, գաղութը կամաց-կամաց առաջ է տանում, զարգացնում կիւր սեփական կապիտալիստական տնտեսութիւնը և ընդունակ է երկրաբանական յատկութիւններով տարբերում է միւսներից, այդ երկրաբանական զարգացումը ընթանում է տարբեր ճանապարհով և տարբեր գոյն է առլիս ամբողջ շրջանին:

Զարգանում է տեղական կապիտալը, իսկ օտար կապիտալը կիւր գործադրութեան մէջ ապակենտրոնական է (շարունակելով, ի կիւր գործադրութեան մէջ ապակենտրոնացների սեփականութեան տեսակէտից): Պեհարկէ, պահել կենտրոնացումը սեփականութեան առաջարկութիւնները զարգանալով, չնորհիւ այդ առութեան մէջ բոլոր տնտեսութիւնները զարգանալով, չնորհիւ այդ առութեան մէջ բոլոր տնտեսութիւնների տարբեր կօմբինացիայի զանազան տեղերում առաջ գալիս պետութեան մէջ տարբեր գոյներով մթնոլորտներ, շրջանէ գալիս պետութեան մէջ տարբեր գոյներով մթնոլորտներ, շրջան-

ներ¹⁾): Այս անտեսական հանգամանքը խճճելով այլ կուլտուրական հանդսմանքների հետ, առաջ է բերում կապիտալիստական տնտեսութեան բոլորօվին չհակասող պետական կեանքի ապակենարօնացման անհրաժեշտութիւն:

Նոյնիսկ այն երկիրները, որոնք այժմ դեռ չուկայի գեր են խաղում Եւրոպայի համար, վաղ կամ ուշ առաջ կրերեն տեղական արդիւնագործութիւն և հետեաբար որոշ չափով կհակադրեն իրենց շահերը և տնտեսական կեանքի զարգացումը իշխող պետութիւններին: Շուկաների և գաղութների ապագան, իմ կարծիքով, այդ ճանապարհով է առաջ գնալու:

Ահա թէ ինչ է նշանակում «անտեսական ապակենարօնացում», որ ի միջի այլոց չեշտել է իւր երկրորդ համագումարի ուեզօնիցիայի մէջ Ռւկրայնայի ս.-դ.-ր. կուսակցութիւնը, ուէզօնիցիան ասում է, որ «անտեսութեան կենտրօնացումը տնտեսական էւօլիցիայի միայն մի կողմն է, իսկ միւս կողմը նրա ապակենարօնացումն է»: Մի սօցիալ-դէմօկրատ զրոյ անկեղծօրէն տարակուսում է, թէ որ տեղ է նկատում այդ «ապակենարօնացումը տնտեսութեան մէջ²⁾», որ չեշտում է Ռւկրայնայի «նացիօնալիստական» կուսակցութիւնը (այսինքն աւտոնոմիա պահանջով ս.-դէմօկրատիան):

Տնտեսութեան զարգացման այդ կողմը, անտարակոյս նպաստելու է պետական ֆունկցիաների ապակենարօնացման, և եթէ դա տեղի չի ունենում, բուրժուազիան մնում է ազատ առանց հսկողութեան և այն՝ ինչ որ պէտք է նա անէր տեղական օրէնսդրական օրգաններում աշխատաւոր դասակարգի ներկայացուցիչների մշտական օպպօզիցիայի հանդէպ, նա տւելի ազատ, տւելի անպատճ-

1) Պ. Genosse-ն խօսելով «Կեանք-ի էջերում պետական կազմի վրայ, անտեսական տարրեր պայմանների ազգեցութեան մասին, պարզամտութեամբ ցոյց է տալիս, որ մի երկրում էլ կարող են բոլորովին տարրեր տնտեսութիւններին և կոն (Բագւի նաւթը, Ղարաբաղի գլուզը և այլն): Կարծես թէ պետութեան ապակենարօնողը տարրեր տնտեսութիւններն են և ոչ շրջանը, մթնոլորտը: Եթէ տնտեսութիւնների տեսակները, որ արդիւնք են տարրեր գեօլոգիական և այլ պայմանների, ամբողջ պետութեան մէջ մի կոմբինացիայով դասաւորւած լինէին, Կովկասում և Խուսաստանի այլ վայրերում, Լեհաստանում և այլ տեղերում, այն ժամանակ, գեռ կարելի կլինէր ասել թէ աշխարհազրական և գեօլոգիական հանգամանքները մեծ աղդեցութիւն չունեն պետական կազմի վրայ:

2) „Вѣстникъ Жизни“ № 2. Украйскія національна партія եղ. 41. Лукашевъ.

խանատու կերպով փաստօրէն կատարում է վարչական իշխանութեան, աղմինիստրացիայի և պունիկ ոստիկանութեան միջցով: այդ պատճառով նա կարող է օրէնսդրական բնաւորութիւն ունեցող շատ հարցեր լուծել, որովհետեւ վարչական հիմնարկութիւնների մէջ, ինչ կասկած կայ որ, բուրժուազիան աւելի ուժեղ է, քան թէ օրէնսդրական մարմիններում հարկաւոր է ստեղծել տեղական հակագիր ոյժ օրէնսդրական մարմնի միջոցով, որը իւր կողմից աւելի ընդունակ կլինի գէմօկրատիզացիայի ենթարկել վարչական իշխանութիւնը, ինքնավարութեան օրգանները, քան թէ պետական կենտրոնական պարլամենտը:

Այս հանգամանքները դեռ բոլորը չեն, որ արժանի են ուշագրութեան: Ո՞րքան հարցեր կան անտեսական կեանքում, որ տեղական բնաւորութիւն են կրում և կարող են րեգլամենտացիայի ենթարկել և լուծել միայն և միմիայն տեղական ազգաբնակութեան մասնակցութեամբ: Եւ եթէ այդ հարցերի լուծումը թողնենք տեղական ինքնավարութիւններին, նրանք կամ կդառնան փաստօրէն քաղաքական ինքնավարութիւններ, կամ եթէ մնան իրենց կոմպետենցիայի շրջանակի մէջ, անկարող կլինին հասնել որոշ հետեանքի: Օրինակի համար վերցնենք հողային հարցը Ռուսաստանում: Եթէ յեղափոխութեան շրջանում և յեղափոխական միջոցներով յաջողութեամբ այդ հարցը և նա մնայ պարլամենտական կեանքի օրգանական աշխատանքների թւում, այն ժամանակ, իմ կարծիքով, հարցը շատ աւելի հեշտութեամբ կլուծել Ռուսաստանի միացեալնահներում, քան կերտարօնացած հանրապետութեան մէջ: Տեղական պարլամենտները աւելի կազմեն ժողովրդական մասսաններից և կդառնան նրանց անմիջական հսկողութեան տակ, և յետոյ, որ ամենակարենը է, յետագիմ նահանգների ձայնները չեն կարող ճնշել այն նահանգների ներկայացուցիչներին, որտեղ հարցը աւելի այժմէ ութիւն է ստացել կողմնակիցներ ունի: Վերցնենք կոնկրէտ օրինակ. Լեհաստանի ներկայացուցիչները հողային հարցի վերաբերմամբ ամենազրշելի դիրքն էին բռնել Պետական Դումայում, գլխաւորապէս այն պատճառով, որ հարցը այնտեղ այնքան այժմէ ութիւն չունի և սօցիալիզացիայի կամ նացիօնական վարաբերութիւն գոյութիւն չունի, և իւր տակին (համայնական յարաբերութիւն գոյութիւն չունի), և այնպէս ժողովրդականացած չէ, ինչպէս օրինակ՝ կենտրոնական Ռուսաստանում: Եւ եթէ լեհները այդ հարցը լուծելու վերաբերմամբ

Ճայն ունենան Ռուսաստանի կենտրոնական պարլամենտում, պարզ է, թէ կշահեն Ռուսաստանի կենտրոնական նահանգների շինական-ները¹⁾: Կենտրոնական պարլամենտը կարող է մինչև անդամ վե-րացնել համայնքը և կատաղի կուր յայտարարել այդ գաղափարին շատ աւելի հեշտութեամբ, քան թէ կանեն այն շրջաների պարլա-մենտները, որտեղ համայնքը և համայնական գաղափարները ուժեղ են:

Եթէ երիակայենք մի օր հողերի համայնացումը իրականացած համայնական հողատիրութեան ամենառուժեղ շրջանում—կենտրօնական Ռուսաստանում, մենք իսկոյն կհասկանանք թէ ինչպիսի հսկայական ազգեցութիւն է ունենալու այդ բէֆօրմը Ռուսաստանի այլ մասերի վրայ, թէ ինչ թափ է տալու գիւղացիների ձգտմանը դէպի համայնական հողատիրութիւնը և թէ ինչպէս հարւածելու է նրա գիտակից և անդիտակից հակառակորդներին, թէ ինչպէս հեշտացնելու է գործը իւր կիրառութեան փորձով, որը կցըւի նաև շատ ու շատ կանխահան կարծիքներ այդ բէֆօրմի իրագործելիութեան վերաբերմամբ:

Եւ սրա նման կամ աւելի պակաս նշանակութիւն ունեցող հարցեր շատ կան, որոք կարող են լուծել միայն ապակենարօնացած պետութեան գաւառական ոյժերի միջոցով միայն:

Ահա ինչ են ասում տնտեսակառն պայմանները և դարդացման ընթացքը Փեգերալիզմի մասին:

IX.

ՄԵՆՔ ՀԱՄԱՐԵԱ ԹԵ ՍՊԱՌԵցինք մեզ զբաղեցնող հարցը այն չափով, ինչ չափով որ մեր նպատակն էր: ՄԵՆՔ ցանկանում ենք տալ ֆեդերալիզմի և ապակինարօնացման այլ ձևերի քաղաքական պետական ստուրուկուլարայի համառօտ նկարագրութիւնը և ֆեդերալիզմի ու կենտրօնացած պետութեան դեմոկրատական և սօցիա-լական արժեքը:

Եթէ գործ դնենք մեր բերած բացատրութիւնները և արդ գումանացիան զանազան պետութիւնների և առանձնապէս Թու-

1) Ի Հարեկէ մի ոմարքսիստի՞ համար այդպիսի հարցերի լուծումը, այնպի-
սի հարցերի իրականացումը, ինչպէս է սօցիալիզացիան շամանքի պաշտպա-
նութիւնը—զրանք գրոշ չարժեն։ Մտածողութիւնն տարբերութիւն է։ Բայց խօս-
չել կարենի այդպիս, տեսական գաղաղութեամբ ժողովրդական պահանջների դէմ-
ի փառու և ի պարձանս „կապիտալիստական կոնցենտրացիայի“ և „մասսայական
պրոլետարիացիայի“:

սաստանի իրականութիւնն ուսումնափելու, կարող կը իննենք գալ
մի որոշ եզրակացութեան, թէ ինչումն է այս երկրում տպակենտ-
րօնացման գլխաւոր հիմքը և ինչ ոյժեր ամենից աւելի մղելու են
պետութիւնը դէպի այդ քաղաքական կազմակերպութիւնը։ Դումպ-
լովիչը ասում է Ռուսաստանի մասին, որ սա ազգերի բազմաթեսա-
կութեան վերաբերմամբ Աւտորիայի հետ համեմատած, նման է
բազմապատկումի աղլւասակին. իսկապէս անթիւ են Ռուսաստանը
կազմող ազգերը և նոյնքան տարբեր են նրանց կուլտուրական տա-
տիճանը։ Մեր վերև յիշած արգումենտացիայից անարակոյս ամեա-
ռութեղը և ամենազօրեղ լիթանը դէպի սկետական ապակենտրօնա-
ցումը ազգային պրօբլեման է կայսերութեան մէջ։ Կան տեղեր, որ
ապակենտրօնացման պահանջը չափազանց բարձրաձայն է, կան նաև
շրջաններ, ուր դեռ նրա անհրաժեշտութեան գիտակցութիւնը թոյլ
է՝ թէ ժողովրդի զարգացման աստիճանի և թէ կառավարութեան
բռնած գերքի չնորհիւ։ Մինչդեռ Ֆինլանդիան վերջնականապէս
նւաճեց իւր իրաւունքները ցարիքմից, մինչդեռ Լեհաստանում
աւտօնոմիայի հարցը գարձել է ժամանակի հարց, Մալորօսիան, Լիտ-
վան, Կոմիասը դեռ չառ թոյլ են արտայայտել իրանց պահանջները։

Տնտեսական զարգացման և սօցիալական, դասակարգայթ շահերի տեսակէտից մեր բերած պատճառ արաւնութիւնները յօդուտ ապակենտրոնացման գելազանցօրէն ճամարիտ են և Ռուսաստանի իրականութեան վերաբերմամբ. յեղափոխութեան յարուցած և հրապարակի վրայ դրած հրատապ խնդիրը, որ զանազան տեղերում տարբեր արտայայտութիւններ են ստանում, իրենց վերջնական լուծման համար յեղափոխութիւնից պահանջում են այս համաշխարհին պետութեան ապակենտրոնացումը:

Եւ պայքարող կուսակցութիւնները շատպում են լրաց զարարելունքը և դիբը այս հարցի մասին որպէսի և դա շատ բնական է կազմակերպւած որոշ գաւանանք ունեցող կուսակցութիւնների համար, քանի որ նրանք ոչ թէ պաշտպանում են առանձին կոնկրէտ պահանջներ, այլ և ցանկանում են տալ յեղափոխութեամբ բռնւած երկրի համար որոշ ամբողջացրած քաղաքական և ոօցիա լական նւազագոյն ծրագիրներ:

Ուսաստանի պետական կազմի վերաբերամասի բառու բարերար համաձայն կուսակցութիւնների կարելի է բաժանել երկու տեսակի. կենտրօնի (ոչ միայն արմատականութեան մոքով), կամ

ոռւսական կուսակցութիւնները և կենտրօնախոյս, կամ աւելի ճիշտն ասած՝ ապակենտրօնացման ձգումը ունեցող ծայրագաւառների և դաւառների կուսակցութիւնները:

Առաջին բանակում այս հարցի վերքաբերմամբ գտնվում են բացի բոլոր աջակողմեանն՝ կուսակցութիւններից նաև սահմանադրական-ռամկավարների (կադետ) և ուսու ս.-գ. բան. կուսակցութիւնը (ես ասում եմ ուսու, որովհետև որքան որ դադարում է գուտ ռուսական լինելուց, նոյնքան նրա վզին բռնի կերպով փաթաթում են ասլակենարօնացաց գաղափարը):

Աջակողմնաների մասին այստեղ խօսելն անպատճեր է, ու բովհետեւ նրանց պահանջները բգխում են զուտ ազգայնական շափթական աղքիւրից, որի ակունքն է բուբժուական կամ միապետական հոգեբանութիւնը:

Կազետների կուսակցութեան մասին խօսելն էլ ապարդիւն կինէր, եթէ նրանց ծրագրի մէջ մտած Լեհատանի աւտօնումիայի հարցը յաճախ թիւրիմացութեան մէջ չձգէր անտեղեակ մարդկանց, որ իրը թէ նրանք ապակենարոնացման կողմնակից են: Բանը նրանումն է, որ նրանք—կագետները, իրքի տիվլիք բուրժուական իդիոգներ, ժողովրդի քաղաքական և այլ պահանջներին ինքնուրոյն անկախ ճշմարտութեան, կոմ նպատակայարմարութեան մեթոդով չեն մօտենում. նրանք կարող են մտցնել իրենց ծրագրի մէջ որ և իցէ գաւառի, շրջանի համար աւտօնումիայի պահանջը, եթք ժողովրդական աղաղակը կցնել ամբողջ երկիրը, երբ արեան գետեր կհոսեն (անցեալի արեան գետերը մոռացւած են), երբ աշխատաւորները քաղաքական գործադրութ կարբագործեն Լեհատանի աւտօնումիայի սկզբունքը, և այս բոլոր գործից հանգամանքները պէտք է միշտ յարատենեն, շարունակեն, ապա չէ ոչ ամեն բանի մէջ դաւաճանող բուրժուացիայի իդիոգները այսուղ էլ կկեղծեն իրենց խօսքը:

Նույն են Ռուսաստանի կենտրոնական պարլամենտին և ոչ Աբխա-
տանի ժողովրդին, կամ Ռուսաստանի յեղափոխութեան:

Կադէտների մասին այսքան: Դառնանք Խուս. ս.-դ. բառ. գուշակցութեան: Իմ կարծիքով ոչ մի վիրաւորական բան չկայ նրա մէջ, որ մենք այդ կուսակցութեանը այս հարցի վերաբերմամբ դրել ենք աջակողմեանների և կենտրօնի կողքին. կարելի է ըուրուսին տարբեր երակէտից գալ և յանդել նոյն եզրակացութեան: Ս.-դ.-ները այս հարցում կազող են իրենց անհաշտ թշնամիներին ձեռք մեկնել և պարլամենտում զանազան ծայրագաւառների աւտօնութիւնի պահանջները իրաւակարգի կուսակցութեան հետ միասին տապալել, (ի հարկէ եթէ կցանկանան ինել հնաւողական):

Ս.-դեմօնը աստիայի սկզբունքային պարագալի վերաբերութեալ դժուն
ապակենտրօնացումը մեղ արդին ծանօթ է, այնպէս որ մեզ միայն
մնում է նրա պրակտիկայի և էւօլիցիայի վրայ կանգ առնել:

Նրա ծրագրի շատ կէտերը. տեղական, վլջանային լիքսամ վարութիւնների (§ 3), լեզուների հաւասարութեան (§ 8) արժեքը մենք արդէն տւել ենք ազգային հարցի վերաբերող գլխում. այստեղ միայն հարկաւոր է մէկ երկու խօսք ասել § 9-ի, այսինքն ազգերի ինքնուրոշման իրաւունքի մասին: Ս.-Պետօկրատիայի կենտրոնական նախակին օրգան Առքա-ն հետևեալ բովանդակութիւնն է տալիս այս քաղաքական պահանջն. „Ամեն մի ազգի ինքնորոշման իրաւունքի պահանջը ճանաչել, ինքն ըստ ինքեան նշանակում է ոչ այլ ինչ, քան այն, որ մենք՝ պրօկետարիատի կուսակցութիւնը, պէտք է միշտ և անպայման դէմ լինենք ամեն մի փորձի՝ բռնութեամբ, կամ անարդարութեամբ դրսից ազգերու ազգային ինքնորոշման վրա¹⁾“: Եւ Մեդիմը շատ ճիշտ նկատում է, որ այսպիսի բանաձեի մէջ պարունակում է միայն հարցի գրւելը և ոչ լուծումը. քիչ է հարիւտոր ինել մի բռնութեան, զա պասսիւ և յեղափոխականն կուսակցութեան հետ առնչութիւն չունեցող վերաբերմունք է, հակառակ է ակտիւ կերպով պաշտպանել և որ գլխաւորն է պահանջել բռնութեան դէմ երաշխաւորութիւններ:

ի հարկէ ինքնորոշման այդպիսի «ինքնուրոյն» բովանդակութիւն տալուց յետոյ դժւար չէ մերժել և նոյն իսկ կոիւ յայտարա-

1) Искра № 33. Изъ партій. քաղաք է Մեդիմի գրքոյկից: Національ-
ний вопросъ и с.-демократія. երես 26.

բել ազգային պահանջների, օրինակ՝ աւտոնոմիայի, որ մի որոշ արտայայտութիւն է ինքնորոշման իրաւունքի պահանջի:

Կուսակցութեան համար ազգային հարցը Ռուսաստանում բորբովին այժմէութիւն չունի և նա գտնում է որ „սօցիալ-դեմոկրատները Ռուսաստանում կարող են հանդիսան յետաձել իրենց մանրամասն գեկլարացիան ազգային հարցի վերաբերմամբ և առայժմ բաւականանալ կուսակցութեան մանիֆեստի սկզբունքային յարաբերութեամբ, որը ճանաչում է ամեն մի ազգի ինքնորոշման իրաւունքը: Այդ յայտարարութիւնը պարզ և որոշակի արտայայտում է ընդհանուր վերաբերմունքը դէպի Ռուսաստանի բոլոր պուլթիւնները և դա առաջմն միանդամյն բաւական է¹⁾“:

Բաւական ժամանեակ է անցել այդ խօսքերը տալւելուց, բայց վուսակցութեան «մանրամասն գեկլարացիան» չուսանք, կարօտ մընացիք. արդեօր այժմ էլ այդ „ինքնորոշման իրաւունքի“ յայտարարութիւնը «միանդամյն բաւական է», թէ չուտով լոյս է տեսնելու «գեկլարացիան»: Մեզ դա յայտնի չէ և հետաքրքիր էլ չէ: Այս սղորմելի ծրագրային կէտերն ու նոյնքան սղորմելի բացարութիւնները, ի հարկէ, հետևանք են արդէն վաղուց մշակած, կոկած և քարացած տեսակէտի ազգային «բուրժուական» հարցի վերաբերմամբ:

Ս.-դեմոկրատիան քաղաքականութեան մէջ իսկ և իսկ նոյն դիրքն է բոնել դէպի ապակենարօնացման հարցը, ինչ որ կազետները: Նա ի հարկէ ազնւութիւն ունի հասպարակաւ յայտնելու իւր հակակրանքը դէպի այն «ազգայնական» ս.-դեմոկրատական կուսակցութիւնները, որոնք զանազան ծայրագաւառներում պահանջում են աւտոնոմիա, բայց այն գործնական խոշոր նմանութիւնը կայ կազետական կուսակցութեան և սրանց մէջ, որ երկուսն էլ, ինչպէս յիշեցի, զիջում են, ընդունում են զանազան տեղերի վերաբերմամբ աւտոնոմիան միայն այն ժամանակ, երբ ազգաբնակութիւնը ձիչ է արձակում և առատ արիւն է հոսեցնում: Դա փաստ է և կարելի է օրինակներով ստուգել: Մինչև ացեալ ամառ Լեհաստանում յայտարարած ընդհանուր գործադուլը, մի շարք ցոյցերը և այլ յեղափական ակտերը առանձնապէս աւտոնոմիայի պահանջի համար Ռ.

1) Մեղմից. եր. 25. արտապած Զարյ-ից № 4. „Օ ևրոպական բառում առաջնային առաջարկում էլ պահանջում էլ պահանջի հարցը Ռուսաստանում է որ ազգային հարցը առաջարկում էլ պահանջի միայն այն տարրերութեամբ, որ ս.-դ.-ները առաջարկում էլ պահանջը համականացնել տալ Խուսաստանի սահմանանիր ժողովում, իսկ Պ. Պ. Ս.-ը վստահութեան քէ չէր տալիս այն սահմանադիր ժողովին և իսկ Պ. Պ. Ս.-ը վստահութեան քէ չէր տալիս այդպիսի ժողովներ. մէկը Պետերպահանջում էր հարաբեր միաժամանակ երկու այդպիսի ժողովներ. մէկը Պետերպահանջում միւսը Վարչապայում: Բանորական բացմարդ միանդաներում միշտ անցնում էր այս վերջին առաջարկը:

ս.-դ. բան. կուսակցութիւնը լսել անդամ չէր ուզում Լեհաստանի աւտոնոմիայի մասին, բայց այդ դէպքը աեղի ունենալուց յիտոյ կուսակցութիւնը իւր օրգաններում չափազանց «կակղեց»: Իսկ երբ հարց ծագեց Լեհաստանի սօցիալ-դեմոկրատների հետ միանալու մասին և իր այդ հարցը վճռում էր, կուսակցութիւնն ընդունեց լեհարի պահանջը, ինչպէս ասում են՝ թոյլ տեհց պահանջի լեհաստանի աւտոնոմիան, թէն, իսկապէս, կարիք չկար, որովհետև անցեալ աշնանը և ձմեռուայ ընթացքում այդ հարցը կատարւած վերջացած հարց էր, քանի որ լին սօց.-դեմոկրատիան, լին սօցիալիստական (Պ. Պ. Ս.) կուսակցութեան հետ յայտարարել էր իւր պահանջը և պրոլետարիատը (լին գիտակից պրոլետարիատը! «որի շահերը ոչ մի առնչութիւն չունեն աւտանոմիայի և ֆեղերացիայի հետ») արիւն էր թափել¹⁾: Այդ ժամանակն էր որ Ռուսաստանի կուսակցութիւն կենտրոնական օրգանները «մեծամասնականների» Խօվայ Ժազեն և «փոքրամասնականների» Խաչալո²⁾ թիրթերը ընկած էին ողբալի գիտական հակասութիւնների մէջ այդ հարցի վերաբերմամբ: Սուածինը, վերև յիշածս № 6-ում ասում էր, որ իրենք՝ պրոլետարիատի կուսակցութիւնը դէմ է ֆեղերանդմին և կողմնակից է ցինտրալիզմին. և մի քանի տողից յետոյ աւելացնում էր, որ ուսկայն իրենք ողջունում են ամեն մի ազգի և այս դէպքում լիների պահանջը դէպի ազգային ինքնորոշումը, և որովհետև լիների այդ պահանջը դէպի ապակենացները, ս.-դ. հետեւարար լին պահանջը սրտայայտեց աւտոնոմիայի պահանջի մէջ, հետեւարար լին համակառ և ողջունող ուուս ս.-դ. դեմոկրատները կողմնակից են ցենտրալիզմին, բայց միևնույն ժամանակ... համակրում են լինական ցենտրալիզմին: Ի հարկէ, պարզ է որ այստեղ նոյնքան հեկան ցենտրալիզմին: Ի հարկէ, պարզ է որ այստեղ նոյնքան հեկան ցենտրալիզմին կայ, որքան, օրինակ՝ անտեսական զարգացման տևողականութիւն կայ, որքան, արինակ՝ անտեսական զարգացման անցնում էր այս վերջին առաջարկը:

1) Այդ երկու կուսակցութիւններն էլ պահանջում էին Լեհաստանի աւտոնոմիան միայն այն տարրերութեամբ, որ ս.-դ.-ները առաջարկում էին այդ պահանջը իրականացնել տալ Խուսաստանի սահմանանիր ժողովում, իսկ Պ. Պ. Ս.-ը վստահութեան քէ չէր տալիս այն սահմանադիր ժողովին և իսկ Պ. Պ. Ս.-ը վստահութեան քէ չէր տալիս այդպիսի ժողովներ. մէկը Պետերպահանջում միւսը Վարչապայում: Բանորական բացմարդ միանդաներում միշտ անցնում էր այս վերջին առաջարկը:

2) Սա առաջին համարում ասում է որ ազգային հարցը Ռուսաստանում պէտք է լուծել այն պէս, ինչպէս լուծեած է զէլյցարիայում և Մ.-նախներում: Բայց ինչպէս է լուծեած այնտեղ:

«Եթաքերմամբ սրանց ունեցած ընդհանուր տեսակէտի և հողերի «գրաւման» ու «մունիցիպալիզացիայի» պահանջի մէջ...

Այսուեղ մի՛ անյարմար ցանկութիւն է առաջ գալիս մարդու մէջ՝ համեմատելու ո.-գ.-ի այսպիսի վիրքը դէպի ժողովրդի ազգային պահանջները ուսւ բիւրօկրատիայի վերաբերմունքի հետ դէպի ժողովրդական ընդհանուր քաղաքական պահանջները...

Աւ որքան որ ժողովուրդը գուրս է գալիս իւր պահանջներով և քանի որ ուստ ս.-դ.-ն ցանկանում ե դառնում է միջազգային կուսակցութիւն, այնքան սպիտած է լինում ընդունել ապակենտրօնացում: Ստացւում է մի տիսուր դրութիւն. կուսակցութիւնը ընդունում է իւր ծրագրի մէջ պահանջներ առանց պատճառաբանութիւնների, առանց նախադրեալների, նա չի ուզում հրաժարւել իւր սկզբնական տեսակէտից ադր հարցի վերաբերմամբ (ինչպէս

1) „Вѣстникъ Жизни“ № 2. Україна національна пратія

2) Հնդկածումն իրենն է:

և... ազբարային հարցի շուրջը), գեռ աւելի, մի ծայրագաւառի վերաբերմամբ աւտօնոմիան ընդունելուց յետոյ, եթիւ խօսքը բացւում միւսի մասին, որդեռուած կերպով հակառակում է և... բերում է նոյն պատճառաբանութիւնները, որոնք պաշտպանում էր առաջինի հաստինացման շրջանում: Եւ այդպիսու, անվերջ... Պարզ է որ այդպիսի գիրքը մի մեծ կուսակցութեան կողմից գէպի նոյնքան մեծ այժմէութիւն ունեցող հարցը չի կարող գիմանալ նոյն խոկ ամենաթող քննադատութեան:

Անցնենք միւս կուսակցութիւններին։ Մենք կանգ չենք առար
այստեղ ուսւս սօցիալիստ-ժղողափոխական կուսակցութեան տեսակէ-
տի վրայ ապակենարոնացման և Քէզէրալիզմի մասին, այն հասա-
րակ պատճառով որ ես ինքս կանգնած եմ այդ տեսակէտի վրայ,
որը բգլառում է սօցիալիզմի և բաղաքական ազատութեան գաղտփա-
րի անաղարա ըմբռնողութիւնից¹⁾:

Սօցիալստ-յեղափոխականների կուսակցութիւնը ընդունելով
իւր ծրագրի մէջ ֆէգէրալիզմը, ուղիղ է իւնենց զրականութեան
մէջ այդ հարցի վրայ երկար, աւելի երկար կանգ չեն առնում,
բայց դա գլխաւորապէս այն պատճուռով, որ նրանք, համաձայնու-
թեան գալու շատ ծայրագաւառների սօցիալիստական կուսակցու-
թիւնների հետ, ոչ այնտեղ են շատ տատանում և ոչ էլ պայքա-
նում այդ կուսակցութիւնների զէմ. իսկ սրանք արդէն բաւականա-
չափ ծանրանում են ապակինարօնացման վրայ. և պարզ է ապա-
գայ Ուռասատանի պարլամենտում այդ հարցը յարուցմանելիս, սօցի-
ալիստ-յեղափոխականները ինչ դիրք են բռնելու:

Բոլոր ծայրագուառների իմ գիտցած սօցիալիստական կուսակցութիւնները, բացի սօց-դեմոկրատական հայ կազմակերպութիւնից, պահանջում են Ռուսաստանի համար ապակենորոն դեմոկրատիա:

Այս վերջինի գիրքը գէպի ազգային հարցը ընդհանրապէս և ազգերի քաղաքական այս պահանջը մասնաւորապէս մել այլանդակ արականութեան նոյնքան այլանդակ արդիւնք կարող է համարւել: Մենք գտնուում ենք մի չափաբանց սոգայնական միջնորդում: Ուռաստանի մեծ յեղափոխութիւնը չնորհիւ Կովկասեան չնաշխարհիկ վանդէյի և հակացեղափոխութեան, չկարողացաւ մեծ չափով տարածել մասսաների մէջ միջազգային վիճ գտափաները, և նրանց

1) Սօց.յեղ. կուսակց. նախորդները նոյնպէս կանգնած են եղել քաղաքական ծայրային ապահովանական սկզբունքի վրայ, ընդունելով միևնույն ժամանակ՝ զայնակացական համայնքների ընթացակարգութիւնը։ Օրինակ՝ զերեւովուների մի որոշ քրաքացիութեան համար բաւուրների համար միավորական ժերմակի մէջ Տ-ը ասում է. „կազմի համայնքների ազատ ժողովադաշտական ֆերերացիա, հիմնած քաղաքական կատարեալ հաւասարութեան վրայ, կատարեալ ներքին ինքնավարութեամբ։”

խոյր մասը մնաց նոյն ազգայնական խաւացած մթնոլորտի մէջ, հնթուկոյ ճայ լիբերայիզմի ազգացութեան: Այսպիսի իրականութեան մէջ ծնւած սօց..դեմօկրատական ազգային կազմակերպութիւնը իրեն չառ անյարմար դրութեան մէջ է զգացել: Նա վախենալով որ մի գու ցէ կատկածեն իրենց ազգայնականութեան մէջ (մտնաւանդ ազգային կազմակերպչական սիստեմի կողմնակից է), հասել է մի այլ ծայրաշերութեան: Հրաժարւել ամեն տեսակ ազգային պահանջներից, նրան ոչինչ չի հարկաւոր, միայն թէ հաւատան որ ինքը մաքուր, անտղարտ և կոյս մարքսիստական կազմակերպութիւն է: Նրա ծրագրի մէջ չկայ ոչ միայն աւտոնմիայի և ապակենարօնացման սկզբունքը, ույլ մինչև անգամ նա հրաժարւում է ընդհանրապէս սօց..դեմօկրատիսի համար ոչ մի արժէք չունեցող առգային ինքնորոշման իրաւունքից, և այս բանը պայման է դուռը իր և Ռուս. ս. դ. բանկուսկութեան միանալու հարցում... և դա այն ժամանակ, երբ գերմանացի Կոստցին անհրաժեշտ է գտնում Ռուսաստանի համար ֆեղնրացիան¹⁾: Բայց ինչ փոյթ, չէ որ անհրաժեշտ է ոչ մի կէտում չհաջարել «Գաշճակցութեան» հետ:

Մնացած բալոր կու սակցութիւնները ծայրագաւառներում ողաճանշում են ապակենարօնացում: Լեհական, լատիշական, վրացական, հայկական և այլն: Լեհական սօցիալիստական կուռակցութիւնը (Պ. Պ. Ս.) մինչև յեղափոխութեան բռնկւելը յուսահատած Ռուսաստանի բռնակալութեան մօտագայ տապալման մէջ, ծրագրել էր բաժանել Լեհաստանը Ռուսաստանից, բայց այժմ այդպիսի պահանջը ռանժամանակի՝ է գտնում և բաւականական պահագարին: Բայց անհրաժեշտ է ամսական համար ապակենարի պահանջով: Բայց անսարակոյս, գեռ այն տեսակեր, թէ Լեհաստանը Ռուսաստանի հետ չի կարող ապրել, դեռ ամբողջովին աեղի չի տեղել ֆեղերալիստական դաշտագրին:

Սեր իրականութեան մէջ Վրաց կոստոկցութիւնը և մեր «Գաշճակցութիւնը» ամեննեին չեն առ աջադրել անջատման ծրագրի: Դաշճակցութիւնը՝ իւր Կովկասեան գործունէկութեան նախագծի մէջ պահանջում է բացի դաշճակցական յարաբերութիւնից համայն Ռուսաստանի հետ, նաև ֆեղերատիւ յարաբերութիւն Անդրկովկասում, որը պէտք է բաժանաւած լինի գաւուների: Ծրագրի նախագիծը ասում է, որ գտաւունելի սահմանները գծելիս պէտք է աչքի առաջ ունենալ «ցեղազրական», կուլուրավական կազմը, ըստ կարեսյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար. (§ 11):

1) Եյս մարդի իսկապէս արջի ծառայութիւն մատուցեց ճայ սօց..դեմօկրատական իւր առաջարանով էր ֆեղերատեան ծրագրը, հայերէն թարգմանութեան համար, որը չետում է ֆեղերացիայի կարեռութիւնը Ռուսաստանում: Եյս դիջողութիւնը բոլորսին դուր չի գտիր ճայ սօցիալ-դեմօկրատաներին և նրանք յաճախ առում են, որ այդ թիւրիմացութիւնը առաջ է եկել դառնուց մայացմանը հանդեպ պատճառավ:

բայեղ ապակենարօն դեմօկրատիաի կողմնակից, նա առաջարկում է լայն ինքնավարութիւն նաև համայնքների իրենց վերաբերեալ հարցերում, և յետոյ գալիս են այն կէտերը, որ յատուկ են առ հասարակութիւններին:

Իմ ծրագրից դուրս է Գաշճակցութեան նախագծի այդ քաղաքական պահանջների վրայ երկար կանգ առնելը: Անդրկովկասը, անտարակոյս, մի բարդ իրականութիւն է ներկայացնում թէ ազգային կուլտուրական և թէ անտեսական տեսակետից. և այդ հանգամանքը պէտք է կուլտուրական անհրաժեշտութիւն գարձնի Անդրկովկասի ապակենարօնացումը Ռուսաստանից մեր մինչև այժմ բարագրից պատաճառաբանութիւններին համաձայն:

Ոյդ պատճառաբանութիւններից մէկի, ազգոյին անապանիկ մի մեղմացման, վերաբերմանը բերում է այն առարկութիւնը, որ Անդրկովկասեան պարլամենտում էլ կինեն տարրեր ազգութիւնները և որ ազգային յարաբերութիւնները աւելի վատ կինեն, քան թէ Ռուսաստանի ընդհանուր պարլամենտում: Բայց դա չսփազանցութիւն է: Ռուսաստանի պարլամենտում ազգերի տոկոսային յարաբերութիւնները բոլորովին այն չեն, ինչ որ Անդրկովկասում: Այս մեղմացման, վերաբերմանը բերում է այն առարկութիւնը, որ Անդրկովկասեան պարլամենտում էլ կինեն տարրեր ազգութիւնները աւելի վատ կինեն, քան թէ Ռուսաստանի ընդհանուր պարլամենտում: Բայց դա չսփազանցութիւն է: Ռուսաստանի պարլամենտում ազգերի տոկոսային յարաբերութիւնները բոլորովին այն չեն, որոնց կովկասում է այս մեղմացմանը որում առաջարկութիւնների մեջ 60-70 անդամ աւելի լինի հայ և վրացի ներկայացներից և 30-40 անդամ աւելի, քան թուրք ներկայացների թիւը, դա, կարծեմ, բոլորովին նորոն չի լինի Անդրկովկասի պատիւթիւնների յարաբերական թիւն:

Անդրկովկասի ազգութիւնների տոկոսային յարաբերութիւնները մինչև անգամ աւելի նպաստաւոր են, քան Շվեյցարիայինը, որտեղ գերմանացիները շատ աւելի ուժեղ են (Յ անգամ աւելի վրանսիացիներից և 15 անդամ իտալացիներից) և այնուամենայնիւ այնտեղ պէտքային հարցը համարեալ թէ գոյութիւն չունի:

Հետաքրքիր է իմանո՞՝ ո՞րպիսի թւական յարաբերութիւնը աւելի նպաստակայալմար կինէր ազգային խաղաղութեան անհանձիւթեացից: Գուցէ լու կինէր որ ոյժերի աւելի մեծ տարրերութիւն լինէր, որպէսզի ոյժերն առանց գիմազրութեան անէր իր ուզածը երկրի մէջ: Ոյդ տեսակէտից աւելի ցանկալի է ի հարկէ անսնել Ռուսաստանը կենտրոնացնած պետութիւն, որտեղ թոյլ ազգերը ոչ մի համարագրութիւն չեն ունենայ գիմազրութիւն ցոյց առլու կենարունիքի ասսիմիլատորական քաղաքական հարաբերութիւնների մեջ կարգացների գոյացնել քաղաքական հարաբերութիւնը այդ անսակետի վրայ չենք կանդնած, և եթէ չենք կարող ամբողջութիւնը կազմակերպութիւնը լինի ապակային արացը, գոյնէ կաշխատենք թոյլին գիմազրութիւն, պաշտպանւելու յարմարութիւն տալ և զրանով աւելի ուժեղին համեստացնելը: Ասում են որ Անդրկովկասի պարլամենտ պարլամենտում առաջարկութիւնների բուրժուազիաների շահերը բախւելով, կստանան՝ ազգային արտայայտութիւն: Եյն,

ով է ժխտում, որ բուրժուազիան իւր գասակարգային շահերը ընդհանուր ազգային շահերով է քողարկում. Քայց զրանից հետևուս է միայն այն, որ Ռուսաստանի կենտրոնական պարլամենտում ուռում ուժեղ բուրժուազիային անհամեմատ աւելի կյաջողութ այդպիսով ճնշել շրջապատող ազգութիւնը, քան Անդրկովկասի բուրժուազիային: Մենք բուրժուազիայի այդպիսի ոտնձգութիւններից ուր կարող ենք փախչել: Ռուսաստանի պարլամենտը: Քայց այն ժամանակ ազգայնական հոսանքը, շարժումը կատանայ զուտ ժողովրդական բնաւորութիւն, աւելի շուտ կիւրացնւի մեր աշխատաւոր մասսաների կողմից, քան որ դա կդառնայ ուղղակի ուստական հալածանք, որի բուրժուական բնոյթը շատ էլ հեշտ չի լինի պարզել և զուրս կորպել աշխատաւորներին բուրժուազիայի զրկից. ինչու մարդիկ այս ճշմարտութիւնը չափաք է ըմբռնեն:

Քայց կայ մի շատ աւելի կարեոր հանգամանք, որ թոյլ չի առիստ համեմատութեան դնել Ռուսաստանի կենտրոնական պարլամենտի և Անդրկովկասի դաշնակցական պարլամենտների մէջ՝ համեմատութիւն գնել այդ տեսակիտից: Դա այն է, որ Անդրկովկասը քաֆանւած լինելով հանանգների, աւելի խաղաղ դրութիւն է ըստեղծում: Եթէ մի նահանգում մի ոգգութիւն մեծամասնութիւն է կազմում, մի ուրիշ նահանգում նա կազմում է փոքրամասնութիւն, և դա ամեն մի նահանգի մհծամասնութեան ազգային ախորժակի վերայ բաւական ուժեղ սանձ է զնում թոյլի վերաբերմումը:

Անդրկովկասի ֆեղերացիայի հակառակորդները զգոյն կերպով անցնում են այդ փաստի մօտով, իր թէ չեն նկատում:

Ի գէպս. պ. Genosse-ն, որ «Աեանք»-ի № 10, 11 սփուել է իւր «Իրագործելի» է արդեօք Անդրկովկասի ֆէկտրացիան¹⁾ վերնազրով յօդւածը, երկար ժամանակ սպասելիս է եղել, որ Գաշնակցութիւնը, որ առաջարել է Անդրկովկասեան ֆեղերացիայի անհաժեխտիւնը, մանրամասն քարտէկ ներկայացնէր, որտեղ ցոյց արթւած լինէր Անդրկովկասի ապագայ բաժանումը՝ կանտոնների, որոշակի կերպով տարւած լինէին սահմանգծերը և այն: Զափազանց սուրեկտիւ բնաւորութիւն ունեցող պահանջ: Գաշնակցութիւնը, որ մտցրել է իւր քաղաքական սահմանների շաբը ֆէկտրացիայի ակրդրունքը, երբէք չի պնդել, որ այդ պունկաը նրա ծրագրի ծուծն է, նրա գործունէութեան conditio sine qua non-ը: Եւ ինչի՞ն նա պէտք այդքան գրադի այդ հարցով, քանի որ կարել է բաւականանալ այն ընդհանուր գծերով, որ նա մտցրել է իր ծրագրի մէջ: Պարոնը

1) Խեկապէս այդ վերնազրի ընթացքում, յօդւածի բավակութիւնը, որովհետ նրա երեց-չորրորդ մասը նիրւած է Գաշնակցութեան կենզանի յիշատուին և ոչ թէ Անդրկովկասի ֆեղերացիային: Այս հարցին վերաբերող դատողութիւննը միայն, այնպէս ասած, համեմում են ամբողջ յօդւածը բնող պեղճախօսութիւնները Դաշնակցութեան և գաշնակցականների մասին

ուզում է զիւտ արած լինել, առելով, որ գաշնակցականներին չի յաջողութ այնպէս բաժանել Անդրկովկասը գաւառների, որ ամեն գաւառում մի որս ազգութիւն բնակւելիս լինի և ապրում յայտնում է որ «այդ կանտոնների մէջ էլ թագւած է նոյն շունը, ինչ և Անդրկովկասի կենտրոնական օրէնսդրի մարմնի մէջ». այսինքն ուզում է առել, որ այդ կանտոններն էլ կեներկայացնեն ազգութիւնների խառնուրութ: Քայց մի պնդեց, թէ կանտոնները միանով մասսայութիւն բնակեցրած կիխեն: Այդ սուրաբաժանումները մինք անհրաժեշտ գանձեած առաջարկան սկզբունքների և այն ախյատութեան տեսակատից, որ կարելի է ստեղծել այնպիսի կանտոնները, ուր ահագին տոկուր մի ազգութիւնից կիխին (օրինակ՝ 90%, 80%, 65% զրանք փառել են և չեն պահանջում նոր «քարտէզներ»): Ենք կադրին նոյնպիսի կանտոն առաջինի փոքրամասնութիւն կազմող ազգութիւններց: Ո՞վ չգիտէ, որ Երեանեան նահանգի մեծ մասը, Թիֆլիզի նահանգից՝ Սխակբալաքի, Ախալցխայի, Բորչալուի գառների մեծ մասը, Գանձմակի, Ղարաբաղի լինաշղթայի Երեանի սահմանին յինող մասերը ներկայացնում են մի շարք գաւառները, որտեղ հայ ազգարնակութիւնը 90, 80, 65%-ն է կազմում¹⁾:

Նոյնպիսի պայմանների մէջ են թուրքերը համարեա ամբաղջ գանձակի նահանգում, նոյնը վրացիները Թիֆլիզի նահանգում: Իսկ Բագւի, Քութայիսի նահանգները աւելի կոմպակտ մասսայ են ներկայացնում: Եւ այդ թւական յարաբերութիւնները աւելի վատ չեն նվեցյարիայի նոյն յարաբերութիւններից, ուր մնաց որ սօց-գեմօկրատիայի պհանջած Աւատրիական աւտոնոմ գաւառների ազգարնական յարաբերութիւններից:

Կրկնում եմ՝ ֆեղերացիայով Գաշնակցութիւնն աշխատում է լուծել ի միջի այլոց և ազգային հարցը այն չափով ինչ չափով ու դա աջողւելի և ժամանակակից ֆեղերացիայի մէջ, ուրիշ ոչինչ:

Մեր բարած միւս բոյր պատճառաբանութիւնները՝ ֆէկտրալիզմի օգտին անհրաժեշտ են գարձնում Խուսաստանի և Անդրկովկասի ֆէկտրացիանները:

Քայց մեր ասում են որ վրացիները չեն ցանկանում և թուրքերն էլ չաւաով կուգեն թիւրքական մասերի աւտօնոմիա, քան Անդրկովկասի ֆէկտրացիան: Եւ մարդիկ ենթագրում են, որ մներ, ունենալով որոշ սկզբունքներին վիրաբերունք դէսի ֆէկտրալիզմի, կողմնակից լինելով առաջարակ ծալքայել առակենալունցման և քաղաքական ազատութեան, մեր ծրագիրը մշակելիս աչքի առաջ պէտք է ունենանք թէ ինչպէս են վերաբերում դէսի այդ հարցը վրացիները կամ րիւմբերը (ինչու են չեն չեն այդ պնդութիւնները,

1) Եթէ վիճակագրութիւնը ձեռքիւ առաջ լինէր և եթէ դա իմ աշխատութեան նպատակը լինէր, ես աւելի երկար կանգ կառնէի այդ հայի վրայ:

քանի որ օր ըստ օրէ ժողովուրդն սկսում է մտածել քաղաքականապէս ոչ իբրև որոշ ազգի, այլ որոշ կուսակցութեան անդամ): Մենք չենք կարսու առաջինը՝ հաւատալ որ այդ ժողովուրդը իւր ամբողջութեամբ է առաջարկում որոշ ծրագիր (ինչպէս ամբողջութեամբ չի առաջարկում հայ ժողովուրդը). երկրորդը՝ եթէ նոյն իսկ այդպէս լինի, մենք չենք կարող զիջել մեր սկզբունքային թէզերը, և եթէ հաւատացած ենք այդ սկզբունքի կենսունամկութեան մէջ, պէտք է հաւատանք նոյնուիս, որ այդ ազգերի մէջ էլ առաջ կդան մեր տեսակէտի կողմնակիցներ և որ ապագան նրանց է պատկանում: Մենք չենք կարող թուրք և վրացի առատականութեան քմանաճռից, որոշ գասակարգի կամ ազգայնական շահից կախւած ահենել ապագան Ռուսասանի քաղաքական կազմի այնինչ կամ այնինչ ձեր:

Բայց թողնենք մի լուսէ սկզբունքային վերաբերմունքը դէպի ֆէկերալիքը և կանդնենք քաղաքական կեսանքի կոնկրետ պայմանների տեսակէտի վրայ: Կարելի է արդեօք իրականեցնալ մի այնպիսի գրութիւն, երբ ամբողջ Կովկասը կենտրօնացման կարգերով կապւած լինի Ռուսաստանի հետ և Կովկասի սրտում մի քանի գաւառներ, երեք նահանգներից վերցրած, կապեն Ռուսաստանի հետ ֆէկերատիւ կապեր և ստեղծեն Վրաստանի աւտօնումիան: Արդեօք պետական կեանքի տեսակէտից աննօրմալ չէր լինի այցպիսի մի զրութիւն, երբ աւտօնում գաւառը ամեն կողմէց շրջատաւած է ցենտրալիզացիի ծովով, ինչպէս մի փոքրիկ կղզի և նա կկարողանայ իւր աւտօնում զոյսութիւնը պահպանել:

Բայց գուցէ տաեն թէ կարող է սպասանել, որ Կովկասի միւս մասերն էլ ապակինատրօնանան Ռուսաստանի վերաբերմամբ, բայց այնուամենայնիւ չկազմին մի նոր միութիւն՝ Անդրկովկասի ֆէկերացիան: Այս, դէպերի պատմական հետեղութեամբ այդպիսի բան կարող է սպասանել, օրինակ՝ կարող է ոյժերի յարաբերութիւնը սկզբում տաց Վրաստանի աւտօնումիա, յետոյ հայկական գաւառների, յետոյ թիւրքական, վերջապէս Կովկասի այլ, օրինակ՝ հիւսիսային մասերը նոյնուիս անհրաժեշտութիւն զգտն ապակինատրօնանալու Պետերբուրգի վերաբերմամբ: Այդպիսով կարելի է ամբողջ Ռուսաստանը երեսակայել ապակինատրօնացած մի նանբաւետութիւն կամ զանազան տարրեր միծ ու փոքր շրջանների քաղաքական ն-պետական գայնակցութիւն: Բնականարար մի այցպիսի հակայական պետութեան մէջ կգտնեն և կան չատ շրջաններ, որ տարրերւերլի պետութեան միւս մասերից ունեն կուլտուրական, պատմական և արևատեսական հատի վրայ շիման կէտեր: Այդպէս կարող է լինել Լեռնաստանը և Լիտվան, այդպէս կինեն Մարտօնիայի նահանգները, վերջապէս նոյնը առաջ կիայ մեզանում—Կովկասում: Այնպէս որ մենք չենք կարող նախագուշակել, արդեօք մեղ կաջողւի միանդամից, յեղափօխական շրջաննում տեսնել ամբողջ մեր քաղաքական ծրագիրը իրականացած: Նա կարող է որոշ անբարեյածող հանգա-

մանքների չնորհիւ աղճատւել, յետաձգւել, բայց այդ պրօրեմատիկ տպագան այնուամենայնիւ չպէտք է ապդեցութիւն ունենայ մեզ վրայ: „Պատում“ ծրագիր ես չեմ հասկանում միայն այն, ինչ այժմ անպայման կարսու կինենք իրականեցնել և իրականացնել բացառիկ կերպով մեր ուղանդի պէս, ես նւազագոյն ծրագիր տանելով հաւականում եմ այն բոլոր քաղաքական և սոցիալական բեֆորմները, որ մենք կարող ենք խլել բուրժուատան պետութիւնից, մինչև սոցիալական կապիտալիզմը:

Վերի բերած մեր ենթադրութիւնը Ռուսաստանի ապագայի վերաբերմամբ, կարող է և հակառակ բավանդակութիւն և բնթացք ստանաւ: Կարող է պառանձի, որ մի մեծ շրջան յաջողի նւաճել կենարօնից աւտօնումիա, կամ ֆէկերատիւ յարաբերութիւն, բայց չունենալով ներսը այնպիսի մի պայմանները, որոնք հոգ տալին կենարօնացած գտառապական քաղաքական կեանքի, տուած բերի ապակինարօնացման երկրորդ աստիճանը:

Բրիտանական քաղաքական կեանքը տալիս է ապակենարօնացման այդ երկու տեսակ էւօլիցիայի օրինակները իւր գաղութային կեանքում:

Հաւանական է նաև, որ Անդրկովկասի զաշնակցութեան մէջ տուած զան բնական, ոչ քաղաքական խմբակցութիւնները, մի քանի կանուններ աւելի միմեանց նման որոշ պայմաններով, օրինակ՝ ազգութեանը, կամ զուտ Երկրաբանական, կամ տնտեսական պայմաններով աւելի մերու յարաբերութեան մէջ են լինում միմեանց հետ քան մնացած կանուններում նոյն վեցարքական կանունների մէջ աւելի տեղական, պետական սիստեմի վերածւած մերու յարաբերութիւններ գոյութիւն ունեն (վաճառականական պայմանագիր և պարտականութիւն և այլ յարաբերութիւններ), նոյնը տեղի ունի և «անտառապին» կոչւած կանուններում: Այդպիսի խմբակցութիւններ կազմուում է նաև մի խոչսր ձեռնարկութեան համար, որ ծանր կարող է լինել մէկ կանունի ոյժերի համար, օրինակ՝ համարարան ունենալ, հոգալ ծախսերը, և այլն:

Կովկասում կամ Անդրկովկասուն զաշնակցութիւնը նոյնպէս ունի համապատասխան պայմաններ խմբակցութիւնների համար մանաւանդ շնորհիւ ապագայում զարգանալիք նոխ հանգացին տնտեսութեան և ազգային կուլտուրական շահերի:

Մենք երկար կանգ չսուանք Կովկասուն իրականութեան վրայ և զա չեր էլ մոնում մեր տուումնասիրութեան անմիջական համապատակի մէջ, որ կայսանում էր ֆէկերալիզմի քաղաքական-պետական մաս սուրու կարող ուրասղձման և նրա ու դեմօկրատիայի մէջ եղած առնչութեան մէջ:

Անդրկովկասի իրականութիւնը և Հ. Յ. Գաշնակցութեան ծրագրի աւելի մանրամաս ուսումնասիրութիւնը արժանի են կազմուու աշխատութիւնների անմիջական սոցականներ: Գայցէ մենք

դարձեալ վերագառնանք ֆէղէրտցիայի հարցին, զուտ գործնական տեսակէտից, Կոմիկական լրականութեան, նրա ցեղական և տնտեսական պայմանների ուսումնասիրութեանը նողաստած լինելու համար, քանի որ ֆէղէրտցիզմի և ցենտրալիզմի նշանակութիւնը, նըրանց գեմօկրատական արժէքը ինձ համար արդէն պարզած է; Մեղնամար պարզ է, թէ ինչ արժէք ունեն զարտնտիւնները, որ կենտրոնացած «գեմօկրատական» պետական կարգերը կարող են տալ մանք աղջակին կուլտուրաներին բանի ասուի միլիացիայի դէմ, մենք տեսանք, թէ արայի իրականութիւն հաստատի կենտրոնացման դէպքում՝ բնդիւննուր պարտամենտում մաքուր զաստիարգային կուսի համար: Մենք ըստ արժանոյն գնահատեցինք այն գրութիւնը, որ ստեղծում է ինքնափառութիւնների համար կենտրոնացման դէպքում, մենք ծանրացնաք ապակենաբօնացման վրայ, իբրև ամենալաւ, միջոցի մերձեցնելու պետական կեանիքը ժողովրդին և ներոյժքագական կեանքի կոչերու նրա այլ և այլ պատճառուերից իներա գրութեան մէջ գտնուող առքերը: Վերջապէս մենք թիենեցինք մեր ուշադրութիւնը տնտեսական և սօցիալական մօմենտների վրայ և համագւեցինք, որ տնտեսական զարգացումը, որ քաղաքական կեանքը որոշող առաջնակարգ մօմենտներից մենք են, ոչ միայն չի հակառակ պետութեան ապահենաբօնացման ներկայ զարգացում և ինտենսիվ յարաքերութիւնների մէջ, այլ և ունի այդ սիստեմին տառանձնայատկութիւններ: Ապակենաբօնացման զանազան ձեհերի ուսումնասիրութիւնից յետոյ այս բոլոր փաստերը բերում են մեզ այն եղանակութեան, որ աղյուսիենտուսացում առանց վեմօկրացմի կարու և զօյուրին ունենալ, եւ շատ երկրուում ունի, բայց կուսարեալ գեմօկրատիզմ առանց լայն բաղադական ապակենտուսացման, զայուրիւն ունենալ չի կարող:



Հ Ա Յ Յ Ե Ն Տ Ե Ս Ե Լ

1. Բայր.—Հարուսաններ և աղքատաներ, Ատպագրութիւն 15 կոտ.
 2. Պեշիանով.—Հաց, լոյս և ազատութիւն 12 »
 3. Ֆեղօրօփի.—Ինչպէս են ժողովում և ծախս, ժող, փողերը 5 »
 4. Կարմօլիկ.—Նոր լեռան քարոզը 2 »
 5. Չերնօվ.—Գիւղացին և բանուորը 15 »
 6. Գերներոտքեր.—Ազգային հարցը և ոսցիալ-դեմօկրատ. 5 »
 7. Գրամագին.—Գիւղացիներին 5 »
 8. Ե. Թոփշեան.—Արհեստակցական միութիւններ. 15 »
 9. Նօվօտօրժակի.—Ինչ է իրաւական պետութիւն 15 »
 10. Ե. Կարմանով.—Հողային հարցը Նոր Զելանդիայում 2 »
 11. Ժան Ժօրժ.—Բուրժ. սեփ. և նրա ապագայ զբաւումը 5 »
 12. Ս. Արեգեան.—Դեմօկրատիական ընտրութիւններ 12 »
 13. Կարլ Կառասովի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում 3 »
 14. Ա. Ահարոննան.—(Ղարիբ)՝ Ազատութեան ճանապարհին 80 »
 15. Ֆ. Լասար.—Աշճմանապրութեան էլութեան մասին 5 »
 16. Ա. Ե.—Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը 12 »
 17. Դամբիլ Գալուրդի.—Ինչ է ժողովրդապետութիւնը 2 »
 18. Ս. Զարաեան.—Վիճակ, անդ. գիւղական աղքար. 25 »
 19. Ալիննա Գինան.—Ժողովրդ. օրէնսդր. դաշ. Զւիցերիայում 20 »
 20. Գիլցատին.—Ով ինչով է առլում 7 »
 21. —Մի զրոյց հողի մասին 5 »
 22. Լ. Շիշկո.—Ագրարային ծրագրի հարցը 7 »
 23. Ա. Երկուակիվ.—Կօսպերացիա 15 »
 24. Շատապեցէք օգտեկը ձեր իրաւունքներից. 1 »
 25. Լ. Պետրով.—Երկու ծրագրի 20 »
 26. Ս. Վշասեկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արհմուտ. 12 »
 27. Անկիլի.—Գիւղացիական հարցը Ֆրանսիայում. 7 »
 28. Միքայէլ Յովհաննիստան.—Դաշնակց. և նրա հակառակորդ. 50 »
 29. Փ. Գեղ և պ. Լաֆարդ.—Տնտես. զարգ. և Սօցիալիզմ. 5 »
 30. Նօվօտօրժակի.—Ազգային հարց. Աւտոնոմիա և ֆեդերացիա? »
 31. Խորամանկ կարգեր. 10 »
 32. Միքայէլ Յովհաննիստան.—Գորգեան հանգոյցը 20 »
 33. Հրահանգներ գաւառների համար 1 »
 34. Չերնօվ.—Դաստիարակային կույի թէօրիայի շուրջը 10 »
 35. Լ. Շիշկո.—Եւազագոյն ծրագիրը 12 »
 36. Ս. Ենկրտոսօվ.—Ինչ կարգեր են հարկաւոր ժողավրդին 10 »
 37. Ս. Շահամեթ.—Ֆէդէրացիզմ և դեմօկրատիզմ 30 »
 38. Արամայիս.—Վնասակարը. 4 »
 39. Արամայիս.—Մի քանի գլուխ հայ-թրքակ. ընդհար. 25 »
- Պատրաստում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր

Դիմել՝ Թիվիլիս «Փարոս», Երևանեան հրապարակ:

» Երևան Ս. Օհանջանեանին:

» Բագու և Սամբուղնիկու:

ՀՀ Ազգային գրադարան



NL0220389

35.079